

9968

M. [unclear] [unclear]
[unclear]

294
4-45

04 NOV 2009


ՊՈՒՏՏԱՅԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ

294
4-45

65

ՊՈՒՏՏԱՅԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ

ԸՍՏ ՀԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ



Պ Ա Տ Մ Ո Ւ Ա Ն

ՓՈԼ ԲԷՐԵՍԻ ԿՈՂՄԷ



Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ե Ց

Ս. Շ. ԳԱԼԻՕՆՃԵԱՆ



Կ. ՊՈԼԻՍ


1911

Printed in Turkey

ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ
Օ. ԱՐՁՈՒՄԱՆ
№ 79

9753

Ն Ո Ւ Է Ր
ԱԶՆԻԻ ԲԱՐԵԿԱՄԻՍ
ՎԱՀԱՆ ՀԻՒՄՆԵԱՆԻ



1009
39

ՊՈՒՏՏԱՅԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԵԳԻՆԱԿԻՆ ՆԱԽԱԲԱՆԸ

Ս. Մ Ա. Ս

- Գլ. Ա. Աւետիս
- » Բ. Սամսարա Էւ Նիրվանա
- » Գ. Ճամարտուրիւնը փրկիչ

Բ. Մ Ա. Ս

ԻՇԽԱՆ ՍԻՏՀԱՐԹՍ ՊՈՒՏՏԱ Կ'ԸԼԼՈՅ

- Գլ. Դ. Պուսսայի ճնունդը
- » Ե. Կեանքի կապերը
- » Զ. Եւեֆ վայերը
- » Է. Պուսսայի աշխարհե հրաժարումը
- » Ը. Պուսսայի փնտռումը
- » Թ. Պուսսայի փո ձուխը
- » Ժ. Լուսաւորութիւնը

Գ. Մ Ա. Ս

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԹԱԿՍՈՐՈՒԹԵԱՆ ՀԻՄՆՈՒԻԼԸ

- Գլ. ԺԱ. Ուփաֆա
- » ԺԲ. Պեհարիսի ֆարոգը

- Գլ. ԺԳ. Բանակրինաի փարոզը
- » ԺԴ. Ժողովուրդը կը դժգոհի
- » ԺԵ. Անաքափիցիսիա
- » ԺԶ. Սիրոյ փարոզը
- » ԺԷ. Պուսսայի հայրը

Գ . Մ Ա Ս

ՊՈՒՏՏԱՅԻ ԿՐՕՆՔԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԻԼԸ

- Գլ. ԺԸ. Աշակեցներու վարմունցը հանդէպ կիներու
- » ԺԹ. Երկպառակութիւնը
- » Ի. Հրաւճ գործելը արգիլուած
- » ԻԱ. Տառապանքի անեացումը
- » ԻԲ. Տասը պատուիրանները

Ե . Մ Ա Ս

ՊՈՒՏՏԱՅ ՈՒՍՈՒՅԻԶԸ

- Գլ. ԻԳ. Երկու հարցումներ անեացումի եւ հոգիի մասին
- » ԻԴ. Մէկ եուրփուն, մէկ օրէնք, մէկ նպատակ
- » ԻԵ. Պուսսայ կը պատասխանէ հրեշտակին
- » ԻԶ. Գրախոսը կամ երկիցնը
- » ԻԷ. Ուսուցիչը անձանօք

Զ . Մ Ա Ս

ԱՌԱՎՆԵՐ ԵՒ ՊՈՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

- Գլ. ԻԸ. Առակներ
- » ԻԹ. Կորսուած որդին
- » Լ. Անմիտ ձուկը

- Գլ. ԼԱ. Զորս սեռակ արժանիքներ
- » ԼԲ. Շուայլ կենցաղը
- » ԼԳ. Պուսսայ իբր սերմնացան
- » ԼԴ. Հանպունցասայի հարսանիքը

Է . Մ Ա Ս

Վ Ե Ր Զ Ի Ն Օ Ր Ե Ր Ը

- Գլ. ԼԵ. Պուսսայ իր մահը կը յայտարարէ
- » ԼԶ. Գոյուրեան նպատակը

Վ Ե Ր Զ Ա Ք Ա Ն

ԻՆՉ Է ՊՈՒՏՏԱՅԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

- I. Հակիրճ տեսութիւն մը գլխաւոր վարդապետութիւններու մասին
- II. Բացատրութիւններ



ՀԵՂԻՆԱԿԻՆ ՆԱԽԱԲԱՆԸ

Այս գրքոյքը նախաբանի պէտք չունի անոր համար որ քիչ շատ ծանօթ են Պուտայականութեան սուրբ գիրքերը, որոնք մեզի մատչելի դարձած են ուսանողներու կողմէ: Անոնք որ ծանօթ չեն այդ սուրբ գիրքերուն, պէտք է գիտնան թէ այս գիրքին պարունակութիւնը Պուտայական հին օրինագիրքերէն քաղուած է: Շատ մը հատուածներ, ամենէն կարեւորները, արդարև տառապէս օրինակուած են սկզբնագրին թարգմանութենէն: Ոմանց հետ ազատ վարուած ենք, զանոնք արդի սերունդին հասկնալի ընելու համար: Ոմանք վերստին կարգաւորուած են, ուրիշներ համաւճարուած:


Պուտայականութիւնը, Բրիտանիէութեան պէս շատ մը ազանդներու բաժնուած է: Այս գիրքը, սակայն, այն ազանդներուն և ոչ մէկին չի հետեւիր, այլ կը գրաւէ գաղափարական գիրք մը՝ որուն վրայ իբր հաստատուն հիմ կրնան կենալ բոլոր Պուտայականները: Պէտք է ըսենք թէ այս գիրքը Պուտայականութեան կրօնագիրքերէն, աւանդութիւններէն քաղուած հատուածներու հաւաքածոյ մըն է: Այս հաւաքածոն Աւետարանի մը կերպարանին վերածելու համար հաւաքողը հետեւած է այն մէթոդին՝ որուն կը կարծէ թէ հետեւած է Չորրորդ Աւետարանի հեղինակը՝ Բրիտոսի կեանքին և խօսքերուն արձանագրութիւնը գրի առնելու պահուն: Հեղինակը ջանացած է Պուտայի կեանքը ներկայացնել իրեն կրօնա-խմբատարական լոյսին մէջ: Հեղինակը ջանացած է դուրս թողուլ շատ մը յայտնութեանական զարդարանքներ, մասնաւորապէս սնոնք՝ որոնցմով ձփն է արեւելեան աւանդութիւնը. այսու հանդերձ բոլորովին դուրս չէ ձգած հրաշալին այդ արձանագրութիւններուն մէջէն, երբ անոնց յիշատակութիւնը կարեւոր համարած է:

Որպէսզի Պուտայականութեան հիմնական գաղափարը սխալ չի հասկցուի, ընթերցողը կ'ազդարարուի «անձ» (self) բառը առնել այն իմաստով ինչ իմաստով որ կը գործածէ զայն Պուտայ: Պուտայ անձին գոյութիւնը կ'ուրանայ այդ բառին իր ժամանակին մէջ ստացած իմաստը նկատելով, Պուտայ չ'ուրանար մարդուն իմացականութիւնը, մարդուն հոգեկան կազմը, մարդուն

անձնականութեան կարեւորութիւնը, մէկ խօսքով, մարդուն հոգին Այլ Պուտտայ կ'ուրանայ այն խորհրդաւոր ետա-էութիւնը (ego-entity), արմանը, ինչպէս սովոր են կոչել Պուտտայականները, տեսակ մը հոգի-մտած, որ իբր թէ մարդկային մարմինն և հոգեկան գործունէութեան ետե կամ ներքը կը կենայ իբր անջատ գոյութիւն մը, տեսակ մը thing-in-itself, և բնազանցական գործիչ մը: Պուտտայ կը ջանայ այս իմաստով ըմբռնուած անձը, եսը արմատախիլ ընել, որպէսզի ալ պտուղ չի տայ: Այսպէս Պուտտայի ներմտան գաղափարական վիճակ մըն է, որուն մէջ, մարդկային հոգին, ամէն անմաքրութենէ և մեղքէ մաքրուելէ ետք, ճշմարտութեան բնակարան մը կը դառնայ:

Պուտտայի վարդապետութիւնը բացասականութիւն չէ: Մարդկային հոգին քննախուզութիւնը որչափ որ կը մերժէ հոգի-գոյութեան մը հոգի-մտածի մը գոյութիւնը, բայց մարդու մը բուն էութիւնը կը կայանայ իր քարմնային մէջ և մարդու մը քարման անմատչելի կը մնայ մահուան և կը շարունակէ ապրել: Այսպէս ուրանալով ինչ որ մեր հոգին ըլլալ կը թուի, և որուն քայքայումին վախով կը սարսուսնք մահուան ժամանակ, Պուտտայ իրականապէս անմահութեան դուռը կը բանայ մարդկութեան առջև և հոս կը կայանայ Պուտտայի բարոյագիտութեանը, անոր կրօնքին մխիթարականութեանը և եռանդոտութեանը անկիւնաքարը: Ուէ մէկը որ չի կրնար տեսնել Պուտտայականութեան գրական կողմը, անկարող պիտի ըլլայ ըմբռնել թէ ինչպէս ան կրցեր է միլիօններու վրայ ազդել:

Ն Ա Խ Ա Բ Ա Ն



Ա. ԱԻԵՏԻՍ

1. Ուրախացէք ուրախ աւետիաներուն վրայ: Պուտտայ, մեր Տէրը, գտած է բոլոր չարիքի արմատը: Ան ցուցուցած է մեզի փրկութեան ճամբան:

2. Պուտտայ կը վտարէ մեր միտքին խարկանքները և կ'ազատէ մեզ մահուան արհաւիրքներէն:

3. Պուտտան, մեր Տէրը, սխալմանք կը բերէ յոգնածներուն և ցաւով ծանրարեւնուածներուն, ան խաղաղութիւն կը վերադարձնէ անոնց՝ որոնք կեանքի բեռին տակ ընկճուած են: Ան քաջութիւն կուտայ անոնց՝ որոնք անձնախտահութիւնը և յոյսը կը լքեն:

4. Անոնք որ կը տառապին կեանքի ճախորդութիւններէն, անոնք որ կը պայքարին և կը տոկան, անոնք որ ճշմարտութեան կեանքի մը կը ակնջան, թող ուրախանան ուրախութեան աւետիաներով:

5. Բազատան կայ վիրաւորին համար, և հայ կայ քաղցածին համար: Ծարաւին համար ջուր կայ, և անյոյսին համար յոյս: Միտքեան մէջ եղողներուն համար լոյս կայ և անսպառելի օրհնութիւններ արդարներուն, ուղեղներուն համար:

6. Բուժեցէք ձեր վէրքերը ու զուք վիրաւորներ և կերէք ձեր հացը ու քաղցածներ: Հանգչեցէք զուք որ խոնջած էք. և զուք որ ծարաւի էք, յազեցուցէք ձեր ծարաւը: Լոյսին նայեցէ՛ք, զուք որ մութի մէջ կը նստիք. ուրախացէք զուք որ լքուած էք:

Printed in Turkey

7. Վստահեցէք ճշմարտութեան, ով դուք որ ճշմարտութիւնը կը սիրէք, որովհետեւ արդարութեան արքայութիւնը հաստատուած է աշխարհիս վրայ: Ստուծեան միջոցով կը վստարուած է ճշմարտութեան լոյսովը: Մենք կը նանք տեսնել մեր ձամբան և կը նանք հաստատ և որոշ քայլեր առնել:

Բ. ՍՍՄՍՍՐԱ ԵՒ ՆԻՐՎԱՆՍ

1. Դիտէ շուրջը և խորհէ կեանքի մասին: Ամէն բան անցաւոր է և ոչինչ մնայուն: Ծնունդ և մահ կայ, աճում և ջնջում, միացում և անջատում կայ:

2. Աշխարհի մը փառքը ծաղիկի մը նման է. առաւօտուն գեղեցկօրէն կը փթթի իսկ կէսօրուան տաքին կը թառամի:

3. Ուր որ նայիս, խուժում մը և հրմշակում մը կայ. հաճոյքի եռանդագին հետապնդում մը, խօրական փախուստ մը ցաւէ և մահէ, գեղեցիկ ունայնութիւն մը, և այրող, սոչորող տենչերու բոցը: Աշխարհը լեցուն է փոփոխումներով և փոխակերպութիւններով: Ամէնը Սամարա է:

4. Աշխարհի վրայ մնայուն ոչինչ չկայ: Տիեզերական թո՛ռ ու բո՛նին մէջ չկայ հանգիստի վայր մ'ուր մեր նեղումը հոգիները կը նան խաղաղութիւն գտնել: Չկայ բան մը յաւիտենական, մշտատեւ:

5. Չկայ անձկութեան դաղըում: Այրող, սոչորող, տենջերը կարելի չէ՞ մարել: Ե՞րբ միտքը խաղաղ և կազմակերպ վիճակ մը պիտի ստանայ:

6. Պուտտայ, մեր Տէրը, վշտացած էր կեանքի չարիքներուն վրայ: Ան աշխարհիկ երջանկութեան ունայնութիւնը տեսաւ և փրկութիւն միտուեց միակ բանի

մը մէջ՝ դոր բնաւ չպիտի ջնջուի կամ թառամի, այլ պիտի մնայ յաւիտենան:

7. Դուք որ կը տեսնաք կեանքի համար, զիտցէք թէ անմահութիւնը ծածկուած է անցաւորութեան մէջ: Դուք որ կը տեսնաք այնպիսի երջանկութեան մը համար որ իր մէջ չի պարունակեր յուսահատութեան և վշտի սերմերը, մեծ Վարդապետին խրատներուն հետեւեցէք և արդարութեան կեանք մը վարեցէք: Դուք որ հարցատութեան կը բաղձաք, եկէք և ընդունեցէք զանձեր որոնք յաւիտենական են:

8. Ճշմարտութիւնը յաւիտենական է. ճշմարտութիւնը չզրկուի ոչ ծնունդ ոչ ալ մահ. ճշմարտութիւնը չունի ոչ սկիզբ ոչ վախճան: Ողջունեցէք ճշմարտութիւնը, ով մահկանացուներ: Թող ճշմարտութիւնը տիրանայ ձեր հոգիներուն:

9. Ճշմարտութիւնը միտքին անմահ մասն է: Ճշմարտութեան ստացումը հարստութիւն է, և ճշմարտութեան կեանք մը երջանկութիւն է:

10. Ճշմարտութիւնը հաստատեցէք ձեր միտքին մէջ, որովհետեւ ճշմարտութիւնը յաւիտենականին պատկերն է. ան կը պատկերէ անպիտոյսին. ան կը յայտնագործէ մշտնջենականը. ճշմարտութիւնը մահկանացուներու կ'ընէ անմահութեան չորհրդ:

11. Պուտտան ճշմարտութիւնն է. Թող Պուտտան բնակի ձեր սիրտերուն մէջ: Մարեցէք ձեր սիրտերուն մէջ ամէն տենչ որ կը հակառակի Պուտտայի, և ձեր հոգեկան բարեջրութեան վախճանին Պուտտայի պէս պիտի ըլլաք:

12. Ձեր հոգիին այն մասը որ Պուտտայի չի կրնար բարեջրուիլ պիտի կորսուի, որովհետեւ այդ մասը պարզ խաբկանք է և անիրական: Ան ձեր սխարմունք-

ներու անհաղթելին է . և և՛ ձեր թշուառութեան պատ-
ճառը :

13. Դուք կրնաք ձեր հոգիները անմահացրնել զա-
նոնք լեցնելով ճշմարտութիւնով : Հեռեւարար եղէք այն-
պիսի անօթներ որոնք յարմար ըլլան Տէրոջը խօսքերուն
աւերուեալն (աստուածներու կերակուր) ընդունելու հա-
մար : Մաքրագործեցէք ձեր անձը մեղքէ և սրբագոր-
ծեցէք ձեր կեանքերը : Ասկէ դատ ուրիշ ճամբայ չկայ
ճշմարտութիւնը ընդունելու համար :

14. Սորվեցէք զանազանել Անձը (self) և ճշմարտու-
թիւնը : Անձը պատճառն է անձնասիրութեան և մեղքի :
Ճշմարտութիւնը չի փարկի անձի . ճշմարտութիւնը տիե-
զերական է և արդարութեան , ուղղութեան կ'առաջ-
նորդէ :

15. Անձը , ինչ որ անձերնին սիրողներուն համար
իրենց էութիւնը ըլլալ կը թուի , չէ յաւիտենականը ,
մշտնջենականը , անկորնչելին : Մի փնտռէք անձը այլ
փնտռեցէք ճշմարտութիւնը :

16. Եթէ մեր հոգիները ազատագրենք մեր փոքր
անձէն , եթէ չարիք չկամինք ուրիշներու , եթէ ըլլանք
մաքուր բիւրեղ ազամանդի նման ճշմարտութեան լոյսը
անդրադարձնող , ինչ ճառագայթարձակ պատկեր մը պի-
տի երեւնայ մեր մէջ հայելացնելով իրերը իրենց եղածին
պէս , առանց տոչորող անչելութեան , առանց սխալեցնող
խարխուլքներու խեղաթիւրումին , առանց մեղսալից ան-
հանգստութեան յուզմունքներու :

17. Անոր ետը կը փնտռէ , պէտք է զանազանէ
սուտ , սխալ անձէն , ետը և ճշմարտ անձը : Իր ետը , և
իր սամբողջ ետագաշտութիւնը սուտ և սխալ ետեր են :
Անոնք անիրական խափանքներ են և կորստական կցոր-
դութիւններ : Միայն ան կրնայ Նիրվանան ստանալ որ

իր անձը ճշմարտութեան հետ կը միացնէ . և անոր Նիր-
վանայի վիճակին մէջ մտած է : Պուտտայութեան հա-
սած է . այնպիսին հասած է բարձրագոյն օրհնութեան ,
կրանութեան . ան անմահ է և յաւիտենական եղած է :

18. Բոլոր բազաղընալ բաները պիտի տարրալու-
ծուին կրկին . աշխարհները մասերու պիտի փշուրին և
մեր անհատականութիւնները պիտի ցրուին . բայց Պուտ-
տայի խօսքերը պիտի մնան յաւտիեան :

19. Անձին ջնջումը փրկութիւն է . անձին անկա-
ցումը պայմանն է լուսաւորութեան . անձին խափանումը ,
ջնջումը , անկացումը , Նիրվանան է : Երանելի է ան որ
դադրած է սպրիչ հաճոյքի համար և կը կենայ ճշմար-
տութեան մէջ : Ճշմարտապէս իր միաքի խաղաղութիւնը
և անդորրութիւնը կրանութիւնն է :

20. Պուտտային մօտ ապաստանինք , որովհետեւ ան
զտած է մշտնջենականը անցաւորին մէջ : Ապաստանինք
անոր մօտ որ կեանքի փոփոխականութիւններուն մէջ
անփոփոխելին է : Ապաստանինք այն ճշմարտութեան մէջ
որ հաստատուած է Պուտտայի լուսաւորութեան միջո-
ցով :

Գ. ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ՓՐԿԻԾ

1. Աշխարհի իրերը և բնակիչները փոփոխութեան
ենթակայ են . անոնք նախապէս գոյութիւն ունեցող
այնպէս բաներու արդիւնքներն են , բոլոր կենդանի արա-
բածները են ինչպէս ըրած են զիրենք իրենց անցեալ գոր-
ծերը , որովհետեւ պատճառի և արդիւնքի օրէնքը միա-
կերպ է և առանց բացառութեան :

2. Բայց փոխուող բաներու մէջ ճշմարտութիւնը պահուած կը մնայ, իրերը իրական կ'ընէ: Ծշմարտութիւնը մնայուն է փոփոխութեան մէջ:

3. Եւ ճշմարտութիւնը կը փախաքի երեւնալ. ճշմարտութիւնը կը տենչայ գիտակից ըլլալ. ճշմարտութիւնը կը դձայ գիտնալ ինքզինքը:

4. Ծշմարտութիւն կայ քարին մէջ որովհետեւ քարը հոս է, և ոչ մէկ զօրութիւն, ոչ Աստուած, ոչ մէկ սասանայ, չի կրնար ջնջել անոր գոյութիւնը: Բայց քարը գիտակցութիւն չունի:

5. Ծշմարտութիւն կայ կենդանիին մէջ. ան կը շարժի հոս հոն և կ'ըմբռնէ իր միջավայրը. ան կրնայ դանազանել և կը սորվի ընարել: Կենդանիին մէջ գիտակցութիւն կայ բայց տակաւին ճշմարտութեան գիտակցութիւնը չէ: Ան անձի գիտակցութիւնն է միայն:

6. Անձին գիտակցութիւնը կը միջազնէ միաքին աչքերը և կը ծածկէ ճշմարտութիւնը. ան սխալի արմատն է, ան ակնադրիւնն է խաբկանքի, ան ծիլն է մեղքի:

7. Անձը անձնասիրութիւն կը ծնի: Չկայ չարիք բայց միայն բոլոր այն չարիքները որոնք անձէն կը ծնին: Չկայ սխալ բայց միայն բոլոր այն սխալները որոնք անձէն կը ծնին:

8. Անձն է սկիզբը ամէն ատելութեան, անիրաւութեան, բամբասանքի, անաբարկեշտութեան, անհամեւտութեան, գողութեան, կողոպուտի, բռնակալութեան և արիւնայեղութեան: Անձը մարան է, փորձիչը, չարագործը, մնասի ստեղծիչը:

9. Անձը կը յափշտակուի հաճոյքներով: Անձը կը խոտտանայ կիւսի մը գրախորը: Անձը քօղն է Մայալին, վհուկին, բայց անձին հաճոյքները անիրական են. իր

զրախտական լարիւրինթոսը դժողքի ճամբան է և անոր թառամող գեղեցկութիւնը կը բոցավառէ տենչանքի կայծերը որոնք կրէք չեն կրնար դո՛ւնացուիլ:

10. Ո՞վ պիտի ազատէ մեզ անձի զօրութենէն: Ո՞վ պիտի փրկէ մեզ թշուառութենէ: Ո՞վ պիտի դարձնէ մեզ երանութեան կեանք մը:

11. Սամարայի աշխարհին մէջ թշուառութիւն կայ, շտա թշուառութիւն և ցաւ կայ: Բայց աշխարհի բոլոր թշուառութիւններէն աւելի մեծ է ճշմարտութեան օրհնութիւնը: Ծշմարտութիւնը խաղաղութիւն կուտայ տենչաբաղձ միտքին, ան կը յաղթանակէ սուտին. ան տենչանքի բոցերը կը մարէ և Նիրվանային կ'առաջնորդէ:

12. Երանի անոր որ Նիրվանայի խաղաղութիւնը դտած է: Այնպիսին հանգարտ, անդորր կ'ըլլայ կեանքի պայքարներուն և ճախորդութիւններուն մէջ: Այնպիսին վեր է բոլոր փոփոխութիւններէ, այնպիսին վեր կը բարձրանայ ծնունդէ և մահէ, այնպիսին չ'ազդուիր կեանքի չարիքներէն:

13. Երանի անոր որ ճշմարտութեան մարմնացումը եղած է, որովհետեւ այնպիսին կատարած է իր նպատակը և միացած է ճշմարտութեան հետ: Այնպիսին կը յաղթանակէ, թէպէտ վիրաւորուի սլ, այնպիսին փառաւոր և երջանիկ է, թէպէտ տառապի: Այնպիսին զօրաւոր է, թէպէտ կրնայ իր գործին ծանրութեան տակ ընկճիլ: Այնպիսին անմահ է թէպէտ մեռնի խակ: Անոր հոգիին էութիւնը անմահութիւն է:

14. Երանի անոր որ հասած է Պուտտայութեան նուիրական վիճակին, որովհետեւ այնպիսին յարմար է իր ընկիր աբարածներուն փրկութիւնը գործել: Ծշմարտութիւնը իր բնակարանը հաստատած է անոր մէջ: Կասարեայ իմաստութիւնը կը լուսաւորէ անոր միտքը, և

1202
39



արդարութիւնը կ'ողեւորէ իր բոլոր գործերուն նպատակը:

15. Ճշմարտութիւնը բարութեան համար գործող գործութիւն մըն է, անջնջելի և անպարտելի: Բռնեցէք ճշմարտութիւնը միտքերնուդ մէջ և տարածեցէք զայն մարդկութեան մէջ, որովհետեւ ճշմարտութիւնն է միայն փրկիչը մեղքի և թշուառութեան: Ճշմարտութիւնը Պուտտան է, և Պուտտան ճշմարտութիւնն է: Օրհնեալ ըլլայ Պուտտան:



ԻՇԽԱՆ ՍԻՏՅԱՐԹԱ ՊՈՒՏՏԱՅ Կ'ՐԼԼԱՅ

Գ. ՊՈՒՏՏԱՅԻ ԾՆՈՒՆԴԸ

1. Գալիլայալստի մէջ Սագիա թագաւոր մը կար, զորաւոր նպատակի տէր, և մեծարուած բոլոր մարդերէ, Իքշվաքուներու սերունդէն որոնք Կօթամակը կոչուին, և իր անունն էր Շուահօտանա կամ Մաքուր Բրինձ:

2. Իր կինը Մայա-Տէվի, ջբաշուշանի չափի գեղանի և միտքով՝ լուտասի չափի մաքուր: Ան աշխարհի վրայ կ'ապրէր իբր երկինքի թագուհին, անարատ և անվարակ ո և է տենջանքէ:

3. Թագաւորը, իր ամուսինը, կը յարգէր զայն իր սրբութեան մէջ, և ճշմարտութեան հողին իջաւ անոր վրայ:

4. Երբ ան տեսաւ թէ մայրութեան ժամը հասած էր, թագաւորէն խնդրեց զինքը իր ծնողքներուն տունը զրկել. և Շուահօտանա, անձկալից ըլլալով իր կնկան և զաւկին համար, իր կնկանը խնդիրքը կատարեց:

5. Մինչդեռ նա կ'անցնէր Լուժպինէ պարտէզէն, ժամը հասաւ. իր անկողինը մնդուսէ ծառի մը տակ ձրգուեցաւ և մանուկը ծնաւ պայծառ և կատարեալ, ինչպէս ծագող արեւը:

6. Աշխարհները լոյսով ողողուեցան: Կոյրերը իրենց տեսութիւնը ստացան Տէրոջը փառքին գալուստը տեսնել տենչալով. համրերը և խուլերը իրարու հետ կը խօսէին Պուտտայի ծնունդը աւետող, բարի նշաններու, աւետիաներու մասին: Ծուռները չլսկեցան, կազերը

քայեցին: Բոլոր բանտարկուածներուն չղթաները փշուռեցան և զժողքին կրակները մարեցան:

7. Հորիզոնին վրայ ամսեր չկուտակուեցան: Պզտոր գետերը մաքրուեցան, օդին մէջ երկնային երածշտութիւնը կը հնչէր և հրեշտակները ուրախութիւնով կ'ուրախանային: Անոնք կ'ուրախանային ոչ թէ անձնասիրական և մասնական ուրախութիւնով, այլ օրէնքին համար կ'ուրախանային, որովհետեւ ցաւի ուլկէանին մէջ մխրճուած աշխարհը այժմ կ'ազատէր այդ ցաւերէն:

8. Գաղաններու աղաղակները լռեցին, բոլոր չարակամ էակները սիրող սիրա ստացան. և խաղաղութիւնը տիրեց երկրի վրայ: Մարա, չարը, միայն վշտացաւ և չուրախացաւ:

9. Նակա թագաւորները ջերմազին փափաքելով իրենց յարգանքը մատուցանել գերազանց օրէնքին, ինչպէս որ մատուցած էին նախկին Պուտտաներու, այցելուեցան զայցին Պօտֆիսաթիվաին: Անոնք անոր առջեւ տարածեցին ազնիւ ծաղիկներ, սրտազին ուրախանալով իրենց կրօնական յարգանքը մատուցանելուն համար:

10. Մանուկին հայրը, արքան, այս նշաններուն նշանակութեան վրայ մտածելով մերթ խնթով կը լեցուէր մերթ կը վշտանար:

11. Մանուկին մայրը, թագուհին, զիտելով իր զաւակը և ան յուզումը զոր ան յառաջ բերած էր, իր երկիւղած կնոջ սիրտին մէջ կասկածի կսկիծներ զգաց:

12. Անոր անկողինին մօտ կեցած էր ծեր կին մը և կ'աղաչէր երկինքին որ օրհնէ նորածինը:

13. Այս միջոցին անտառին մէջ Աղիթանրիչի (տեսանող) մը կար որ ճգնաւորի մը կեանքը կ'ապրէր: Ան Պրահման մըն էր բարձր գասէն, համբաւաւոր ոչ թէ միայն իմաստութեան և ուսումնականութեան համար,

այլ նաեւ նշանները մեկնելու իր տաղանդին համար: Եւ թագաւորը հրաւիրեց զայն նորածին մանուկը տեսնելու:

14. Տեսնողը, տեսնելով նորածին իշխանը արտասուեց և հաւաչեց խորապէս: Եւ երբ թագաւորը Աղիթայի արտասուքը տեսաւ վստացաւ և հարցուց— «Ինչո՞ւ իմ զաւակի տեսքը քեզի վիշտ և ցաւ պատճառեց»:

15. Բայց Աղիթայի սիրտը զուարթացաւ, և զիտնալով որ թագաւորին միտքը պիտի չիփթի, ըսաւ անոր.—

16. «Թագաւորը, լիալուանի նման, մեծ ուրախութիւն պիտի զգայ, որովհետեւ ան ունեցած է զարմանալի ազնիւ զաւակ մը:

17. «Ես չեմ պաշտեր Պրահման, այլ կը պաշտեմ այս մանուկը. և տաճարներու աստուածները իրենց պատուաւոր տեղերէն պիտի իջնեն զայն պաշտելու համար:

18. «Վտարէ ամէն անձկութիւն և կասկած քու միտքէդ: Յայտնուած հոգեկան նշանները կը ցուցնեն թէ նորածին մանուկը ամբողջ աշխարհի փրկիչը պիտի ըլլայ:

19. «Յիշելով որ ես ծերացած եմ, չի կրցայ արցունքներս բռնել. որովհետեւ իմ վախճանս կը մօտենայ: Բայց այս քու զաւակդ ամբողջ աշխարհին պիտի իշխէ: Ան ծնած է բոլոր կենդանի եղողներուն սիրոյն համար:

20. «Իր մաքուր ուսուցումը նման պիտի ըլլայ այն սարերուն» որոնք նաւաբեկները կ'ընդունին: Իր մտածումի կարողութիւնը պազ լիճին նման պիտի ըլլայ. և ցանկութեան երաշտութիւնովը խանձուած հոգիները կրնան ձրիաբար խմել անկէ:

21. «Ազահութեան կրակներու վրայ ան իր չնորհ-

քին ամպերը պիտի բարձրացնէ, այնպէս որ օրէնքին անձրեւը կրնայ մարել զայն :

22. «Սրտարեկութեան ծանր դուռները պիտի բանայ ան և պիտի աղատէ բոլոր անոնք՝ որոնք լիմարութեան և տգիտութեան անձնահիւս վարմին մէջ բռնուած են :

23. «Օրէնքի թագաւորը եկած է աղատելու համար կապանքներէ ազքատները, թշուառները և անօքները :

24. Երբ թագաւորը և թագուհին Այլիթայի խօսքերը լսեցին իրենց սիրտերուն մէջ բերկրեցան և իրենց նորածինը անուանեցին Սիտհարթա, այսինքն «ան որ կատարած է իր նպատակը» :

25. Եւ թագուհին ըսաւ իր քրոջ Փրաճափաթին, «Մայր մը որ ապագայ Պուտտայ մը ծնած է, պէտք չէ ծնանի ուրիշ զաւակ մը : Ես հարկ է շուտով թողում այս աշխարհը, իմ ամուսինս, թագաւորը, և զաւակս, Սիթհարթան : Երբ ևս մեկնիմ այս աշխարհէն, դուն մայր եղիր անոր» :

26. Եւ Փրաճափաթին արտասուեց և խոտոացաւ :

27. Երբ թագուհին մեկնեցաւ կենդանիներու աշխարհէն, Փրաճափաթին առաւ մանուկը Սիտհարթան և զայն խնամեց : Եւ ինչպէս որ լուսնին լոյսը տակաւ առ տակաւ կ'աւելնայ այնպէս ալ արքայական մանուկը կ'աճէր մարմնով և միտքով, և արգարատիրութիւնը և սէրը բոյն զրին իր սրտին մէջ :

Ե. Կ Ե Ա Ն Ք Ի Կ Ա Պ Ե Ր Ը

1. Երբ Սիտհարթա երիտասարդ եղաւ, իր հայրն ուղեց ամուսնացած տեանել, և բոլոր իր ազգականներուն լուր ղրկեց որպէս զի իրենց իշխանուհիները թագաւորին մօտ բերեն որպէսզի երիտասարդ իշխանը իրեն կեն ընտրէ անոնցմէ :

2. Բայց ազգականները պատասխանեցին. — «Իշխանը երիտասարդ և փափուկ է. ոչ ալ սորված է գիտութիւններէն և է մէկը : Ան անկարող պիտի ըլլայ պահել մեր դուստրը և եթէ պատերազմ ծագի, չի կրնար չափուիլ թշնամիին հետ» :

3. Իշխանը խառնուածքով զիւրազրգիւ չէր այլ մտախոհ : Ան կը սիրէր ճամբու ճառին տակ նստիլ պարտեղին մէջ, և զիտելով աշխարհի մարդերու սպրկակերպերը ինքզինքը խոկումի տուաւ :

4. Եւ իշխանը ըսաւ իր հօրը. — «Հրաւիրէ մեր ազգականները որպէս զի զիս տեանեն զօրութիւնս փորձեն» : Եւ հայրը ըրաւ ինչ որ հրամայեց իր որդին :

5. Երբ ազգականները եկան և Քափիլալաթըս քաղաքին ժողովուրդը հաւաքուեցաւ փորձելու համար իշխանին գիտութիւնը և քաջութիւնը, իշխանը ամէն բանի մէջ, թէ մտաւոր և թէ մարմնական վարժութիւններու մէջ ինքզինքը ստնական ցուցուց, և ամբողջ հողկատտանի մէջ չկար երիտասարդ մը որ կրնար զայն գերազանցել թէ մտաւոր և թէ Քիլիքական փորձերու մէջ :

6. Ան պատասխանեց իմաստուններուն բոլոր հարցումներուն, բայց երբ ինք հարցուց անոնց, անոնցմէ ամենախմաստունն անգամ պապանձեցաւ :

7. Անապան Սխոհարթման իրեն կին մը ընտրեց . ան ընտրեց Եաշօտհարան , իր հօրեղբօր դուստրը , Քօլիկ թագաւորին ագնիւ դուստրը : Եւ Եաշօտհարան ամուսնացաւ իշխանին հետ :

8. Անոնց զաւակ մը եղաւ , որուն անունը կոչեցին Տահուբու , և Շուտհօտանայ արքան , ուրախանալով որ ժառանգ մը ծնած է իր որդիին ըսաւ . —

9. «Իշխանը որդի մը ունեցած ըլլալով զայն պիտի սիրէ ինչպէս ևս կը սիրեմ զինք : Ասիկայ գօրեղ կապ մը պիտի ըլլայ Սխոհարթային սիրտը կապելու համար աշխարհի շահերուն , և Սաքիաներու թագաւորութիւնը իմ սերունդիս իշխանութեան ներքե պիտի մնայ » :

10. Ոչ թէ անձնասիրտեան նպատակով այլ նկատելով իր զաւակը և շուրջի ժողովուրդը , Սխոհարթա իշխանը կը նետուէր իր կրօնական պարտականութիւններուն , իր մարմինը կը լուար սուրբ Գանգէսին մէջ և իր սիրտը կը մաքրէր օրէնքի շուրհերուն մէջ : Ինչպէս որ մարդ մը կ'ըզձայ հանգիստ սաղ իր զաւակին , նոյնպէս ալ ան կը ցանկար հանգիստ սաղ աշխարհին :

Չ. ԵՐԵՔ ՎՍՅԵՐԸ

1. Այն պատարը զոր թագաւորը սուած էր իշխանագունին Հնդկաստանի բոլոր ճօխութիւններովը կը փոզիտէր , որովհետեւ թագաւորը անձկանօք կը տենշար որ իր որդին երջանիկ ըլլայ :

2. Բոլոր վշտալի տեսարանները , բոլոր թշուառութիւնները և թշուառութեան բոլոր գիտութիւնը ծածկըւեցաւ Սիթհարթման , և ան չէր գիտեր թէ աշխարհի վրայ չարք կար :

3. Բայց ինչպէս որ շղթայուած փիղը անտառի ազատ վայրերուն կը ցանկայ , այնպէս ալ արքայազուն իշխանը կը բաղձար տեսնել աշխարհը , և իր հօրմէն ինդրեց որպէսզի զինքը արտօնէ աշխարհը տեսնելու համար :

4. Եւ Շուտհօտանայ արքան , հրամայեց որ իր որդիին համար գոհարագարդ կտուք մը պտորաստեն , չորս չքեղ ձիերով և հրամայեց նաև որ զարդարեն այն բոլոր ճամբաները՝ ուրիշ պիտի անցնէր արքայազունը :

5. Քաղաքին տուները զարդարուեցան վարագոյրներով և դրօշակներով , և հանդիսականները ճամբաներուն երկու կողմերը կը շարուէին անձկանօք դիտելով գահին ժառանգը : Այսպէս Սխոհարթա , իր կառավարին Չաննայի հետ , չրջեցաւ քաղաքի փողոցներուն և երկրի մը մէջ՝ որ կ'ուսողուէր գետակներով և ծածկուած էր հաճելի ծառերով :

6. Հոն , ճամբուն վրայ ծեր մարդու մը պատահեցան : Արքայազունը դիտելով մարդուն կորաքամակ մարմինը , խորշումած դէմքին և արտամթախիծ ձակասը , ըսաւ իր կառավարին . — «Ո՞վ է այս , իր գլուխը ձերմակ է . իր աչքերը ազօտացած են , և իր մարմինը մաշած է : Ան դժուարաւ կրնայ յենուլ իր զաւազանին և կանգուն մնայ :»

7. Կառավարը շատ շիտիմած հազիւ համարձակեցաւ ըսել ճշմարտութիւնը : Ան ըսաւ . — «Ասոնք ծերութեան ախտանիշերն են : Այս մարդը ժամանակին կաթնկեր մանուկ մըն էր , և կենսունակութիւնով լի երիտասարդ մը . բայց այժմ , մինչ տարիները սահած են , անոր զեղեցիկութիւնը զացած է և իր կեանքին ոյժը վատնուած » :

8. Սխոհարթա մեծապէս ազդուեցաւ կառավարին խօսքերէն , և հառաչեց ծերութեան ցաւերուն համար :

«Ի՞նչ հաճոյք և խնդութիւն կրնան ունենալ մարդիկ» ըսաւ . ան ինքնիրեն , «Երբ անոնք գիտեն թէ շուտով պիտի թարշամին և դարկանան» :

9. Եւ ահա , մինչ անոնք կ'անցնէին փողոցին մէջէն , հիւանդ մարդ մը երեւեցաւ ճամբուն եզերքը , հեւքոտ , մարմինը սլլափոխուած , ցաւով ցնցուած և ողբակոծ :

10. Արքայազուներ հարցուց իր կառավարին . — «Աս ի՞նչ տեսակ մարդ է .» և կառավարը պատասխանեց . — «Այս մարդը հիւանդ է : Իր մարմինին չորս տարեբեր շփոթած և խանգարուած են : Մենք ամէնա ենթակայ ենք այսպիսի վիճակներու . սղքատ և հարուստ , սղէտ և խմաստուն , բոլոր արարածները որոնք մարմին ունին ենթակայ են նոյն սղէտներուն :»

11. Եւ Սխահարթա աւելի յուզուեցաւ : Բոլոր հաճոյքները անպիտան թուեցան անոր և ան զզուեցաւ կեանքի ուրախութիւններէն :

12. Կառավարը մտրակեց ձիերը այս սղբալի տեսարանէն հեռանալու համար երբ յանկարծ կեցան իրենց վաղքին մէջ :

13. Չորս մարդեր կ'անցնէին իրենց ուսերուն վրայ դադաղ մը կրելով , և արքայազուներ անկենդան մարմինի մը տեսքէն սարսափած հարցուց կառավարին . — «Ի՞նչ է այս տարածնին : Կրօշակներ և ծաղկեպսակներ կան դադաղին վրայ , բայց հետեւող մարդերը ճնշուած են թախիծով» :

14. Կառավարը պատասխանեց . «Այդ տարածնին մեռած մարդ մըն է . իր մարմինը մինակ է . կեանքը գացած է անկէ , անոր խորհուրդները դադրած են . իր ընտանիքը և բարեկամները որոնք կը սիրէին զինքը , այժմ գայն գերեզման կը տանին» :

15. Եւ արքայազուն իշխանը համակուեցաւ ահով և սարսափով : «Աս միակ մեռած մարդն է՞ թէ ոչ ուրիշներ ալ կան աշխարհի վրայ» :

16. Տրտում սրտով մը պատասխանեց կառավարը . «ամբողջ աշխարհի վրայ նոյնն է : Ան որ կ'ըսակի կեանքը սղէտք է վերջացնէ գայն : Մահէն ազատոււմ չկայ» :

17. Նուագող շունչով մը և տատամտող շեշտերով բացազանչեց արքայազուներ . — «Ո՛վ աշխարհիկ մարդ , որքան մահացու է քու խաբկանքդ : Անխուսափելի օրէնքու մարմինդ պիտի քայքայուի , պիտի փոշխանաց , բայց դեռ դուն կ'ապրիս անհող , անտարբեր» :

18. Կառավարը տեսնելով որ այս տեսարանները ծանր կը ճնշէին արքայազուներն վրայ , դարձուց իր ձիերը և քաղաք վերադարձաւ :

19. Երբ ազնուականներու պալատներուն քովէն կ'անցնէին , Բրիշա Կօթաման , երիտասարդ իշխանուհի մը և թագաւորին եղբոր դուստրը , տեսաւ Սխահարթան առնական և գեղեցիկ և դիտելով անոր դէմքին մտածկոտութիւնը ըսաւ . «Երանի այն ծնողքին որ ծնաւ քեզ , երանի այն ծնողքին որ դիեցուց քեզ , երանի այն կրնկան որ քեզ ամուսին պիտի կոչէ :»

20. Իշխանագուներ այս ողջոյնը լսելով ըսաւ . «Երանի անոնց որոնք ազատութիւն գտած են : Միտքի անդորրութեան համար բաղձալով , Նիւվանայի օրհնութիւնը պիտի վնասուի» : Եւ իշխանուհին տալով իր մարդարակ մանակը իբր վարձատրութիւն իրեն տուած ծանօթութիւններուն համար , տուն վերադարձաւ :

21. Սխահարթա արհամարհանքով դիտեց իր պալատին գանձերը : Իր կինը գիմաւորեց գայն և թախտանձեց անոր ըսել իր վիշտին պատճառը , և ան ըսաւ . — «Ամէն կողմ փոփոխութեան հետքերը կը նշմարեմ . ատոր հա-

մար իմ սիրտս կը վշտանայ : Մարդեր կը ծերանան , կը հիւանդանան և կը մեռնին : Ու այդ բաւական է կեանքը համէ , հոտէ գրկելու համար :»

22. Թագաւոր հայրը , բնիւով որ իշխանադունին սիրտը օտարացած է հաճոյքներէ , մեծապէս յաղթահարուեցաւ վիշտէ և սուրբի մը նման ցաւը խոցեց իր սիրտը :

Է. ՊՈՒՏՏԱՅԻ ԱՇԽԱՐՀԷ ՀՐԱԺԱՐՈՒՄԸ

1. Գիշեր էր : Իշխանագունը իր կակուղ բարձին վրայ հանգիստ չգտաւ . ելաւ և պարտէզ գնաց : «Աւազ» գոչեց ան , «աշխարհ լի է մթութիւնով և ազխութիւնով : Չկայ մէկը որ գիտնայ թէ ինչպէս պէտք է դարմանել կեանքի չարիքները :» Եւ ցաւով հառաչեց :

2. Սխտարթա նստաւ մեծ ձամպու ծառին տակ և ինքզինք խորհրդածութեան սոււաւ . խորհեցաւ կեանքի , մահուան և ջնջումի չարիքներուն վրայ : Իր մխոքը կեդրոնացնելով չիթութեանէ ազատեցաւ : Բոլոր ստորին իլձերը անյայտացան իր սիրտէն և կատարեալ անդորրութիւն տիրեց անոր վրայ :

3. Այս պշտումի պահուն իր իմացականութեան աչքով տեսաւ աշխարհի բոլոր թշուառութիւնն ու ցաւը , տեսաւ հաճոյքի ցաւերը և մահուան անխուսափելիութիւնը : Բայց մարդեր դեռ չէին արթնար ճշմարտութեան համար : Եւ խորապէս յուզուեցաւ , արգահատեցաւ իր սիրտը :

4. Մինչ իշխանագունը կը խտկար չարիքի հարցին վրայ , տեսաւ մեծ ձամպու ծառին տակ , վեհ , փառա-

ւոր և խաղաղ կերպարանք մը : «Ուրիէ՞ կուգաս և ո՞վ ես» հարցուց իշխանագունը :

5. Տեսիլքը պատասխանեց . «Ես ճգնաւոր մըն եմ . ծերութեան , հիւանդութեան և մահուան մտածումները նեղութիւն պատճառեցին ինձի , և ես իմ տունս լքեցի փրկութեան ճամբան փնտռելու համար : Ամէն բան կ'աւազարէ քայքայուիլ , միայն ճշմարտութիւնը յաւիտենական կը մնայ : Ամէն բան կը փոխուի և մնայուն , կայուն բան չկայ . բայց Պռտտայի խօսքերը անփոփոխ են : Ես կը զգամ անկորնչելի երջանկութիւնը . այն դանձր որ երբէք պիտի չի փճանայ , կանք մը որ ոչ սկիզբ ոչ վախճան չունենայ : Ատորհամար վտարած եմ միաբէս ամէն աշխարհիկ մտածում : Խուռչի մը մէջ քաշուած եմ մենութեան մէջ ապրելու համար , և կերակուր մուրալով , ինքզինքս կը նուիրեմ այն միակ բանին որ կարեւոր է» :

6. Սխտարթա հարցուց . «Այս անանդորր աշխարհին մէջ կարելի՞ է խաղաղութիւն ստանալ : Կը զգամ հաճոյքի ունայնութիւնը և ցանկութեանէ կը խորշիմ : Ամէն բան կը ճնշէ դիս . և կեանքը անտանելի կը թուի ինձի» :

7. Ծգնաւորը պատասխանեց . «Ուր որ ջերմութիւն կայ հոն ցրտութիւն կենալու հաւանականութիւն կայ . ցաւի ենթակայ արարածներ , ենթակայ են նաև հաճոյքի , չարիքի ծաղումը կը ցուցնէ թէ բարիին զարգացումը կարելի է : Որովհետև չարը և բարին յարընջական են . Այսպէս , ուր որ շատ տառապանք կայ , հոն պիտի ըլլայ նաև շատ երանութիւն , եթէ միայն բանաս աչքը զայն դանկու համար : Ծիչդ ինչպէս որ ցեխին մէջ իչնող մարդը լուսաններով ծածկուած մեծ լիճը կը փնտռէ նոյնպէս այ դուն փնտռէ մեծ անմահ Նիրվանայի լիճը լուանալու համար մեղքի բոլոր ազդեցութիւնները : Եթէ չես փնտռեր լիճը , յանցանքը լիճին չէ . նոյնպէս այ եթէ

փրկութեան օրհնեալ ճամբայ մը կայ որ Նիրվանայի փրկութեան կ'առաջնորդէ . երբ մեզաւորը զայն չի փրկաւոր, յանցանքը ճամբային չէ անշուշտ, այլ յանցանքը անձինն է և երբ հիւանդը ինքզինքը բժիշկին չցուցնէր յանցանքը բժիշկինը չէ նոյնպէս ալ երբ մէկը հիւանդացած է չարագործութեան հիւանդութիւնով, և չի փնտեր հոգեկան լուսաւորութեան առաջնորդը յանցանքը մեզքը ջնջող առաջնորդին չէ» :

8. Արքայազունը ունկնդրեց իր այցելուին ազնիւ . խօսքերուն և ըստ . «գուն բարի աւետիաներ կը բերես, որովհետեւ հիմա ալ գիտեմ թէ իմ նպատակս պիտի իրագործուի : Հայրս կը յորդորէ զիս վայելիլ կեանքը և աշխարհիկ պարտականութիւններ ստանձնել . այնպիսի գործեր՝ որոնք պատիւ պիտի բերեն ինձի և մեր տանը : Ան կ'ըսէ ինձի թէ տակաւին շատ փոքր եմ, թէ իմ բազկերակս շատ զօրաւոր կը զարնէ կրօնական կեանք մը վարելու համար» :

9. Պատկառելի կերպարանքը շարժեց իր գլուխը և ըստ . «Պէտք է գիտնաս թէ ճշմարիտ կրօնքը փնտսելու համար ոչ մէկ ժամանակ անպատէ՛ն չէ» :

10. Սիւնարթային սիրտէն ուրախութեան թրթռում մը անցաւ : «Հիմա է ժամանակը կրօնք փնտսելու» . ըստ ան . «հիմա է ժամանակը լքելու բոլոր այն կապերը որոնք կ'արգելին ինձի կատարեալ լուսաւորութիւն ստանալ : Հիմա է ժամանակը թափառել անապատներու մէջ, և մուրացկանի մը կեանքը վարելով, փրկութեան ճամբան գտնել» :

11. Իշխանը վերագարձաւ իր կնոջ ննջարանը, վերջին անգամ մըն ալ տեսնուելու անոնց հետ՝ զորս կը սիրէր աշխարհի բոլոր գանձերէն աւելի : Ան ուղեց մաշուկը անգամ մըն ալ գիրկն առնել և համբուրել զայն :

Բայց մանուկը պառկած էր իր մօր բազուկներուն մէջ, և չէր կրնար վեր առնել զայն առանց երկուքն ալ արթնցնելու :

12. Հոն Սիւնարթա կեցաւ և գիտեց իր գեղանի կինը և սիրական զաւակը, և իր սիրտը վշտացաւ : Բաժանումի կսկիծը զօրաւոր կերպով ճնշեց զայն : Թէպէտ իր որչումը անյողող էր, այնպէս որ ոչ մէկ չար կամ բարի չէր կարող փոխել զայն, բայց և այնպէս արտասուեց Սիւնարթա և անկարող էր արտասուքներու հեղեղը կառնել :

13. Այսպէս Սիւնարթա հրաժարեցաւ աշխարհէն, թողուց իր թաղաւորութիւնը, մերժեց աշխարհի հաճոյքները և անանկութեան գնաց :

Ը. ՊՈՒՏՏԱՅԻ ՓՆՏՈՏՈՒՔԸ

1. Արասա և Ուարաքա համբաւաւոր ուսուցիչներէն էին Պրահմաններուն մէջ, այդ օրերուն մէջ չկար մէկը որ կրնար գերազանցել զանոնք ուսումի և խնաստասիրական ճանթութեան մէջ :

2. Սիւնարթա անոնց քով գնաց և անոնց ուղեւորուն քով նստաւ : Ան ունկնդրեց անոնց աթմանի (անձի) վարդապետութեան . անձին որ եսն է միտքին և ամէն բան ընողը : Ան սրվեցաւ անոնց վարդապետութիւնները հոգեփոխութեան և քարմայի (գործ) մասին, սորվեցաւ թէ ինչպէս չար մարդերու հոգիները պիտի տառապէին վերստին ծնանելով ստորադաս մարդերու, կենդանիներու կերպարանքին տակ, կամ ծնելով վերստին դրժոխքին մէջ . մինչդեռ անոնք որ ինքզինքնին կը մաք-

րեն գինեձօներով, գոհերով և ինքնամահացումով, թագաւորներ կամ Պրահմաններ, կամ զէվաներ (հրեշտակներ) պիտի ըլլան, և աւելի և աւելի պիտի բարձրանան կեանքի սանդուխներէն: Ան ուսումնասիրեց անոնց զիւթութիւնները, գոհագործութիւնները և այն մէթոսները՝ որոնցմով անոնք ազատուած էին անձէն և նիւթական կեանքէն պահերուն մէջ:

3. Արատան ըսաւ. «Ի՞նչ է այն անձը, եսը, որ կը բմբունէ միաքի հինգ արմատներն, շօշախումբի, հոտաուութեան, ճաշակի, տեսողութեան և լսողութեան զգայարանները — գործերը: Ի՞նչ է ան որ կը գործէ ձեռքերուն և ոտքերուն միջոցով: Հողիին հարցը կ'երեւնայ «Ես կ'ըսեմ», «Ես գիտեմ և կ'ըմբռնեմ», «Ես կուգամ» և «Ես կ'երթամ», և կամ «Ես հոս պիտի կենամ» խօսքերուն մէջ: Եսը քիթին միջոցով հոտաւայն է. եսը ճաշակողն է լեզուին միջոցով, տեսնալն է աչքին միջոցով, լոյսը՝ ականջին միջոցով, խորհողը՝ միտքին միջոցով: Եան է որ կը չարժէ քու ձեռքդ և ոտքերդ: Եան է քո հողիդ: Հողիին գոյութեան մասին կասկածանքը անկրօնական է և աւանց ճանչնարս. այս ճշմարտութիւնը չկայ փրկութիւն: Խորհողածութիւնը շատ զիւրաւ կը շփոթէ միտքը. այդ շփոթութեան և անհաւատութեան կ'առաջնորդէ: և հողիին մարտիրոսները փրկութեան կ'առաջնորդէ: Ճշմարտ փրկութիւնը կը կայանայ քաշուելի ամբոխէն և ձգնաւորի կեանք վարելուն մէջ, կախում ունենալ ամբողջովին սղորմութենէ կերակուրի համար: Ամէն փափաք մէկդի ընելով, և սրոշ կերպով ճանչնարով նիւթի չգոյութիւնը, կատարեալ ունայնութեան, պարապութեան վիճակի մը հասնինք: Հոս կը գտնենք աննիւթական կեանքի պայմանը: Ինչպէս որ ներկարոյսը երբ ազատի իր փշոտ պատեանէն, կամ ինչ-

պէս որ վայրի թռչնիկը երբ ազատի իր վանդակէն ազատ կեանք մը կը վարէ, այնպէս ալ եսը ինքզինքը ազատագրելով ամէն կերպ սահմանաւորումներէ կատարեալ փրկութիւն կը գտնէ: Այս է ճշմարտ փրկութիւնը. բայց անոնք միայն սրտնք խոր հաւատք անին սկիտի սորվին զայն»:

4. Պատիտութան, Պուտտայտուն, չի գոհացաւ այս ուսուցումներէն: Եւ պատասխանեց. «Մարդեր կապանքի, գերութեան մէջ են, որովհետեւ տակաւին չեն վերցուցած իրենց միաքերէն ետի գաղտնաբար:

5. Իբր և իր յատկութիւնը անջատ գոյութիւններ են մեր միաքին մէջ, բայց անոնք անջատ գոյութիւններ չեն իրականին մէջ: Տաքութիւնը տարբեր է կրակէն մեր միաքին մէջ, բայց իրականին մէջ ջերմութիւնը կրակէն չեն կրնար բաժնել: Կ'ըսես թէ կրնաս վերցնել յատկութիւնը և թողուլ բուն իբր, աւարկան, բայց եթէ մինչեւ վերջը խորհիս քու հպեցողութեանդ, վրայ պիտի գտնես որ իրողութիւնը այնպէս չէ:

6. «Չէ՞ որ մարդ շատ մասերէ բաղկացած գործարանաւորութիւն մըն է: Մարդը կը բաղկանայ մարմինէ, զգացողութիւնէ, խորհուրդէ, բնաւորութիւններէ և վերջապէս հասկացողութենէ: Ինչ որ մարդեր ես կը կոչեն անոնցմէ՝ անջատ գոյութիւն մը չէ: Ասոնց գործակցութենէն կը ծնի ան: Կայ միտք, կայ զգացում և խորհուրդ, և կայ ճշմարտութիւն. և ճշմարտութիւնը միաքն է երբ ան կը քայէ արդարութեան ճամբաներուն մէջ: Եւայց մարդերու խորհուրդին ետեւ անջատ ես մը, հողի մը գոյութիւն չունի: Ան որ կը հաւատայ թէ ես անջատ գոյութիւն մըն է իրերու մասին ճիշդ բմբունում չունի: Եսին, հողիին փնտաւաւքը սխալ է, սխալ մեկնում մըն է և քեզ սխալ ուղղութեան պիտի առաջնորդէ:

7. «Տորձուրդի որքան չփոթուաներ կը ծաղկն ան-
 ձի հոնդէս մեր աւնեցած շահագործութեան, և մեր
 ունայնասիրութեան ներքէլքանք» (Եւոյն քան մեծ
 եմ) և կամ «Եւ ըրած եմ այս գնքնանայի գործը» :
 Քույն պիտի խորձուրդը կը կենայ քու իմաստեան ընու-
 թեանը և ճշմարտութեան միջև : Կտարէ զայն և ան
 ասին իրերը եղածին պէս պիտի աւանդու : Ան որ ուզի
 կը խորձի ինքզինքը կ'ազատէ սոցիալութենէ և իմաստու-
 թիւն կը ստանայ : Յասակ խորձուրդ մը համար «Եւ եմ»,
 «Եւ պիտի ըրամ» և կամ «Եւ պիտի չըլլամ» զազախար-
 ները գոյութիւն չունին :

8. «Ասկէ գաս եթէ քու Եղ մնայ ինչպէս կըր-
 նաս փրկութիւն ստանայ : Եթէ Եղ պիտի վերապրի վեր-
 ծնի, երեք աշխարհներէն — դժոխք, երկիր, երկինք —
 մէկուն մէջ, մենք գարձեալ կրկին և կրկին պիտի հան-
 դիպինք կեանքի նոյն անխուսափելի վճիռին, զատա-
 պարտութեան : Մենք պիտի խառնուինք եասպաշտու-
 թեան և մոլորի հետ :

9. «Երբ բաղադրութիւնները ենթակայ են տար-
 բաղադրութեան և մենք չենք կրնար խուսափիլ ծնուն-
 դէ, հիւանդութենէ, ծերութենէ և մահէ : Ասիկա վերջ-
 նական փրկութիւն մըն է :»

10. Ուտարաքա ըսաւ . — «Կործի սոցիոլոգիաները,
 արդիւնքները չեն տեսներ քու շուրջը : Ինչ բան մար-
 դերը կը տարբերէ նկարագրով, դիրքով, ստացուածքով
 և ճակատագրով : Անոնց գործը (karma) և գործը կը
 պարունակէ արժանիք և ոչ-արժանիք : Նոգիին փոխ-
 խութիւնը ենթակայ է իր գործին : Մենք նախկին գո-
 յութիւններէ կը ժառանգենք մեր չար գործերուն չար
 արդիւնքները և բարի գործերուն բարի արդիւնքները :
 Եթէ այդպէս չըլլար ինչպէս կրնայինք տարբերիլ
 մէկը մէկէ» :

11. «Թագապիտան (կատարեալը, Պուտայի բարձ-
 րագոյն անորոգելիքը) խոր կերպով խակաց հագեցախու-
 թեան և գործի կամ ժառանգականութեան խնդիրներուն
 վրայ և անոնց մէջ կողմ ճշմարտութիւնը գտաւ :»

12. «Գործի կամ ժառանգականութեան լիարդու-
 պետութիւնը ըսաւ ան : «անուշահայի է, որովհետեւ,
 ամէն արդիւնք իր պատճառը ունի : Ինչ որ կը ցանկ
 մարդ նոյնը պիտի հոնէ և ինչ որ կը հնձնէր, պէտք
 է ցանած ըլլանք մեր անցեալ կեանքին մէջ :»

13. «Կը տեսնեմ որ ճողեփխութիւնը ենթակայ է
 պատճառի և արդիւնքի օրէնքին, որովհետեւ մարդեր
 են որ կը շինեն իրենց ճակատագրերը : Բայց եսին ճող-
 փխութիւնը չեմ տեսներ :

14. «Չէ որ իմ աննստականութիւնս բաղադրու-
 թիւն մըն է նիւթական թէ իմացական : Չէ որ ան չին-
 ուած է յատկութիւններով որոնք յառաջ եկած են աս-
 տիճանական բարեշրջութիւնով : Լճրուումը հինգ ար-
 մասները և կամ են նախահայրէ որոնք գործածած
 են այդ զգայարանները : Իմ զազախարներս մասամբ
 անցեալէն եկած են և մասամբ ալ զազախարներու կը-
 ցորդութենէն իմ միտքիս մէջ : Անոնք որ գործածեցին
 այս զգայարանները և խորհեցան այս զազախարները
 երբ ես գոյութիւն չունէի դեռ, իմ նախնի կեանքս կը
 կազմեն : Անոնք իմ նախորդներս են ինչպէս որ իմ ե-
 րէկուան ես այսօրուան եսին հայրն է, և իմ անցեալ
 գործերս իմ ներկայ գոյութիւնս, կեանքս կը պայմա-
 նաւորեն :

15. «Ենթադրենք որ կայ ես մը, հոգի մը որ կը
 կատարէ զգայարաններուն գործերը, այս ենթադրու-
 թիւնով եթէ տեսողութեան ուղուր փակուէր և աչքը
 հանուէր, այդ Եղ կարող պիտի ըլլար այս կերպով

յառաջ եկած աւելի մեծ բացուածքին մէջէն դիտելի և իր միջավայրին մէջ գտնուած կերպարանքները և և առարկաները աւելի յառակ և աւելի լաւ տեսնել որքան « առաջ : Այդ նոր ձայները աւելի լաւ լսելու էր երբ ականջները վերցուէին և աւելի լաւ պիտի ճաշակէր երբ լեզուն կարուէր , աւելի լաւ պիտի զգար երբ մարմինը ջնջուէր :

16. « Ես կը դիտեմ պահպանութիւնը և փոխակերպութիւնը հոգիին . ես կ'ըմբռնեմ գործի ճշմարտութիւնը , բայց չեմ տեսներ ո և է ես որ կատարուին է քու գործերուդ : Վերածնունդ կայ առանց եսի , փոխակերպութեան : Որովհետեւ այս ներ « ես կ'ընեմ » , « ես կ'ուզեմ » , խօսքերուն մէջ խաբկանք մըն է : Եթէ այս ներ իրակաշունթիւն մը ըլլար , ինչպէ՞ս կարելի էր փրկուելի ետութիւնէ : Դժողքին սարսափները անսահման պիտի ըլլային և փրկութիւնը կարելի չէր ըլլար : Կեանքի չարիքները մեր ազիտութեան և մեղքին վերագրելի չէին ըլլար այն ժամանակ , այլ այդ չարիքները մեր էութեան բնութիւնը կազմող տարրեր պէտք էին ըլլար » :

17. Եւ Պօռֆիւսթիան սաճարներու մէջ պաշտօնավարող քահանաներու զնայ : Ինչո՞ւ Սաքիամունքի ազնիւ սիրտը գայթակղեցաւ տեսնելով այն վայրագութիւնները որոնք կը կատարուէին աստուածներու խորանին վրայ : Ան բտաւ :

18. « Տգիտութիւնը միայն կրնայ այս մարդերուն մեծ տօներ և զոհարերութեան համար մեծ ժողովներ զուժարել տալ : Աւելի լաւ է յարգել ճշմարտութիւնը քան թէ փաղաքչիկ չաստուածները արիւնայեղութիւնով :

19. « Ի՞նչ սէր կրնայ ունենալ այն մարդը որ կը հաւատայ թէ կեանքեր ջնջելով մեղքի թողութեան կ'արժանանայ : Կարելի՞ է որ նոր սխալ մը ջնջէ հին սխալ մը :

Կարելի՞ է որ անմեղ զոհի մը մահը բառնայ մարդկութեան մեղքերը : Ան ուրիշ բան չէ բայց միայն կրօնքը գարծաղբէր բարեգեղան վարքու բարքի զանցառումով :

20. « Մ'աքրեցէ՛ք ձեր սիրտերը և դադրեցէ՛ք սպաննելէ , որ՞նա ճշմարիտ կրօնքը : »

21. Արարողութիւնները զօրութիւն չունին , աղօթքները ունայն կրկնութիւններ են , և դիւթութիւնները փրկելու գօրութիւն չունին : Թողու՛լ սոգահութիւնը և ցանկութիւնը , աղատիլ չար կերքերէ , լքել ամէն տեսլութիւն և չարակամութիւն , այս է՛ անա՛ ճշմարիտ զոհը և ճշմարիտ պաշտօնունքը » :

Թ. ՊՈՒՏՏԱՅԻ ՓՈՐՁՈՒՄԸ

1. Պօռֆուսթի իր քայլերը ուղղեց դէպի այն Պօռֆի՛ ծառը՝ որուն չուքին տակ պիտի կատարէր իր վնասուտուքը :

2. Մինչ ան կը քաղէր աշխարհ՝ չարժեցաւ և փոյլուն յոյս մը աղակերպեց աշխարհը :

3. Երբ նստաւ երկինքները հնչեցին ուրախութիւնով և բոլոր կենդանի էակները համակուեցան խնդրութիւնով :

4. Միայն Մարան , հինգ փոխաքնութեան լիխանը , մահուան սէրը և ճշմարտութեան թշնամին , արմախաւ և չէր աւրափանար : Իր երեք սղջիկներովը , փորձիչներովը , և չար սատանաներու լէզէնով՝ զնայ այն տեղ ուր մեծ ճգնաւորը նստած էր : Ինչո՞ւ Սաքիամունքի բնակարանները թիւն չի տուաւ անոնց :

5. Մարա անարկու սորոտնայիքներ բրաւ Պոստայի

և փոթորիկ մը հաննց, այնպէս որ կրկինք մթազննց և ուկէանը սկսաւ գողալու գոռալ: Բայց Օրհնեայ Պուտտան Պատրի ծառին տակ խաղաղ և անդորր էր և չէր փախնար: Լուսաւորեայր գիտէր թէ իրեն ս և է մնաա չի կրնար հասնիլ:

6. Մարաի երեք աղջիկները Պատրիախիւսի փորձեցին բայց ան կրքէք ուշադրութիւն չբաւ անոնց, և երբ Մարա տեսաւ թէ յաղթական ձգնաւորին սիրտին մէջ չի կրնար արթնցնել ո և է փախաք, ան հրամայեց իր հրամանին տակ եղող բոլոր չար ողիներուն յարձակիլ և սարսափեցնել մեծ իմաստունը:

7. Բայց Օրհնեայ Պուտտան զանոնք դիտեց ինչպէս մէկը պիտի դիտէր մանուկներու անխաա խաղերը: Չար ողիներու բուռն առեկութիւնը կարեւորութիւն չուներ: Դժողքի բոցերը խունկի բուրումնաւէտ գեփիւռներու փոխուեցան և բարկացայտ շանթերը լուսաա ծաղկիկներու փոխուեցան:

8. Երբ Մարա տեսաւ Այս բանը, իրեններովը փախաւ Պատրիի ծառին տակէն: Նոյն տունն կրկնային ծաղիկներու տեղատարափ մը ինկաւ և բարբի հողիներու ծայներ լուեցան:

9. «Անա՛ մեծ իմաստունը, իր միտքը բնաւ չի չարժիք ատելութիւնով չարին լեզէոնները չի կրցան սարսափեցնել զայն: Ան մաքուր է և իմաստուն, սիրազեղ և չորհալի:

10. «Ինչպէս որ արեւին ճառագայթները կը խեղդեն աշխարհի մթութիւնը, այնպէս ալ ան որ կը յարատեւէ իր փնտռաուքին մէջ պիտի գտնէ ճշմարտութիւնը որ պիտի լուսաւորէ զայն»:

Գ. ԼՈՒՍԱԲՈՐՈՒԹԻՒՆԸ

1. Պատրիախիւս Մարան փախուտի մատնելով ինքզինքը խորհրդածութեան տուաւ: Աշխարհի բոլոր թուաաութիւնները, չար արարքներէ արտադրուած չարիքները և անոնցմէ առաջ եկող տառապանքները անցուց իր միտքի աչքին տուջուէն, և ան մտածեց: —

2. «Արդարեւ եթէ կենդանի էակներ տեսնէին իրենց չար գործերուն արդիւնքները պժգանքով պիտի դառնային անոնցմէ: Բայց անձնութիւնը կը կուրցնէ զանոնք և անոնք կը փարին իրենց դժպիտ տենջերուն:

3. «Անոնք հաճոյք կը տենջան և զաւ կը պատճառեն, կըր մաշը կը քայքայէ անոնց անհատականութիւնը անոնք խաղաղութիւն չեն գտներ, կեանքի համար անոնց տարած ծարաւը կը մնայ և անոնց անձկութիւնը կը վերերենայ նոր ծնունդներով:

4. «Այսպէս անոնք կը շարունակեն չարժիլ կծիկին մէջ և չեն կրնար ազատում զտնել իրենց շինած դժողքէն: Եւ որքան պարապ են անոնց հաճոյքները և որքան ունայն անոնց ջանքերը: Աղամաթուզի ծառին նման խոտոչաւոր են անոնք և պղպջակիմը նման ատանց պարունակութեան:

5. «Աշխարհը լի է մեղքով և զաւով, որովհետեւ ան լի է սխալով: Մարդեր կը մոլորին որովհետեւ կը մտածեն թէ խաղկանքը աւելի յաւ է քան ճշմարտութիւնը: Ծմարտութիւնէ աւելի սպութեան, սխալի կը հետեւին, սխալի, ստութեան, որ թէպէտ սկիզբէն հաճելի կը թուի, բայց յետոյ անձկութիւն, թուաաութիւն և ճախորդութիւն կը պատճառէ»:

6. Եւ Պատրիախիւս սիրտը բացատրել ճշմարտու-

թիւնը (dharma) : Տնարման ճշմարտութիւնն է : Տնարման նուիրական օրէնքն է : Տնարման կրօնք է : Տնարման միայն կրնայ փրկել մեզ սխալմունքէ, մեղքէ և վիշտէ :

7. Ծնունդի և մահուան ծագումնն վրայ խոսկալ Օրհնեալ Տէրը ճանչցաւ թէ ազխութիւնն է չարիքի արմատը : և հետեւեալներն են օղակները կեանքի՝ դարգացումն որոնք տասներկու նիստմաներ (պատճառներ) կը կոչուին : —

8. «Սկիզբէն է գոյութիւնը, կոր և աւանց գիտութեան : և այս ազխութեան ծովուն մէջ կան կաղձոյ և յօրինող փափաքներ ցանկութիւններ : Յորինող և կաղձոյ փափաքներէն կը ծագին ծանօթութիւն, իրազեկութիւն կամ զգացում : Զգացումներ կը ծնին գործարանաւորներ՝ որոնք կ'ապրին իրեւ անհատական էակներ : Այս գործարանաւորութիւնները կը զարգացնեն վեց դաշտեր, աշխնքն հինգ զգայարանները և միտքը : Վեց դաշտերը իրեււ հետ չիման մէջ կը մտնեն : Եփուժը զգացողութիւն կը ծնի : Զգացողութիւնը կը ստեղծէ անհատականացած էութեան տենջը : Գոյութեան տենջը կը ստեղծէ իրերու յարելու փափաք : Իրերու փարելու տենջը անձնութեան աճումը և շարունակութիւնը կը ստեղծէ : Անձնութիւնը կը շարունակէ վերանորոգուած ծնունդներով : Անձնակալութեան վերանորոգուած ծնունդները պատճառներն են տառապանքի, ծերութեան, հիւանդութեան և մահուան : Անոնք կ'արտադրեն ողբ, անձկութիւն և վճատութիւն :

9. Բոլոր ցաւի պատճառը բուն սկիզբին մէջ կը գտնուի. ան պահուած է այն ազխութեան մէջ՝ ուրկէ կ'աձի, կ'ընձիւզի կեանքը : Վերցուր ազխութիւնը և պիտի վերջնես սխալ տենջերը, ցանկութիւնները՝ որոնք

ազխութենէ կը ծագին. վերցուր այս սխալ ախտբժակները, տենջերը, և վերցուցած կ'ըլլաս այն սխալ ըմբռնումները՝ որոնք այս սխալ տենջերէն կը ծագին : Զնջէ սխալ ըմբռնումը և էակներուն մէջ անհատականացած սխալները վերցուցած կ'ըլլաս : Էակներու մէջ անհատականացած սխալները վերցուր և վերցուցած պիտի ըլլաս վեց դաշտերու խարխանքները : Վերցուր խարխանքները, և իրերու հետ չիուժը թիւրիմացութիւններ ծնել պիտի դադրի : Վերցուր թիւրիմացութիւնները, սխալ ըմբռնումները և վերցուցած պիտի ըլլաս ծարաւը : Վերցուր ծարաւը և ազատ ջնջածպիտի ըլլաս անձնութեան անձնասիրութիւնը և պիտի բարձրանաս վեր ծնունդէ, ծերութենէ, հիւանդութենէ և մահը, և փրկուած, ազատուած պիտի ըլլաս ամէն տառապանքէ :

10. Լուսաւորեալը տեսաւ այս չորս աղնիւ ճշմարտութիւնները որոնք նիրականային կամ անձին ջնջումն կ'առաջնորդեն :

11. Առաջին աղնիւ ճշմարտութիւնն վիշտի գոյութիւնն է : Ծնունդը վշտալի է . հիւանդութիւնը վշտալի է և մահը վշտալի է : Վշտալի է միանալ անոր հետ որը չենք սիրեր : Աւելի վշտալի է բամբուկ անկէ՝ որը կը սիրենք, և ցաւալի տենջալը այն բանին համար զոր չենք կրնար ձեռք ձգել :

12. Երկրորդ աղնիւ ճշմարտութիւնը տառապանքի պատճառն է, Տառապանքի պատճառը ցանկութիւնն է : Երջապատող աշխարհը կ'ազդէ զգացողութեան և տենջարագձ ծարաւ մը յատուց կը բերէ ծարաւ մը որ անմիջապէս գոհացում կը պատճանջէ : Անձի խարխանքը կը ծագի և կը յայտնէ ինքզինք տառապանքի փարելուն մէջ : Անձի վայելքին համար ապրելու տենջը վիշտի վարմնն մէջ կը ձգէ մեղք : Հաճոյքները խայծ են և արդիւնքը վիշտ է :

13. Երբորդ ազնիւ ճշմարտութիւնը վիշտի դաղ-
րուան է: Ան որ անձին կը յաղթէ ազատ պիտի ըլլայ
ցանկութեան: Այսպիսին ալ չի տեսնար, և տեսնանքի
բոցը անոր մէջ ճաղակ չի գտնուիր: Ան այսպէս ցաւը կը
զաղբի, կը վերջանայ, կը մարի:

14. Զորբորդ ազնիւ ճշմարտութիւնը ութը ճղի ճամ-
բան է որ վիշտի վերջանալուն, զաղբերուն կ'առաջ-
նորդէ: Փրկութիւն կայ անոր համար որուն անձը կ'ա-
նհրեւութանայ ճշմարտութեան առջեւ, որուն կամքը կը
հանի այն բանին յիշող որը սրբաբոյի կանոնից, որուն
միտի տեսնէ կանոնի իր տարաքր: Ան որ իմաստուն
է պիտի մտնէ այն ճամբուն մէջ և վերջ տայ իր վիշտին:

15. Ասանք ան ութ ճամբաները: 1. Վերջի վերջ
բանտութիւն: 2. Անշիղ որոշումներ: 3. Յոռաշիղ խօս-
քեր: 4. Աղիւղ շարժեր: 5. Օրհնարանի ճարտարութիւն
միջոցներ: 6. Անշիղ շահքեր: 7. Անշիղ խորհուրդ-
ներ: 8. Խաղաղ միտքի ուղիղ պիտակը:

16. Այս է ահա տեսարաններ: Այս է ճշմարտու-
թիւնը: Այս է կրօնը: Երբ որ անոն գտնու գտնու յիշում
անոն մտայնութիւնը յայտատւ հարտան մտի բնուն իս
յն ուս: Երբ որ անոն բնիկ յայտ բնուն իստայն
բնախաբանոյ բնուն մ յայտ, գտնու մտայնութիւնտայ
բնախաբան ազգայն, դաժկով մն յատտ ութ յայտ . 3

Այսպիսով ինչպէս որ զի մէջն մ յի մանկայն յարտ
ինչպէս որ ճարտարութիւնտայն ուստու կ'տեսն
ուայ . բոցի մանկակիրտ որ կեսի մ մանկակտտայն մի
բայ բոցից յայտ . 3 յայտայ . կարեկայ . բոցի յայտ
մանկայ զի մտկայնոց մ մտկայնոցսն մ մտտ
տարտ մն . բնախախտայն մտտու ութ զգամ . 4
գիտնարտան վննա կմ ճարտար մտկայնոցի . մտկ

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԹԱԳԱՌՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԳՐՈՒԹԻՒՆ

1. Երբ որ անոն գտնու գտնու յիշում
անոն մտայնութիւնը յայտատւ հարտան մտի բնուն իս
յն ուս: Երբ որ անոն բնիկ յայտ բնուն իստայն
բնախաբանոյ բնուն մ յայտ, գտնու մտայնութիւնտայ
բնախաբան ազգայն, դաժկով մն յատտ ութ յայտ . 3
Այսպիսով ինչպէս որ զի մէջն մ յի մանկայն յարտ
ինչպէս որ ճարտարութիւնտայն ուստու կ'տեսն
ուայ . բոցի մանկակիրտ որ կեսի մ մանկակտտայն մի
բայ բոցից յայտ . 3 յայտայ . կարեկայ . բոցի յայտ
մանկայ զի մտկայնոց մ մտկայնոցսն մ մտտ
տարտ մն . բնախախտայն մտտու ութ զգամ . 4
գիտնարտան վննա կմ ճարտար մտկայնոցի . մտկ

3. Մինչ Պուտտայ հոն կ'երթար, Ուխաքա երիտա-
սարդ Պրահման մը և ճէյն մը, Պուտտայի նախապէս
ժանօթ, տեսաւ Պուտտան և զարմացած Պուտտայի
վեհապառու թեան և վսեմ զուարթութեան վրայ, ըսաւ .
«Քու զէմքը, բարեկամ, խաղաղ է . քու աչքերդ պայ-
ծառ են և մաքրութիւն և օրհնութիւն կը յայտնեն»:

4. Սուրբ Պուտտան պատասխանեց . «Ես ազատու-
թիւն, փրկութիւն ոտայցած եմ անձի մահացումովը:

Իմ մարմինս պատժուած է, իմ միտքս ազատագրուած
տենջէ. և խորագոյն ճշմարտութիւնը արմատացած է իմ
սիրտիս մէջ: Նիրվանան ստացած եմ, և այս է պատճա-
ռը որ իմ աչքերս պայծաս են և դէմքս խաղաղ: Ես
այժմ կը փափաքիմ ճշմարտութեան թողաւորութիւնը
հիմնել, հաստատել աշխարհի վրայ, կը փափաքիմ լոյս
տալ անոնց որոնք չըջապատուած են միժուժիւնով և
բանալ անմահութեան դուռները մտրդելու առջեւ):

5. Ու փաքալ պատասխանեց. «Ուրեմն բարեկամ,
դուն աշխարհիս յաղթողն ըլլալ կը յայտարարես, բա-
ցարձակը և սուրբը»:

6. Պուտտայ ըսաւ. «Յաղթողները (ճինս) անոնք
են որոնք յաղթած են անձին և անձի կիրքերուն, անոնք
միայն յաղթական են որոնք կը կրօնավարեն իրենց միտքը
և կը հրաժարին մեղքէ: Հետեւաբար, Ուփաքա, ես
յաղթական եմ»:

7. Ու փաքա շարժեց իր գլուխը. «Յարգելի Կօթա-
մա» ըսաւ ան. «քու ճամբսդ անդին կը դանուի» և
Ուփաքա ուրիշ ճամբայ մը բռնելով հեռացաւ Պուտ-
տայէն:

ԹԲ. ՊԵՆԱՐԻՍԻ ՔՍՐՈՋՐ

1. Հինգ աշակերտները երբ տեսան Պուտտայի ի-
րենց փաղեմի ուսուցիչին իրենց մօտենալը համաձայնեցան
իրենց մէջ զայն չ'ողջունել, ոչ ալ զայն տէր կոչել: Եւ
միայն իր անուամբ կոչել զայն: «Որովհետեւ», կ'ըսէին
անոնք, «Ան կտորած է իր ուխտը և թողուցած սրբու-
թիւնը: Ան ալ ես աշակերտ չէ ալ Կօթամա, և Կօթա-

ման եղած է մարդ մը որ կ'անդրի առատութեան մէջ և
աշխարհիկ հաճոյքներու մէջ կը մխրձուի»:

2. Բայց երբ Պուտտայ վսեմ կերպարանքով մը ա-
նոնց մօտեցաւ, անոնք ակամայ ելան իրենց տեղերէն և
ողջունեցին զայն հակառակ իրենց սրտումին: Բայց զայն
կոչեցին իր անունովը և անոր խօսեցան զայն «բարե-
կամ» կոչելով:

3. Երբ անոնք այսպէս ընդունեցին Սրճնեալը, ան
ըսաւ. «Թաթակաթման (կտտարեալը) իր անունովը մի
կանչէք. ոչ ալ բարեկամ անուանեցէք զայն, որովհե-
տեւ ան պուտտան է, Սուրբը: Պուտտա բարեկրօն-
ութիւնով մը հաւատարմալ է կը հալի բոլոր կենդանի է-
ակներու վրայ, և այդ պատճառով անոնք զինքը «Հայր»
կ'անուանին: Հայր մը չի մեծարել սխալ է, հայր մը ա-
նարգիլը մեղք է:

4. «Թաթակաթման» շարունակեց Պուտտայ, «վեր-
կուժիւնը խտտակեցութիւններու մէջ չի փնտտեր, բայց
այդ պատճառով մտածելու չէք թէ ան կը մխրձի աշ-
խարհիկ հաճոյքներու մէջ, կամ ճոխութեան մէջ կ'ապ-
րի: Թաթակաթման միջին ճամբան գտած է:

5. «Ոչ ձուկէ կամ միտէ հրաժարիլը, ոչ մերկ սպ-
րիլը, ոչ գլուխը ամիլիլը, ոչ հիւսուած մազ կրելը,
ոչ զնցոտիներ հագնիլը, ոչ ալմաթաթաղ ըլլալը, ոչ Ակ-
նիի զօնիլը, չի կրնար մաքրել մարդ մը որ ազատած չէ
խարկանքներէ:

6. «Վէտաները կարգալը, Գահաներու նուէր տալը,
աստուածներու զոհ ընելը, սուքով կամ պաղով ինքնա-
մահացումը, և շատ մը այս կարգի պատիժներ որոնք
անմահութեան սիրտն համար կը զործադրուին, չեն
կրնար մաքրել այն մարդը որ ազատած չէ խարկանք-
ներէ:

7. «Բարկութիւն, զինեմդութիւն, յամսուութիւն անապարծութիւն, խաղերայութիւն, նամանձ լինքնսորսութիւն, ուրիշները անպայտուէր, սէզութիւն և չար դիտանորութիւններ, պատճառ են որ անմաքրութիւնը կը բաղկացնեն, ու ոչ թէ միաբանելը:»

8. «Թողէք ձեզ ուսուցանեմ ով աշակերտներ, միջին ճամբան որ երկու ծայրայեղութիւններէ հեռու կը կենայ: Տառապելով, հիւժող բարեկաշտը շիտթութիւն և հիւանդոտ խորհուրդներ կը ստածէ իր միտքին մէջ: Մահացումը չի կրնար առաջնորդել նոյն խոկ աշխարհային գիտութեան, սրբան աւելի անկորով է զգայարաններուն յաղթել:

9. «Ան որ իր կանթկը չուտով կը լեցնէ չի կրնար հաւարը փարատել, և ան որ կը ջանայ կրակ վառել փոտած փայտով մը չի յաջողիր:

10. «Մահացումները (mortification) ցաւալի, պարագ և անօգուտ են: Ինչպէս կարելի է որ մէկը ազատ ըլլայ ետէն թշուառ կեանք մը վարելով, առանց մարելու ցանկութեան բոցերը:

11. «Բոլոր մահացումները անօգուտ են, որքան ատեն որ Եսը կը մնայ և կը ցանկայ կամ աշխարհային կամ երկնային հաճոյքներ: Բայց ան, որուն մէջ մեռած է Եսը, այնպիսին ազատ է ցանկութենէ, այնպիսին ոչ աշխարհային ոչ ալ երկնային հաճոյքներ կը ցանկայ, և իր բնական պէտքերուն գոհացումը չապականեր զայն: «Թող այնպիսին ուտէ և խմէ մարմինին պէտքերուն համաձայն:»

12. «Ձուրը կը շրջապատէ լուսաւ ծաղիկը բայց չի թրջեր անոր թերթերը:»

13. «Ընդհակառակը, ամէն կերպ զգայանորութիւնը

չաւար է: Չգայանոր մարդը գերի է իր կիրքերուն, և հաճոյանը լուրջութիւնը սպառնացուցիչ է գոհճիկի:»

14. «Ենայ կեանքի պէտքերը գոհացնել չարիք մը չէ: Մարմինը անողջ պահել սրտուք մըն է որովհետեւ ուրիշ կերպով չենք կրնար խմանսութեանն կանթկը վառ պահել, և մեր մրտքը գորաւար և և մաքուր պահել:»

15. «Այս է միջին ճամբան, ով աշակերտներ, որ երկու ծայրահեղութիւններէ հեռի կը կենայ:»

16. Օրհնեալ Պուտտան սկսաւ քարոզել աշակերտներուն, անոնց անմահութեան գաւառները բանալով և անոնց ցուցնելով Նիրվանայի օրհնութիւնը:

17. Եւ երբ Օրհնեալ Պուտտան խօսիլ քարոզել սկսաւ, համայն ափեղերքի մէջ խանդ մը, աւիւն մը, յափշտակութիւն մը անցաւ:

18. Հրեատակները թողուցին իրենց երկնային բնակավայրերը ճամարտութեան ունեղրելու համար. այն սուրբերը որոնք մեկնած էին աստուծոյ կեանքէն, մեծ ուսուցչին չորջ հաւաքուեցան թարի լուրը լսելու համար, նոյնիսկ երկրի կենդանիները զգային այն օրհնութիւնը որ կը հանդէպ թատակաթայի խօսքերուն վրայ, և զգայուն էակներու ամբողջ բռնակը, աստուածներ, մարդեր կենդանիներ, փրկութեան պատգամը լսելով, բնդունեցին և հատկցան զայն իրենց լեզուովը:

19. Պուտտայ ըսաւ. — «Անուամտները կանոններն են մաքուր վարքի, արդարութիւնը անոնց երկայնութեան միակերպութիւնն է, խմատութիւնը անուազօտին (ձէնպէր) է. համեստութիւն և խոհեմութիւն այն երախակալն է որուն մէջ հատուտաւած է ճամարտութեան անշարժ առանցքը:

20. «Ան որ կը ճանչնայ տառապանքի գոյութիւնը,

անոր պատճառք, դարմանը և դադրումը, քննած և խա-
րաչափած է չորս ազնիւ ճշմարտութիւնները: Այնպիսին
ուղիղ ճամբուն մէջ պիտի քալէ:

21. «Ուղիղ տեսութիւնները պիտի ըլլան Չան մը
լուսաւորելու անոր ճամբան: Ուղիղ նպատակները իրեն
ատաջնորդը պիտի ըլլան: Անոր դուռը ուղիղ պիտի ըլ-
լայ, որովհետեւ ուղիղ վարմունք է: Իր զովացուցիչ-
ները պիտի ըլլան իր օրապահիկը ճարելու ուղիղ կեր-
պերը: Ուղիղ ջանքերը պիտի ըլլան իր քայլերը. և ու-
ղիղ խորհուրդները պիտի ըլլան իր շունչը, հոգին և խա-
ղաղութիւնը պիտի հետեւի իր քայլերուն»:

22. Եւ օրհնեալ Պուստան բացատրեց Կսին անկա-
յունութիւնը:

23. «Մնչ որ սկսած է, իր վախճանը պիտի ունենայ:
Անձին համար եղած բոլոր յազնութիւնները ունայն են,
Եսը կրկնեւեւոյթի մը նման է. և բոլոր ճախորդութիւն-
ները որ կը հոլին անոր պիտի անոյնին: Անոնք պիտի
աներեւութանան խրատելիակի մը նման երբ քնացողը
արթննայ:

24. «Ան որ արթնցած է, ազատած է վախէ, այն-
պիսին Պուստայ եղած է. ան կը ճանչնայ ունայնու-
թիւնը իր բոլոր հոգեբուն, իր բոլոր փառասիրութիւն-
ներուն և նաև իր բոլոր ցաւերուն:

25. «Երբեմն կը պատահի որ մարդ մը լոզանք
ըրած պահուն թաց չուանի մը վրայ կը կոխէ և կը
կարծէ թէ օձի մը վրայ կոխած է: Սարսափը կը պատէ
զայն, մտածելով այն տառապանքներուն վրայ որոնք
պիտի պատճառուին օձին թունալից խայթումովը: Որքան
կ'ուրախանայ այս մարդը երբ կը հասկնայ թէ ինչ որ
օձ կարծած էր, չուան մըն է եղեր: Իր վախին պատ-
ճառը պէտք է փնտուկ իր սխալին, իր ազիտութեան,

իր խաբկանքին մէջ: Եթէ հասկցուի չուան ըլլալը, իր
նախկին խաղաղութիւնը իրեն կը վերադառնայ, ան ա-
զատած պիտի զգայ. ուրախ և երջանիկ պիտի ըլլայ:

26. «Այս է ահա միտքի վիճակը այն մարդուն որ
ճանչցած է թէ չկայ ևս թէ իր բոլոր նեղութիւններուն,
հոգեբուն և ունայնասիրութիւններուն բուն պատճառը
կրկնեւեւոյթ մըն է, ստուեր մը, երազ մը:

27. «Երջանիկ է այն որ յարժամ է անձնասիրու-
թեան, երջանիկ է ան որ խաղաղութիւն ձեռք ձգած է.
Երջանիկ է ան որ գտած է ճշմարտութիւնը:

28. «Ճշմարտութիւնը աղնիս և քաղցր է, ճշմար-
տութիւնը կրնայ փրկել քեզ չարէն: Այնպիսի վրայ չկայ
փրկիչ բացի ճշմարտութիւնէ:

29. «Վատահէ ճշմարտութեան, թէպէտ չկրնաս
հասկնայ զայն, թէպէտ իր քաղցրութիւնը զաւանութիւն
ենթադրես, թէպէտ ատաջին անգամ խաչնիս անկէ: Վրա-
տահէ ճշմարտութեան:

30. «Ճշմարտութիւնը յաւազոյն է իր եղած վիճակին
մէջ: Ոչ մէկը չի կրնար փոխել զայն, ոչ մէկը չի կրնար
կատարելագործել զայն: Հաւատա ճշմարտութեան և
սպրէ ճշմարտութիւնը:

31. Սուտերը կը մորթեցնեն, խաբկանքները թըշ-
ուառութիւն կը ծնին: Անոնք կը գինովցնեն զօրաւոր
ըմպելիներու նման, բայց չուսով կ'անոյնին և քեզ հի-
ւանդ և յափրացած կը թողուն:

32. «Անձը ջերմ մըն է. անձը վազանցիկ տեսիլք
մըն է, երազ մը. բայց ճշմարտութիւնը գեղեցիկ է,
ճշմարտութիւնը վտեմ է, ճշմարտութիւնը յախտեանական
է: Չկայ անմահութիւն բացի ճշմարտութեան մէջ: Որով-
հետեւ ճշմարտութիւնը միայն յախտեան կը տեսէ»:

33. Երբ քարոզը լինցաւ, Քատնտինեայ, հինգ

աշակերաններուն ամենէն տարեցը , իր իմացական աչքով տեսաւ ճշմարտութիւնը և ըսաւ . ճշմարտապէս , ով Պուլտասայ , մեր Տէրը , դուն գտած ես ճշմարտութիւնը» :

34. Եւ հրեշտակները , սուրբերը և մեռնողներուն հոգիները սրանք կրկին, քէն իջած էին Թաթակաթայի քարոզին ունկնդրելու համար , վարդապետութիւնը ընդունեցին և աղաղակեցին . «Ճշմարտապէս Օրհնեալ Պուլտասն հիմնած է ճշմարտութեան թագաւորութիւնը : Պուլտասը չարժամ է աշխարհը , ան ճշմարտութեան անիւր չարժամ մէջ գրած է , չարժամ մը որ ոչ մէկը , ըլլայ ան աստուած կամ մարդ , չէ կարող կեցնել : Ճշմարտութեան թագաւորութիւնը պիտի քարոզուի կրկին իրայ , ան պիտի տարածուի և արդարութիւն , բարի կամեցողութիւն և խաղաղութիւն պիտի իշխեն մարդկութեան մէջ» :

ԺԳ. ԲԱՃԱԿՐԻՆՆԻ ՔԱՐՈՉԸ

1. Պուլտասը շատ մը աշակերաններու ընկերակցութիւնով Լաճակրիճա գնաց . հին թագաւորը լսելով Պուլտասի գալուստը , Պուլտասի քով եկաւ և անոր հետ խօսիլ ուղեց : Պուլտասը տեսնելով որ լաւ առիթ մը ներկայացած է վարդապետութիւնը քարոզելու , ըսաւ թագաւորին Պին պիչարի . —

2. «Ան որ գիտէ իր անձին ընտելութիւնը , և գիտէ թէ ինչ կերպով կը գործեն իր զգայարանները , այնպիսին տեղ չի գտներ եսին (Յ) համար , և այնպիսին անպիսուսան խաղաղութեան կը տիրանայ : Աշխարհ եսի մտածումը կը բռնէ , և այդ մտածումէն յառաջ կուզան սխալ բնութեամբներ :

3. «Ոմանք կ'ըսեն թէ եւր մահէն վերջ կ'ապրի , ոմանք կ'ըսեն թէ կը ջնջուի : Ասանց կրկուքն ալ սխալած են և իրենց սխալմունքը շատ ծանրակշիւ է :

4. «Որովհետեւ , անոնք որոնք կ'ըսեն թէ եւր կը ջնջուի , կը մեռնի մահէ վերջ , պէտք է ընդունին նաև թէ իրենց հետապնդած արդիւնքներն ալ պիտի ջնջուին այդ պարագային . և պիտի գայ ժամանակ մը երբ անդէնտութիւն պիտի չգանուի : Մեղապից անձնասիրութեան պիտի փրկութիւնը առանց արժանիքի բան մըն է :

5. «Իսկ անոնք որ կ'ըսեն թէ եւր չի մեռնիր մահէ վերջ , անոնք ալ պէտք է ընդունին թէ լսելու կեանքի և մահուան մէջ միակ նոյնութիւն մը կայ , անձնուղ և անմեռ : Եթէ այսպէս է իրենց եւր , հետեւաբար կատարեալ է ան և աւելի չի կրնար կատարելագործուիլ գործերով : Տեսական , անմեռ եւր կրէք չի կրնար փոխուիլ : Ան ատեն եւր տէր և իշխան պիտի ըլլայ , և կատարեալը կատարելագործելու մէջ օգուտ մը պիտի չըլլայ բնակահարար . բարոյական նպատակներ և փրկութիւն անհարկի են :

6. «Բայց մենք կը տեսնենք ուրախութեան և վիշտի նշաններ : Ո՛ւր կայ ո և է մշտտեւութիւն : Եթէ ես մը չէ որ մեր գործերը կը կատարէ , ես չկայ ուրեմն , մեր գործերուն ետին ես մը չկայ , մեր միտքին ետեւ ըմբռնող մը . մեր կեանքին ետեւ չկայ տէր մը :

7. «Արդ մտիկ ըրէ : Զգայարանները կը հանդիպին առարկաներու և անոնց հանդիպումէն զգացողութիւն յառաջ կուգայ : Զգացողութեան կը ծնի յիշողութիւն : Այսպէս , ինչպէս որ արեւին զօրութիւնը խոշորացոյցի մը մէջէն կրակ կ'երեւցնէ , այնպէս ալ զգայարաններէն և առարկաներէն ծնած ծանօթութեան ընդմէջէն կը ծնի այն տէրը , իշխանը որ դուն ես կը կոչես : Ընծիւղը

սերմէն կը ծագի . սերմը ընձիւղը չէ . երկուքը նոյն բանը
և մէկ չին , բայց տարբեր ալ չեն : Այսպէս կը ծնի նաև
կեանքը կենդանի էակներու :

8. «Դուք որ գերիներ էք եսի , որ առաւօտէն մինչ-
չև երիկուն եսին ծառայութեան մէջ էք , դուք որ
ծնունդի , ծերութեան , հիւանդութեան և մահուան մըչ-
անջկնական վախին մէջն էք , ընդունեցէք բարի լուրը
թէ ձեր իշխանը գոյութիւն չունի :

9. «Եւր խորկանք մըն է . սխալ մը , երազ մը :
Բացէք աչքերնիդ և արթնցէք : Տեսէք իրերը իրենց
եղածին պէս և պիտի մխիթարուիք :

10. Ան որ արթուն է , խրտուկակներէն չի վախ-
նար : Ան որ չունանին բնութիւնը հասկցած է , հասկցած
է թէ ան օձ մը չէ , և կը դադրի դողալէ :

11. «Ան որ գտած է թէ եւր գոյութիւն չունի ,
եսապաշտութեան բոլոր ցանկութիւնները և տենջերը
պիտի թողու :

12. «Առակներու փարկը , ազահութիւնը , և հեշ-
տամիրութիւնը , որոնք ժառանգուած են նախնի կեանքէ ,
թշուառութեան և ունայնութեան պատճառներն են :

13. «Թ՛ո՛ղ քու անձնասիրութիւնդ բռնող ցանկա-
ցող բնութիւնը և պիտի ստանաս այն անմեղ և խաղաղ
միտքի վիճակը որ կը պարունակէ կատարեալ անդորրու-
թիւն , բարութիւն և իմաստութիւն :

14. «Ինչպէս մայր մը նոյնիակ իր կեանքը վտանգի
ենթարկելով կը պաշտպանէ իր զաւակը , իր միակ զա-
ւակը , այնպէս ալ թ՛ո՛ղ ան որ ճանչցած է ճշմարտու-
թիւնը , բարի կամեցողութիւն մշակէ հանդէպ բոլոր
կենդանի էակներու , առանց չափի :

15. «Թ՛ո՛ղ բարի կամեցողութիւն մշակէ հանդէպ

բոլոր աշխարհին , անխառն , անաչտու , բարի կամեցողու-
թիւն :

16. «Թ՛ո՛ղ մարդ միտքի այս վիճակին մէջ հաստա-
տուն մնայ , մինչ արթուն է , իր կայնած , քաղած , նըս-
տած կամ պառկած ժամանակ :

17. «Սիրաի այս վիճակը լաւագոյնն է աշխարհի
մէջ : Ան Նիրվանան է :

18. «Թ՛ողուլ ամէն տեսակ սխալ գործեր , առաքինի
կեանք մը վարել , և սիրտը մաքրել : Այս է աճա բոլոր
Պուստոսներու կրօնքը» : Թազաւորը այս խօսքերը լսելէ
վերջ Պուստոսայի աշակերտ եղաւ և ճաշի հրաւիրեց զայն :

ԺԳ. ԺՈՂՈՎՈՒԲԳԸ ԿԸ ԴԺԳՈՂԻ

1. Երբ ժողովուրդը տեսաւ թէ շատ մը նշանաւոր
երիտասարդներ . կրօնական կեանք կը վայելէին Պուս-
տայի սուաջնորդութեան տակ , զայրացան և արանջեցին .
«Կօթամա Սաքիամունի կը ստիպէ հայրեր թողուլ իրենց
կիները , և ընտանիքներու ջնջման պատճառ կ'ըլլայ :»

2. Երբ Պուստայի աշակերտները կը տեսնէին , կ'ա-
նարգէին զանոնք ըսելով . «Մեծ Սաքիամունին Բաճակ-
րիհա եկած է մարդերու միտքերը գերելու համար :
Սըղեօք ո՛վ պիտի ըլլայ յաջորդ գերին :»

3. Աշակերտները այս բանը պատմեցին Պուստայի ,
և Պուստայ պատասխանեց . «Այս արտունջը , ո՛վ աշա-
կերտներ , շատ երկայն չի տևեր : Միայն եօթը որ պիտի
տևէ : Եթէ անոնք նախատեն ձեզ , այսպէս պատասխա-
նեցէք :

4. «Ճշմարտութիւնը քարոզելով է որ թակաթան-

ները կ'առաջնորդեն մարդերը : Ո՞վ կրնայ արանջայ լուսաւորուններուն համար : Ո՞վ կրնայ պախարակել առաքինին : Անձնակառավարութիւն , արդարութիւն և մարտը սիրտ կը պահանջէ մեր Տէրը :

ԺԵ. ԱՆԱԹԱՓԻՆՏԻԲԱ

1. Այս ժամանակ Անաթափինտիքաւ անուն շատ հաճարուտ մարդ մը կար , որ եկած էր Լաճակրինան այցելելու : Այս մարդը շատ մարդասէր ներարդի մը ունենալով «Որբերուն պաշտպանը և աղքատներուն բարեկամը» կոչուած էր : Այս մարդը լսելով որ Պուտտան աշխարհ եկած է և թէ քաղաքին մէջ գտնուող անտառին մէջ կեցած է , նոյնիսկ գիշերանց ճամբայ ելաւ Պուտտան տեսնելու համար :

2. Պուտտայ անմիջապէս տեսաւ Անաթափինտիքայի սիրտին չքնաղ յատկութիւնը և զայն ողջունեց կրօնական միտքարութեան խօսքերով : Անոնք միասին նստան , և Անաթափինտիքաւ ուկնդրեց ճշմարտութեան քաղցրութեան : Եւ Պուտտայ ըսաւ . —

3. «Աշխարհի անհանդարտ , զբաղ վիճակը , ահա ինչ որ ես կը յայտարարեմ իրր ցաւի արմատը ստացէք մաքրի այն անդորրութիւնը որ անմահութեան խաղաղութեան մէջ կը գտնուի : Անձը ուրիշ բան չէ , այլ միայն բաղադրեալ յատկութիւններու շեղ մը : Եւ անձին աշխարհը պարտաւ է ցնորքի մը նման :

4. «Ո՞վ է որ կը կերպաւորէ մեր կեանքերը : Իշխարան կամ Անձնական Արարարի՞չ մը : Եթէ անձնական Աստուած մըն է արարիչը աիեղերքին և կերպաւորողը մեր կեանքին , բոլոր կենդանի արարածներ ստիպ-

ուած են իրենց արարիչին կեամքին հպատակիլ : Անոնք անօթներ պիտի ըլլան Արարչին ձեռքը , ինչպէս կաւը Բրուտի ձեռքին մէջ : Եւ եթէ այսպէս ըլլար , ինչպէս կարելի է առաքինութիւն : Եթէ աշխարհը իշխարայի «Անձնական Արարչի մը կողմէ ստեղծուած է , ան տան պէտք չէ գոյութիւն ունենայ վիշտ , դժբախտութիւն կամ մեղք . որովհետեւ թէ՛ մարտը և թէ՛ անմարտը բաները անկէ պէտք է եկած ըլլան : Եթէ ոչ , ուրիշ պատճառ մը պէտք է գոյութիւն ունեցած ըլլայ իր քով և այդ պարագային ինք ինքնագոյ չպիտի ըլլայ : Այսպէս կը տեսնես որ Անձնական Արարիչի մը գաղտնիքը կը տապալի :

5. «Գարձեալ կ'ըսեն թէ բացարձակը ստեղծած է մեզ : Բայց ան որ բացարձակը է , չի կրնար պատճառ մը ըլլալ : Մեր շուրջը գտնուած բոլոր բաները կը ծագին պատճառէ մը այնպէս ինչպէս բոյսը կը ծագի սերմէն : Բայց ինչպէս կրնայ բացարձակը ամէն բանի պատճառը ըլլալ . եթէ բացարձակը կը թափանցէ ամէն բանի , ամէն բանի մէջ ներգոյ է , ան տան , որտէ է թէ բացարձակը չի չինք , չստեղծեր գաննք :

6. «Գարձեալ կ'ըսեն թէ Անձն է մեզ ստեղծողը : Բայց եթէ Անձն է ստեղծողը , ինչու համար ամէն բան հաճելի չէ ստեղծած : Վիշտի և ուրախութեան պատճառները իրական և առարկայական են : Ինչպէս կրնային ստեղծուած ըլլալ անձին կողմէ :

7. «Գարձեալ , եթէ այս փաստարանութիւնը որդեկրենք , չկայ ստեղծող . մեր ճակատագիրը այն է ինչ որ է . չկայ պատճառականութիւն , ինչ չա՛ն կայ մեր կեանքերը կերպաւորելու և միջոցները վախճաններու պատճառներու մէջ :

8. «Այդ պատճառով մենք կ'առարկենք , կը փաստարանենք թէ ինչ որ գոյութիւն ունի առանց պատճառ-

ուի չէ : Բայց և այնպէս , ոչ Անճնական Արարիչ մը , ոչ բացարձակը , ոչ ետը , ոչ բաղդը չեն մեր ասեղծոյնները , այլ մեր գործերը կ'արտադրեն թէ՛ բարի և թէ՛ չար արգիւնքներ :

9. «Ամբողջ աշխարհը պատճառականութեան օրէնքին ենթակայ է , և գործող պատճառները ան-խմաստ (un-mental) չեն , որովհետեւ , ոսկին ուրիշ գաւաթը չինուած է , ամբողջովին ոսկի է :

10. «Թողունք ուրեմն , Իշխարի (Անճնական Արարիչի մը) երկրպագելու , պաշտելու հերետիկոսութիւնը և անոր աղօթելը . չկորսնցնենք ինքզինքնիս անօգուտ խնկումներու և մատխոհութիւններու մէջ . լքենք անձը և անճնատիրութիւնը , և քանի որ ամէն բան որոշուած է պատճառականութեան օրէնքով , բարի գործադրենք որպէսզի բարի արգիւնքներ ծագին մեր գործունէութիւններէն :»

11. Եւ Անաթառիմաիքա ըսաւ . «Վը տեսնեմ թէ դուն Պուտտայ ես , Օրհնապը և Սուբբը , և ես կը փափաքիմ իմ ամբողջ հոգիս բնաւ քո առջևդ : Լսէ իմ խօսքերուս և ինձի ինչ ընկելքս զրուցէ :

12. «Իմ կեանքս լեցուն է գործով , և չատ հարստութեան արիւսցած ըլլալով , չըջապատուած եմ չատ հոգեբով : Այսու հանդերձ կը սիրեմ գործս և եռանդով փարած եմ գործիս : Շատ մը մարդեր իմ գործիս մէջ են և իմ գործերուս յաջողութիւնէն կախուած են :

13. «Արդ լսած եմ որ քու աշակերտներդ կը փառասանեն առանճնակեցութեան , ճգնաւորութեան օրհնութիւնը և մերժած են աշխարհի անճանգատութիւնը : «Սուբբ Պուտտան , կ'ըսեն անոնք , լքած է իր թագաւորութիւնը , իր ժառանգութիւնը և գտած է արդարու-

թեան ճամբան . և այսպէս օրինակ մը տուած է աշխարհին թէ ինչպէս պէտք է Նիրվանան ձեռք ձգել» :

14. «Իմ հոգիս կ'ըջայ ընկ ինչ որ ուղիղ է և կ'ուղէ օրհնութիւն մը ըլլալ իր ընկեր-արարածներուն : Թող որ հարցնեմ քեզի , ուրեմն պէտք է որ լքեմ հարստութիւնս , ընտանիքս և գործս և քեզի պէս անտուճութեան զիմկ կրօնական կեանքի մը օրհնութիւնը ձեռք ձգելու համար» :

15. Եւ Պուտտայ պատասխանեց . — «Կրօնական կեանքի մը օրհնութիւնը կրնան ստանալ ամէն անոնք որոնք ութը ազնիւ ճամբաններուն մէջ կը քալեն : Ան որ ամուր կերպով փարած է իր հարստութեան , աւելի բաւ է որ թողու իր հարստութիւնը քան թէ թողու որ այդ հարստութիւնը թունաւորէ իր հոգին , բայց ան որ ամուր չի փարիր իր հարստութեան և իր հարստութիւնը ուղիղ կերպով կը գործածէ , այնպիսին օրհնութիւն մը պիտի ըլլայ իր ընկեր-արարածներուն :

16. «Կ'ըսեմ քեզի , կեցիր քու ունեցած զիրքիդ մէջ և եռանդազին փարէ գործիդ : Կեանքը , հարստութիւնը և զօրութիւնը չէ որ կը գերեն մարդերը , այլ կեանքի , հարստութեան և զօրութեան սերտօրէն փառումը :

17. «Այն աշակերտը որ աշխարհէն կը հրաժարի ծուլութեան և անգործութեան կեանք մը վարելու համար , այնպիսին շահ մը չունենար : Որովհետեւ հեղգ կեանք մը զգուցելի է . և զօրութեան պակասը պակաս լակուելու է :

18. «Թաթակաթաներու կրօնքը չի պահանջեր որ մարդեր անանութեան զիմն և հրաժարին աշխարհէն , նիթէ մարդը կոչուած չզգար աշխարհէն հրաժարելու . այլ Թաթակաթաներու կրօնքը կը պահանջէ որ ամէն մարդ

ինքզինքը ազատ անձի խարկանքէն, մաքրէ իր սիրտը, թողու հաճոյստութեան ծարաւը, և արդար կեանք մը վարէ:

19. «Եւ ինչ որ կ'ընեն մարդեր, արհեստաւորներ, վաճառականներ, պաշտօնականներ, ըլլան թէ կրօնական կեանք մը վարելու նաւիրուած, թող անոնք իրենց ամբողջ սիրտը դնեն իրենց գործին մէջ, թող գործունեայ ըլլան և աշխոյժ. և եթէ անոնք լուտապէս նման կ'ապրին աշխարհի մէջ, առանց աշխարհի աշտատութիւններէն ազդուելու, եթէ մարդեր կը պայքարին կեանքի մէջ առանց ատելութիւն և նախանձ մտուցանելու իրենց մէջ, եթէ անոնք կ'ապրին ոչ թէ անձնատիրութեան կեանքը այլ ճշմարտատիրութեան կեանքը, ան ատեն վստահաբար, ուրախութիւն, խաղաղութիւնն, երանութիւն պիտի բնակին անոնց ժառքերուն մէջ»:

ԺԶ. ՍԻՐՈՅ ՔԱՐՈՉԸ

1. Արաթախինտիքա ուրախացաւ Պուտայի խօսքերուն վրայ և բտաւ. «Ես Քօտայի մայրաքաղաքին Շթալաթի մէջ կը բնակիմ. մեր երկիրը շատ հարուստ է արդիւնքներով և խաղաղութիւնով. Փրասէնաձիթ մեր մեր երկրին թագաւորն է և իր անունը նշանաւոր է թէ մեր ժողովուրդին և թէ մեր զբայներուն մէջ: Արդ, ես կը փախաքիմ հոն վանք մը չինել Պուտոտայական եղբայրութեան կրօնական հաւաքումներուն և երկրպագութեան համար և կը խնդրեմ որ բարեարտօրէն ընդունիք իմ փախաքս»:

2. Պուտայ որբերու պաշտպանին սիրտը հասկցաւ.

և տեսնելով որ անանձնատէր բարերարութիւնն էր անոր ընծային շարժառիժը, ընծան ընդունելով այսպէս բտաւ:

3. «Բարերար մարդը սիրելի է ամէնուն, իր բարեկամութիւնը մոծապէս կը գնահատուի, այնպիսին երբ մեռնի, հանդարտ է և ուրախալի, որովհետեւ այնպիսին սպաշխարութենէ չի տատայիր, ան իր վարդապետութեան բացւող ծաղիկը կ'ընդունի և անկէ հասնող պլտուղն ալ:

4. «Դժուար է հասկնալ թէ ի՞նչ կը նշանակէ ըսել. «Մեր կերակուրը ուրիշին սաղով աւելի գորտութիւն կ'ըստանանք, ուրիշներուն հանգերձ հազցնելով աւելի գեղեցկութիւն կ'ըստանանք, մաքրութեան և ճշմարտութեան համար բնակարաններ կառուցանելով աւելի գանձ կը ստանանք»:

5. «Բարերարութեան մէջ յատուկ ժամանակ մը և յատուկ եղանակ մը կայ. ճիշդ ինչպէս որ հզօր պատրազմիկը ճակատամարտի կ'երթայ, այնպէս է այն մարդը որ կարող է սաղ, այնպիսին հզօր պատերազմիկի մը նման է, զօրաւոր հերոս մը, և գործի մէջ խմաստուն:

6. «Այնպիսին սիրով և արգահատանքով կուտայ, վտարելով ամէն ատելութիւն, նախանձ և բարկութիւն: Սիրող, բարերար մարդը գտած է փրկութեան ճամբան: Այնպիսին կը նմանի մարդու մը որ նոր տունկ մը անկէ և այդ կերպով կ'ապահովէ չուք, ծաղիկ և պտուղ ապագայ տարիներու համար: Այսպէս է նաև սիրոյ արդիւքը, այսպէս է ուրախութիւնը այն մարդուն որ կ'օգնէ կարօտներուն. այսպէս է մեծ նիրվանան:

7. «Մենք անմահութեան ճամբուն կրնանք հասնիլ միայն շարունակական բարերարութեան գործերով, և մենք մեր հոգիները կը կատարելագործենք սիրոյ և կարեկցութեան միջոցով միայն»:

ԺԷ. ՊՈՒՏՏԱՅԻ ՀԱՅՐԸ

1. Պուտտայի Թաճակրիճայի մէջ բնակած պահուն, իր հայրը Շուտհոտանա լուր գրիկեց անոր բսելով. «Կը փափաքիմ մեռնելէ առաջ գաւակս տեսնել: Ուրիշները վայելեցին իր վարդապետութեան բարիքները, բայց իր հայրը և ազգականները գրկուեցան անկէ:

2. Եւ պատգամաբերը ըսաւ. «Ով ակեղերայարգ Թաթակաթա, քո հայրդ գալուդ կը սպասէ այնպէս ինչպէս շուշանը կը սպասէ արեւի ծագելուն»:

3. Պուտտայ իր հօրը աղաչանքին լսելով՝ որոշեց անոր երթալ և Քափիկաթաթու գնաց: Անմիջապէս Պուտտայի գալուն լուրը տարածուեցաւ ամէն կողմ. «Իշխան Սիտհարթան, որ տունէն հեռացած էր լուսաւորութիւն ստանալու համար, իր նպատակին հասած ըլլալով վերադարձած է»:

4. Շուտհոտանա իր ազգականներուն և աւագանիներուն հետ ճամբայ ելաւ իր որդին, գիմաւորելու համար: Երբ թագաւորը հեռուէն տեսաւ իր որդին ապշեցաւ տեսնելով անոր փառքն ու գեղեցկութիւնը, և սրտանց ուրախացաւ, բայց իր բերանը ըսելիք չգտաւ:

5. Ան անչուշտ իր որդին էր, ասոնք իր որդիին կերպարանքն էին: Որքան մօտ էր մեծ ճգնաւորը իր սիրաին, այսու հանդերձ ինչ հեռաւորութիւն անոնց մէջտեղ: Այդ աղին խմաստունը այլևս Սիտհարթա, իր գաւակը չէր. ան Պուտտան էր, Օրհնալը, Սուրբը, ճշմարտութեան Տէրը և մարդկութեան ուսուցիչը:

6. Շուտհոտանա, իր գաւակին կրօնական վեհութիւնը նկատելով, իր կտաքէն իջաւ և նախ բարեւելով իր որդին

ըսաւ. «Ահա եօթը տարի է որ քեզ չեմ տեսած: Որքան կը տենչայի այս վայրկեանին»:

7. Պուտտայ նստաւ իր հօր դիմաց և թագաւորը կաթողին կը դիտէր իր որդին: Ան կը փափաքէր իր որդին բուն իսկ իր անունովը կոչել, բայց չէր համարձակէր: «Սիտհարթա» բացազանչեց ան լսիկ իր սիրտին մէջ, «Սիտհարթա, դարձիր քու հօրդ և անոր գաւակը լեղի դարձեալ»: Բայց տեսնելով իր գաւակն որոշումը, զպեց իր զգացումները և յունահաստութիւնը ճնշեց զայն:

8. Այսպէս թագաւորը դէմ դիմաց նստաւ իր գաւակին, ուրախանալով իր արտմութեանը մէջ, և արտում իր ուրախութեանը մէջ: Էաւ կրնար պարծիլ իր գաւակով, բայց իր պարծանքը ջախջախուեցաւ երբ խորհեցաւ որ իր մեծ գաւակը կրեք իր ժառանգը չպիտի ըլլայ:

9. «Ես իմ թագաւորութիւնս քեզի պիտի տալի, բայց գիտեմ թէ եթէ տուած ըլլայի, դուն զայս մօխի միայն պիտի նկատէիր»:

10. Եւ Պուտտայ ըսաւ. «Գիտեմ թէ թագաւորին սիրաը ապի է սիրով, և թէ իր որդիին սիրոյն համար խոր վիշտ կը զգայ: Բայց թող սիրոյ այն կապերը որ քեզ կը կապեն քու կրօնացուցած գաւակիդ, քեզ կապեն հաւասարապէս քու բոլոր ընկեր-արարածներուդ, և այս կերպով քու գաւակիդ տեղ աւելի մեծ մէկը պիտի ընդունիս, Պուտտան պիտի ընդունիս, ճշմարտութեան ուսուցիչը, արդարութեան քարոզիչը և Նիրվանայի խաղաղութիւնը սիրաիդ մէջ բոյն պիտի դնէ»:

11. Շուտհոտանայ ուրախութեան սարսուռ մը զգաց լսելով իր որդիին մեղանոջ խօսքերը և ծափելով իր ձեռքերը, արտասուալից աչքերով բացազանչեց. «Չար-

մանալի է այս փոփոխութիւնը: Ընչող վիշտը անցած է: Նախապէս իմ վշտացած սիրտս ծանր էր, բայց այժմ քու հրածեչափն, անձնուբացութեանդ պտուղը կը քաղեմ: Արդար էր որ, յուզուած քու հզոր համակրութիւնովդ, մերժէ իր արքայական զօրութեան բոլոր գանձերը և հաննէ իր քու սպնիւ նպատակիդ կրօնական նուիրումի մէջ: Ծամբան գտած ըլլալով, այժմ կրնաս անմահութեան օրէնքը քարոզել բոլոր անոնց որոնք փրկութեան կը տենջան:

12. Թագաւորը պալատ վերադարձաւ և Պուստայ քաղաքին առջեւ գտնուած անտառին մէջ մնաց:

ՊՈՒՏՏԱՅԻ ԿՐՕՆՔԻՆ ՀԱՍԱՏՈՒԻԼԸ

ԺԸ. ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ՎԱՐՄՈՒՆԻՔԸ ՀԱՆԳԷՊ ԿԻՆԵՐՈՒ

1. Աշակերտները Պուստայի եկան և հարցուցին անոր. —

2. «Ով Թաթակայթայ, մեր Տէրը և Վարդապետը, ի՞նչ ըլլալու է մեր վարձուները հանգէպ կրներու»:

3. Եւ Պուստայ ըսաւ. «Զգուշացէք կնկան նայելէ:

4. Եթէ կին մը տեսնէք զայն չտեսածի պէս եղիք, անոր հետ մի խօսիք:

5. «Բայց վերջապէս եթէ ստիպուիք խօսիլ անոր հետ, խօսեցէ՛ք մաքուր սրտով մը և ըսէ՛ք ինքզինքնուդ. «Ես իբր ձգնաւոր մը այս մեղապից աշխարհին մէջ պիտի ապրիմ, ինչպէս լուստաին ամբիժ տերեւը կ'ապրի, առանց աղատանդու այն ցեխէն՝ որուն մէջ կ'աճի»:

6. «Եթէ կինը ձեր ըլլայ, զայն ձեր մայրը նկատեցէ՛ք. եթէ երիտասարդ է, ձեր քոյրը, իսկ եթէ մանուկ, ձեր զաւակը կանչեցէ՛ք զայն»:

7. «Այն ձգնաւորը որ կնկան մը կը նայի իբր կին կամ կնկան մը կը հպի իբր կին, այնպիսին դրժած, կոտրած է իր ուխտը, և Սաքիսամունիի աշակերտ մը չէ այլևս»:

8. Մարդերու ցանկութեան զօրութիւնը շատ մեծ է, և ատոր համար պէտք է վախնայ անկէ. զինուեցեք ուրեմն յարատեւութեան նետովը և իմաստութեան նիզակովը:

8. «Ծածկեցէ՛ք ձեր գլուխը ուղիղ մտածումներու դրահով, և հաստատ որոշումով կուտեցէ՛ք հինգ տանջերուն դէմ»:

9. «Յանկութիւնը կ'ամպտտէ մարդուն սիրտը, երբ ան կը շփոթի կնկան գեղեցկութիւնով և միտքը կը շատնայ»:

10. «Աւելի լաւ է որ տաքցուած, կարմրած երկաթներով հանն քու աչքերդ, քան քու մէջդ ցանկաւսէր, հեշտասէր խորհուրդներ տածես, և կամ կնկան մը նայիս ցանկասէր տենջերով»:

11. «Աւելի լաւ է վայրագ վագրին բերանը խնայ կամ աւելի լաւ է դահճին սուր դանակին ենթարկուել, քան կնկան մը հետ բնակիլ և քու մէջդ ցանկասէր վախաքներ սնուցանել»:

12. «Աշխարհիկ կին մը կ'ուզէ իր գեղեցկութիւնը և կերպարանքը ցուցադրել, քալած, կեցած, նստած կամ քնացած պահուն իսկ: Նոյն իսկ իբր նկար մը ներկայացուցուած ժամանակ, ան կը տենջայ գերել իր գեղեցկութիւնովը, և այսպէս կողոպտել մարդերը իրենց հաստատ սիրտերէն»:

13. «Ի՛նչպէս, ուրեմն, պիտի պաշտպանէք ինքզինքնիդ»:

14. «Անոր արցունքները և ժպիտները թշնամիներ նկատելով, անոր խոնարհող մարմինը, անոր կախուող բազուկները, և անոր արձան մազերը նկատելով ոչ ուրիշ բաներ, այլ ծուղակներ մարդկային սիրտին համար»:

15. «Հետեւարար կ'ըսեմ, զսպեցէ՛ք սիրտերնիդ, անոր անասնձ ազատութիւն մի՛ տաք բնաւ»:

ԺԹ. ԵՐԿՊԱՌԱԿՈՒԹԻՒՆԸ

1. Մինչ Պուտտայ Բօրամպի մէջ կը բնակէր, աշակերտ մը յանցանքով մը ամբաստանուեցաւ, և քանի որ ամբաստանալը կը մերժէր ընդունիլ իր յանցանքը, եղբայրութիւնը արտաքսումի վճիռ մը արձակեց անոր դէմ»:

2. Այս աշակերտը հմուտ մէկն էր: Ան գիտէր ճըշմարտութիւնը, ուսումնասիրած էր միաբանութեան կանոնները և իմաստուն, ուսեայ, մտացի, համեստ, զիտակից և պատրաստ էր պատիժի ենթարկուիլ: Եւ աշակերտներուն մէջ գտնուած իր բարեկամներուն կրթալով ըսաւ. «Ասիկա յանցանք մը չէ, բարեկամներ, ասիկա պատճառ մը չէ արտաքսումի վճիռի մը համար: Ես յանցաւոր չեմ: Վճիռը անասնամաղրական և սպորինի է: Հետեւարար ես ինքզինքս միաբանութեան մէկ անդամը կը նկատեմ տակաւին: Թող մեծապարզ եղբայրները օգնեն ինձի իրաւունքիս աէր ըլլալու համար»:

3. Անոնք որ գաղտնիարակից էին արտաքսուած աշակերտին, արտաքսումին վճիռը սուտը եղբայրներուն գացին և ըսին. «Ասիկա յանցանք չէ»: Եւ արտաքսումի վճիռ արձակող աշակերտները կ'ըսէին «յանցանք մըն է»:

4. Այսպէս կուխներ և անձամաձայնութիւններ եղան, և Եկեղեցին (Սանկա) երկուքի բաժնուեցաւ, երկու աղանդներ որոնք մէկզմէկ կը պախարակէին և կ'ամբաստանէին:

5. Եւ այս բոլորը Պուտտայի պատմեցին:

6. Պուտտայ արտաքսումի վճիռը արձակող աշակերտներուն գնաց և ըսաւ անոնց. «Մի՛ խորհիք, ով աշակերտներ, թէ իրաւունք ունիք արտաքսումի վճիռ»:

արձակել աշակերտի մը հանդէպ, ըսելով թէ այսպէս կը խորհնիք «հետեւաբար այսպէս վարուիլ կը հաճինք մեր եղբօր հանդէպ: Թող աշակերտները որոնք թեթեւ կերպով արտաքուստի վճիռ կ'արձակեն այնպիսի աշակերտի մը հանդէպ որ գիտէ ճշմարտութիւնը և ուսումնասիրած է միաբանութեան կանոնները, որ ուսեալ, իմաստուն, մտացի, համեստ, գիտակից և պտորաստ է պատիժի ենթարկուելու, թող զգուշանան այնպիսիները, բաժանում պատճառելէ: Անոնք պէտք չէ արտաքուստի վճիռ արձակեն այնպիսի աշակերտի մը դէմ, որ սրբազայէս կը մերժէ տեսնել իր յանցանքը»:

7. Յետոյ Պուստոյ ելաւ և արտաքուստ աշակերտին համախոհներուն քով երթալով ըսաւ անոնց. «Մի՛ մտածէք, ով աշակերտներ, թէ երբ յանցանք գործած էք պէտք չէ որ զղջաք անոր համար, խորհելով «մենք յանցանք չունինք»: Երբ եղբայր մը յանցանք գործեր է, զոր ինք յանցանք չի նկատեր, մինչդեռ եղբայրութիւնը զինքը յանցաւոր կը նկատէ, ան պէտք է խորհի. Այս եղբայրները գիտեն ճշմարտութիւնը և միաբանութեան կանոնները, անոնք ուսեալ, իմաստուն, մտացի, համեստ, գիտակից են և պտորաստ պատիժի ենթարկուելու, անկարելի է որ ինծի համար անձնասիրութիւնով, ազանութիւնով, խորհութիւնով կամ վախով գործեն: Թող այնպիսի վախնայ բաժանում պատճառելէ, և թող ճանչնայ իր յանցանքը իր եղբայրներուն առջեւ»:

8. Երկու աշակերտներն ալ շարունակեցին Ուփափատման (Պուստոյական կիրակին) պահել, և պաշտօնական գործեր կատարել իրարմէ անկասօրէն, և երբ իրենց այս վարմունքը պատմուեցաւ Պուստոյի, ան ըսաւ թէ կիրակին պահելը և պաշտօնական գործերու

կատարումը օրինական էին, անառարկելի և օրինական երկու ազանդներու համար: Որովհետեւ ան կ'ըսէր. «Այն աշակերտները որոնք արտաքուստ աշակերտին համախոհ են, անոնք տարբեր յարանուանութիւն մը ունին իսկ արտաքուստները ուրիշ յարանուանութիւն: Երկու յարանուանուանութիւններու մէջ ալ յարգամեծար մարդեր կան: Քանի որ չեն համաձայնիր թող անջատօրէն Շաբաթը պահեն և պաշտօնական գործերը կատարեն»:

9. Եւ Պուստոյ յանդիմանեց կուուսէր աշակերտները և ըսաւ անոնց.

10. «Ռամիկ մարդեր շատ ազմուկ կը յարուցանեն. բայց ո՛վ կրնայ այսպնուիկ երբ Եկեղեցիին մէջ բաժանումներ երեւան կուգան: Ատելութիւնը չի մեղմացուիր այն մարդերուն մէջ որոնք կը խորհին, Ան զիս անարգած է, ան ինծի անիրաւութիւն ըրաւ, ան վրասեց ինծի»:

11. Որովհետեւ ատելութիւնը ատելութիւնով չի մեղմանար: Ատելութիւնը ոչ-ատելութիւնով կը մեղմանայ: Ասիկա յաւիտենական օրէնք մըն է:

12. «Մարդեր կան որոնք անձնագոյութեան պէտք չեն զգար. եթէ անոնք կուուսէր են, կրնանք ներել անոնց վարմունքը. բայց անոնք որ աւելի լաւ գիտեն, անոնք պէտք է միաբանութիւնով ապրին»:

13. «Եթէ մէկը կը գտնէ իմաստուն բարեկամ մը որ կ'ապրի արդարեւ հաստատ նկարագրով մը, ան կրնայ ապրիլ այդ բարեկամին հետ, յաղթելով բոլոր վրատանդները, երջանիկ և զգոյշ»:

14. «Բայց եթէ մարդ չի կրնար գտնել այսպիսի արդար և հաստատուն նկարագրի տէր բարեկամ մը, թող մինակ ապրի, նման թագաւորի մը որ կը թո-

գու իր թագաւորութիւնը՝ և ետ քաջուած, մեկուսացած կեանք մը վարելու համար մենաւոր վիճի մը նման :

15. «Յիմարներու հետ ընկերակցութիւն չկայ : Մարդ աւելի լաւ կ'ընէ առանձին ապրելով, քան թէ անձնասէր, հպարտ ու կռուասէր մարդերու հետ» :

16. Եւ Պուտտայ մտածեց ինքնիրեն. «Դիւրին գործ չէ այս պինդ գլուխ և յիմար մարդերը կրթել» : Եւ երաւ իր ամուսնու գնաց :

Ի. ՀՐԱՇԻ ԳՈՐԾԵԼԸ ԱՐԳԻՆՈՒՄՍՈ

1. Աշակերտները Վրիճի գիւղին մէջ էին, սովի մը ժամանակ : Եւ աշակերտներէն մէկը առաջարկեց որ իրար գովեն գիւղի ժողովուրդին առջև այսպէս ըսելով. «Այս աշակերտը սուրբ մըն է. ան կրկնային տեսիլքներ տեսած է. և թէ միւս աշակերտ մը գերբնական ձիրքերով օժտուած է և հրաշքներ կը գործէ» : Եւ գիւղացիները ըսին. «Երանի մեղի որ այսպիսի սուրբեր և հրաշագործ մարդեր մեզի հետ կը գտնուին» : Եւ ժողովուրդը կամքով և առատութեամբ ուտելիք տուաւ աշակերտներուն և անոնք սովէն չի նեղուեցան :

2. Երբ Պուտտայ թեց այս եղածը, Անանտայի ըսաւ որպէսզի աշակերտները իր մօտ հաւաքէ : Եւ ըսաւ աշակերտներուն. «Լսէ՛ք ինձի, ով աշակերտներ, աշակերտ մը երբ աշակերտ ըլլալէ կը դադրի» :

3. Եւ Շափիփուիրա պատասխանեց. «Աշակերտ մը պէտք չէ անհամեստ գործ մը ընէ : Անհամեստ գործ ընող աշակերտ մը այլևս Սաքիամունիի աշակերտը չէ :

4. «Դարձեալ, ձեռնադրուած աշակերտ մը պէտք չէ որ անէ ու և է բան, բացի ինչ որ կը արուի իրեն : Այն աշակերտը որ իրեն չի տրուած բան մը կ'անէ, հոգ չէ թէ ան մէկ փողի արժէք ունենայ, այլևս Սաքիամունիի աշակերտը չէ :

5. «Եւ վերջապէս, ձեռնադրուած աշակերտ մը պէտք չէ որ կամքով և չարասրտօրէն մտցնէ անվտանգ արարած մը, մինչև և իսկ որդ մը կամ մրջիւն մը : Այն աշակերտը որ զիտնալով և չարասրտօրէն կեանքէ կը զրկէ անվտանգ կենդանի մը, կը դադրի Սաքիամունիի աշակերտը ըլլալէ :

6. «Ասոնք են ահա երեք մեծ արգելումները» :

7. Եւ Պուտտան ըսաւ աշակերտներուն. «Ուրիշ մեծ արգելում մը կայ զոր ձեզի կը յայտարարեմ :

8. «Ձեռնադրուած աշակերտ մը պէտք չէ որ պարծի ու և է գերբնական կատարելութեան համար : Այն աշակերտը որ չար նպատակով և ազանութիւնով գերբնական կատարելութեան մը մասին կը պարծի, ըլլան այդ գերբնական կատարելութիւնները երկնային տեսիլքներ կամ հրաշքներ, այնպիսին այլևս Սաքիամունիի աշակերտը չէ :

9. «Կը պատուիրեմ ձեզ, ով աշակերտներ, չի գործադրել երբէք հմայութիւններ կամ մաղթանքներ, որովհետև ասոնք անօգուտ են. քանի որ գործի (քայմա) օրէնքը կը կառավարէ ամէն բան. քանի որ մեր գործերու արդիւնքը կը վայելէք, քանի որ կը հնձենք ինչոր կը ցանենք : Ան որ կը ջանայ հրաշքներ գործել, չէ հասկցած Թաթակաթայի վարդապետութիւնը» :

ԻԱ. ՏԱՌԱՊԱՆՔԻ ԱՆՔԱՅՈՒՄԸ

1. Եւ Պուտոայ ըսաւ . «Ի՞նչ է , բարեկամներս , չարիքը» . «Սպաննելը , իմ բարեկամներս չարիք է , չար է . գո՛ղալը չարիք է . սեռայլն՝ կիրքերու տեղի տալը չարիք է , ստելը չարիք է , ամբաստանելը չարիք է , բամբասելը չարիք է . նախանձը չարիք է . ատելութիւնը չար է , սխալ վարդապետութիւններու յարիւր չար է . բոլոր ասոնք , իմ բարեկամներս չար են և չարիք :
2. «Եւ ի՞նչ է չարիքի արմատը , իմ բարեկամներս :
3. «Տենջանքը , փափաքն է չարիքի արմատը . ասելութիւնն է չարիքի արմատը . խարկանքն է չարիքի արմատը . ասոնք են չարիքի արմատը» :
4. «Ի՞նչ է , սակայն , բարին» :
5. «Գողութենէ հրաժարիլը բարի է . զգայնամոլութենէ հրաժարիլը բարի է , սուտէ հրաժարիլը բարի է . ամբաստանութիւնը թողուլը բարի է . նախանձը թողուլը բարի է . ատելութիւնը թողուլը բարի է . ճշմարտութեան հնազանդիլը բարի է . այս բոլորը բարի են :
6. «Եւ ի՞նչ է բարիքի արմատը , բարեկամներս :
7. «Տենջանքէ ազատութիւնն է բարիքի արմատը , խարկանքէ և ասելութենէ ազատութիւնն է բարիքի արմատը , ասոնք , իմ բարեկամներս բարիքի արմատներն են :
8. «Ի՞նչ է , սակայն , տառապանքը , իմ բարեկամներս : Ի՞նչ է տառապանքի ծագումը , պատճառը : Ի՞նչ է տառապանքի անէացումը :
9. «Մ՛տնաղը տառապանք է , ծերութիւնը տառապանք է , հիւանդութիւնը տառապանք է , մահը տառապանք է , վիշտը և թշուառութիւնը տառապանք են ,

չարչարանքը և յուսահատութիւնը տառապանք են , զգուէլի բանկրու ընկերանաղ տառապանք է , մեր սիրածին կորուստը տառապանք է . մեր տենջացածին չի հասնիլը տառապանք է , բոլոր ասոնք , ով կըրայրներ տառապանք են :

10. «Եւ ի՞նչ է տառապանքի պատճառը , ով բարեկամներս :
11. «Յանկութիւնն է . կիրքն է . ապրելու տենջը որ հաճոյքի համար ծարաւի է ամէն տեղ և որ ամէն տեղ մէանջենական վերածնունդներու կ'առաջնորդէ : Զգայնամոլութիւնն է , տենջանքը , անճատիրութիւնը , ասոնք տառապանքի պատճառներն են , իմ բարեկամներս :

12. «Եւ ի՞նչ է տառապանքի անէացումը :
13. «Տառապանքի անէացումը այս ծարաւին , ապրելու այս տենջին , այս կիրքին անէացումն է . անոնցմէ ազատագրուումը , իմ կըրայրներս , տառապանքի անէացումն է :
14. «Եւ ի՞նչ է այն ճամբան որ տառապանքի անէացման կ'առաջնորդէ :
15. «Ուլթը սուրբ ճամբաներն են որ տառապանքի անէացումին կ'առաջնորդեն , ուղիղ տեսութիւն , ուղիղ որոշում , ուղիղ խօսք . ուղիղ դործ . ուղիղ կեանք . ուղիղ պայքար , ուղիղ խորհուրդներ , և ուղիղ խտրում» :

ԻԲ. ՏԱՍԸ ՊԱՏՈՒԻԲԱՆՔՆԵՐԸ

1. Եւ Պուտոայ ըսաւ . «Ապրող էակներու գործերը տասը բանով վտառ կ'ըլլան և տասը բանով լրաւ : Մարմինի երեք մեղքեր կան . լեզուի չորս մեղքեր և մտքի երեք մեղքեր :

2. «Մարմինն մեղքերն են : սպանութիւն , զոգոթիւն և չնութիւն , լեզուին մեղքերն են , ստութիւն , ամբաստանութիւն , նախատինք և բամբասանք : Միտքին մեղքերն են : նախանձ , ստեղծութիւն և սխալմունք :

3. «Հեռեւաբար ձեզի այդ պատուիրանքները կուտամ :»

4. Ա. — «Մի սպանէք . այլ հող ունեցէք կեանքի համար :

5. Բ. — «Մի գողնաք , ոչ ալ կողոպտեցէք , այլ օգնեցէք որ ամէն մարդ իր աշխատութեան սրտովն աւերը ըրայ :

6. Գ. — «Հրաժարեցէք անուրբ կեանքէ . և զգաստ կեանք մը վարեցէք :

7. Դ. «Մի ստէք , այլ ճշմարտասէր եղէք : ճշմարտութիւնը խօսեցէք խոհեմաբար , անկախ և սիրող սիրտով մը :

8. Ե. — «Սուտ լուրեր մի՛ հնարէք . ոչ ալ կրկնեցէք զանոնք : Մի՛ , պարսաւեր , այլ քու ընկերներուդ լաւ կողմերը ղիտէ , այնպէս որ կրնաս անկեղծութիւնով պաշտպանել զանոնք իրենց թշնամիներուն դէմ :


9. Զ. — «Երգում մի՛ ընէք , այլ պարկեշտ և յարգալիր խօսեցէք :

10. Է. — «Փամանակը բամբասանքով չաղակրատութիւնով մի՛ անցներ , այլ խօսէ նպատակով մը և կամ լուէ :

11. Ը. — «Մի՛ ցանկար , մի՛ նախանձիր , այլ ուրախացիր ուրիշներու յաջողութեան վրայ :

12. Թ. — «Սիրադ նենգութենէ մաքրէ և ստեղծութիւն մի տածեր նոյնիսկ քու թշնամիներուդ հանդէպ , այլ բոլոր կենդանի էակները բարեսրտութիւնով ընդզրկէ :

13. Ժ. — «Միտքդ աղխութենէ ազատէ , և ճշմարտութիւնը տրոփելու անձկացից կզիր , մասնաւորապէս ամէնէն աւելի հարկաւոր եզած բանին մէջ , եթէ ոչ զո՞ն կ'ըլլաւ կամ սկեպտիկութեան կամ ստութեան : Սկեպտիկութիւնը քեզ անտարբերութեան կ'առաջնորդէ , և ստութիւնը , սխալը կը մոլորեցնէ քեզ . այնպէս որ անկարող կ'ըլլաս յաւիտեանական կեանքի առաջնորդող ճամբան գտնելը :



ՊՈՒՏՏԱՅ ՈՒՍՈՒՑԻԶԸ



ԻԳ. ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՄՆԵՐ ԱՆԷԱՅՈՒՄԻ ԵՒ ՀՈԳԻՒՒ ՄԱՍԻՆ

1. Սիմնա անունով զօրապետ մը մօտեցաւ Պուտայի և ըսաւ. «Վարդապետ կ'ըսեն թէ կօթաման գործերու արդիւնքը կ'ուրանայ, անէութիւն կը քարոզէ. այդպէս, դուք մարդուն անէացո՞ւմը կը վարդապետէք. թէ ոչ անոնք որ այսպէս կ'ըսեն կը զրպարանն ձեզ»:

2. Պուտայ պատասխանեց. «Ով Սիմնա, ես կ'ուսուցանեմ թէ բոլոր սիրտի այն վիճակները որոնք չար են և ոչ բարի, գործով, խօսքով, խորհուրդով կատարուած անարդար գործեր, պէտք է այրուին, անէանան: Ես, Սիմնա կը յայտարարեմ ետախրութեան, ցանկութեան, չարակամութեան և խարէութեան անէացումը: Այսուհանդերձ ես չեմ յայտարարեր համբերութեան, սիրոյ, ողորմածութեան և ճշմարտութեան անէացումը»:

3. Եւ Սիմնայի արբանեակին մէջ պաշտօնեայ մը կար որ լսած էր Պուտայի և Սիմնայի միջեւ տեղի ունեցած խօսակցութիւնը, և տակաւին իր միտքէն տաբակոյսը ամբողջովին չէր փարստած:

4. Այս մարդը Պուտայի եկաւ և ըսաւ. «Կ'ըսեն թէ կօթամայ հողիին գոյութիւնը կ'ուրանայ: Անոնք որ այսպէս կ'ըսեն կը ստեն, կը զրպարանն արդեօք օրհնեայ Պուտայան, թէ ոչ ճշմարտութիւնը կը խօսին»:

5. Եւ Պուտայ ըսաւ. «Անոնք որ այսպէս կը խօսին, իմաստով մը ճշմարտութիւնը կը խօսին իսկ տարբեր իմաստով մը կը ստեն»:

6. «Թաթակաթա կ'ուսուցանէ թէ ես գոյութիւն չունի: Ան որ կ'ըսէ թէ հողին իր եմն է և թէ հողին խորհոյն է մեր խորհուրդներուն և գործողը մեր գործերուն, այնպիսին սխալ վարդապետութիւն մը կ'ուսուցանէ և շփոթութեան և մթութեան կ'առաջնորդէ»:

7. «Միւս կողմէն, Թաթակաթան կ'ուսուցանէ թէ միտք գոյութիւն ունի: Ան որ հողի ըսելով միտք կը հասկնայ և կ'ըսէ թէ միտք գոյութիւն ունի, այնպիսին ճշմարտութիւնը կ'ուսուցանէ և յստակութեան և լուսաւորութեան կ'առաջնորդէ»:

8. Պաշտօնեան պատասխանեց. «Սյդ կը նշանակէ թէ Թաթակաթան երկու բաներու գոյութիւնը կ'ընդունի. այսինքն այն որ մեր զգայարաններովը կ'ըմբռնենք և այն որ իմացական, մտային է»:

9. «Պուտայ ըսաւ. «Ճշմարիտ կ'ըսեմ քեզի, քո միտքը իմացական մտային է, բայց ինչոր կ'ընդունինք մեր զգայարաններովը, անոնք ալ մտային են: Այլսորհի մէջ չկայ բան մը որ միտք չըլլայ և կամ միտքի չի կրնայ վերածուիլ: Ամէն բանի ամէն գոյակի մէջ հոգեկանութիւն մը կայ և մեր կոխտած կաւն իսկ կրնայ ճշմարտութեան զաւակներու վերածուիլ»:

ԻԳ. ՄԷԿ ԷՈՒԹԻԻՆ, ՄԷԿ ՕՐԷՆՔԻ, ՄԷԿ ՆՊԱՏԱԿ

1. Պուտայ ըսաւ Քալիփային, անոր միտքին անորոշութիւնը և տարակոյսը փարստելու համար:

2. «Բոլոր բաները մէկ էութենէ շինուած են, բայց

իրերը զանազան են և տարբեր ըստ այն ձևերուն զորս կը ստանան տարբեր տպագրութիւններու տակ: Ինչպէս որ են, այնպէս կը գործեն, և ինչպէս որ կը գործեն այդպէս ալ են:

3. «Իբր թէ, ով Քալիտայ, բրուտ մը նոյն կաւէն տարբեր անօթներ չինած ըլլար: Այս անօթներէն ոմանք չաքար, ուրիշներ բրինձ, ուրիշներ կաթ պիտի պարունակեն, ոմանք ալ անմաքրութեան անօթներ պիտի ըլլան: Գործածուած կաւին մէջ տարբերութիւն չկայ, կաղանկաբերու, ձեւերու զանազանութիւնը կաղապարող, ձեւակերպող ձեռքին վերադրելի է:

4. «Եւ ինչպէս որ ամէն բան մէկ էութենէ մը ծագում կ'առնէ, այնպէս ալ ամէն բան մէկ օրէնքի համաձայն կը զարգանայ և ունի մէկ նպատակ որ է Նիրվանան:

5. «Նիրվանայի կը հասնիս, եթէ կատարելապէս հասկնաս և եթէ ազրիս քու հասկցողութեանդ համաձայն, թէ բոլոր բաները մէկ գոյութիւն ունին և թէ միակ օրէնք մը կայ: Հետեւաբար միակ մէկ Նիրվանայ կայ ինչպէս որ մէկ ճշմարտութիւն մը կայ և ոչ թէ երկու կամ երեք:

6. «Թաթակաթա ամէնուն համար նոյնն է, բայց և այնպէս, ամէն անհատի պահանջները զխոնարով, ան ինքզինքը ամէնուն հաւասարապէս չի յայտներ: Ան մէկէն ամենազիտութեան լեցունութիւնը չի հաղորդեր, այլ ուշադրութիւն կ'ընէ ամէն էակի բնութեան»:

ԻՆ. ՊՈՒՏՏԱՅ ԿԸ ՊԱՏԱՍԽԱՍԽԱՆԷ ՀՐԵՇՏԱԿԻՆ

1. Երբ Պուտտայ ճէթալանայի մէջ Անաթափինտիքայի պարտէզին մէջ կը բնակէր, երկնային ոգի մը (deva) եկաւ իրեն Պրահմանի մը կերպարանքին տակ, որուն դէմքը լուսապայծառ էր և որուն հանդերձները ձիւնի պէս սպիտակ: Երկնային ոգին հարցումներ ըրաւ և պուտտայ պատասխանեց:

2. Հրեշտակը ըսաւ. «Ո՞րն է ամենէն հասաւ սուրբ: Ո՞րն է ամենէն մահացու թոյնը: Ո՞րն է ամենէն սաստիկ հուրը: Ո՞րն է ամենէն մութ գիշերը»:

3. Պուտտայ պատասխանեց. «բարկութիւնով խօսուած խօսք մը ամենէն հասաւ սուրն է, ընչասիրութիւնը ամենէն մահացու թոյնն է. կիրքը ամենէն սաստիկ հուրն է. ազիտութիւնը ամենէն մութ գիշերն է»:

4. Հրեշտակը ըսաւ. «Ո՞վ է ամենէն շատ շահողը. ո՞վ է ամենէն շատ կորսնցնողը. ո՞րն է ամենէն անխոցելի զրահը. ո՞րն է լուսագոյն զէնքը»:

5. Պուտտայ պատասխանեց. «Ան է ամենէն աւելի շահողը որ ուրիշներուն կուտայ. և ան է, ամենէն աւելի սուժողը, որ ուրիշներէն կ'ըստանայ առանց վտիտրէնը հատուցանելու: Համբերութիւնը անխոցելի զրահ մըն է: Իմաստութիւնը լուսագոյն զէնքն է:

6. Հրեշտակը ըսաւ. «Ո՞վ է ամենէն վտանգաւոր գողը: Ո՞րն է ամենէն թանկագին գանձը: Ո՞վ ամենէն աւելի յաջող է ոչ թէ միայն երկրի վրայ, այլ նաև երկինքի մէջ, բունի հանելու, հեռացնելու: Ո՞րն է ամենէն սպանով թաղուած գանձը»:

7. Պուտտայ պատասխանեց, «Չար խորհուրդը ամենէն վտանգաւոր գողն է. սուտքինութիւնը ամենէն

թանկագին զանձն է, հողին կրնայ ամենէն աւելի բանի առնել թէ այս և թէ հանդերձեալ աշխարհին մէջ և անմահութիւնը հողին ամենէն սպահով զանձն է:»

8. Հրեշտակը հարցուց. «Ի՞նչ բան հմայիչ է: Ի՞նչ բան գարշելի: Ո՞րն է ամենէն նողկալի ցաւը: Ո՞րն է է ամենէն մեծ հաճոյքը, վայելքը:»

9. Պուտտայ պատասխանեց. «Բարին հմայիչ է, չարը գարշելի է: Չար խիղճ մը ամենէն տանջող ցաւն է: Փրկութիւնը երանութեան կատարն է:»

10. Հրեշտակը հարցուց. «Ի՞նչ բան աւերակ կ'ընէ աշխարհի մէջ: Ի՞նչ բան կը խզէ բարեկամութիւնը: Ո՞րն է ամենէն սաստիկ ջերմը: Ո՞վ է ամենալաւ բժիշկը:»

11. Պուտտայ պատասխանեց. «Տգիտութիւնը կ'աւերէ աշխարհը: Նախանձ և անձնասիրութիւն կը խզեն բարեկամութիւնը, ատելութիւնը ամենէն սաստիկ ջերմն է, և Պուտտան է ամենալաւ բժիշկը:»

12. Հրեշտակը պատասխանեց և ըստւ. «Այժմ միայն մէկ տարակոյս ունիմ փարատելու, կ'աղաչեմ փարատէ զայն. «Ի՞նչ բան է այն զոր ոչ կրակը կրնայ այրել, ոչ խոնաւութիւնը կրնայ մաշել, ոչ հովը կրնայ կործանել և որ կարող է ամբողջ աշխարհը բարեկարգել:»

13. Պուտտայ պատասխանեց. «Օրհնութիւն: Ոչ կրակը, ոչ խոնաւութիւնը, ոչ հովը չեն կրնար վնասել բարի գործի մը յառաջ բերած օրհնութեանը, և ան պիտի բարեկարգէ ամբողջ աշխարհը:»

14. Հրեշտակը, Պուտտայի խօսքերը լսելով չափազանց ուրախացաւ և ծափահարելով, խոնարհեցաւ Պուտտայի առջիւ և շուտով աներեւութացաւ Պուտտայի առջևէն:

ԻԶ. ԴԲԱԽՏԸ ԿԱՄ ԵՐԿԻՆԵՐԸ (ԱՄԻԹԱՊՂԱ)

1. Տարակոյսով լի միտքով և դողդոջուն սիրտով մը համակուած աշակերտ մը. Պուտտայի քով եկաւ և հարցուց անոր. «Ով Պուտտայ, մեր Տէրը և վարդապետը, ինչո՞ւ համար աշխարհի հաճոյքներէն կը հրաժարինք, եթէ դուն մեզի կ'արգիլես հրաշքներ գործել և զերբնականին հասնիլ: Չէ որ յայտնութեան անհուն լոյսը, անթիւ հրաշքներու ակնադրիւրն է:»

2. Եւ Պուտտայ տեսնելով ճշմարտութիւնը վնասող միտքի մը անձկութիւնը, ըստւ. «Ով Շրալաքա, դուն սկսնակ մըն ես սկսնակներու մէջ և աշխարհասիրութեան, անցաւորութեան երեսին վրայ կը լողաս: Ո՞րքան ժամանակ պէտք է տակաւին որ ճշմարտութիւնը ըմբռնես: Դուն Թաթակաթայի խօսքերը չես ըմբռնած: Իպլնայի(*) օրէնքը անհակառակելի է, և պաղատանքները, խնդրուածքները օգուտ չունին, որովհետեւ անոնք պարապ բաւեր են:»

3. Աշակերտը ըստւ. «Ուրեմն կ'ըսեն թէ զարմանայի և հրաշայի բաներ չկան»:»

4. Եւ Պուտտայ պատասխանեց. «Հրաշայի բան մը չէ՞, զարմանայի և խորհրդաւոր, որ մեղաւոր մը սուրբ մը կ'ըլլայ. թէ ան որ ճշմարիտ լուծաւորութեան հասած է, պիտի գտնէ ճշմարտութեան ճամբան և թողու անձնասիրութեան չար ճամբաները:»

5. «Այն աշակերտը որ կը հրաժարի աշխարհի վա-

(*) **Գաչաւ** կը նշանակէ գործ, գործի օրհնը, փոխարինուրիւն կախապէս գործուած գործերու արդիւնքը և սննդիցե յառաջ եկող արդիւնքը, անպասցիրը:

զանցիկ հաճոյքներէն սրբութեան յաւիտենական երա-
նութեանը համար, այնպիսին կը գործէ միակ հրաշքը
որ երբէք կարելի է հրաշք կոչել:

6. «Սուրբ մարդ մը Բարձրալի անէծքները օրհնու-
թիւններու կը փոխէ: Հրաշք գործելու անհշը կամ ըն-
չաքաղցութենէ և կամ նանրասիրութենէ կը ծագի:

7. «Այն կրօնաւորը միայն ուղիղը կը գործէ որ չի
մտածեր. — «Մարդեր պէտք է ողջունեն զիս», որ թէ-
պէտ անարգուած աշխարհէն, աշխարհին հանդէպ չարա-
կամութիւն չի սնուցաներ իր մէջ:

8. «Այն կրօնաւորը ուղիղ կը գործէ որուն համար
գուշակութիւններ, ասուպներ, երազներ և նշաններ
ջնջուած են այլեւ. ան աղտոտ է այն բոլորին յաւաջ
բերած չարիքներէն:

9. «Ամիթապճան կամ անասճման լոյսը, Պուստա-
յութեան հոգեկան գոյութեան աղբիւրն է: Վհուկներու
և հրաշալիստեաներու գործերը խաբէութիւններ են.
բայց ինչ բան աւելի զարմանալի, աւելի խորհրդաւոր և
աւելի հրաշալի է քան Ամիթապճան:»

10. «Բայց» շարունակեց Շրափարան, «Երջանիկ
բնագաւառին խոստումը զբարանութիւն և զի.ք մըն
է լիկ»:

11. «Ինչ է այդ խոստումը» հարցուց Պուստայ և
աշակերտը պատասխանեց:

12. «Արեւմտեան կողմը զբախտանման երկիր մը
կայ որ Մաքուր Երկիր կը կոչուի. այս երկիրը շքեղա-
պէս զարդարուած է ոսկիով, արծաթով և մեծարժէք
գոհարներով: Հոն վճիտ ջուրեր կան ոսկիէ աւազաննե-
րով, շրջապատուած հաճելի ձեմելիքներով և ծածկուած
մեծ լուստաններով: Հոն գուարթ երաժշտութիւնը կը
լսուի, և ծագիկներ կ'անձրեւեն օրը երեք անգամ: Հոն

երգիչ թուզուններ կան որոնց ներդաշնակ մեղեդի-
ները կրօնքի փառքը կ'երգեն. և այդ երգարանութիւն-
ներուն ունկնդրողներուն միաքին մէջ Պուստայի, օրէն-
քի և եղբայրութեան յիշատակները կ'արթնան: Հոն ոչ
ոչ մէկ չար ծնունդ կարելի չէ և նոյն իսկ դժողքի ա-
նունը անմանօթ է հոն: Ան որ ջերմեւանդ օրէն և բա-
րեպաշտօրէն «Ամիթապճա», Պուստայ» բառերը կը կրկնէ,
այս մաքուր երկիրը պիտի փոխադրուի, և երբ մահը մօ-
տենայ, Պուստայ, սուրբ բնակիչներու խումբով մը պիտի
կենայ անոր առջև և կատարեալ անդորրութիւն պիտի
տիրէ:»

13. «Արդարեւ» ըսաւ Պուստայ, «այդպիսի երջա-
նիկ զբախտ մը գոյութիւն ունի: Բայց այդ երկիրը հօ-
գեկան է և միայն հոգեւորներուն մատակցի: Կ'ըսես թէ
այդ երկիրը արեւմտեան կողմն է: Այդ կը նշանակէ թէ
ան կը գտնուի հոն՝ ուր աշխարհը լուսաւորողը կը կե-
նայ: Արեւը մայր կը մտնէ և մեզ խոր խաւարի մէջ կը
թողու. գիշերուան ըստուերները կը տիրեն մեր վրայ, և
Մարան-չալը, մեր մարմինները գերեզմանին մէջ կը թա-
ղէ: Արեւմուտը, սակայն, բնաջնջում չէ, և ուր որ բը-
նաջնջում կայ կ'երեւակայենք, հոն անասճման լոյս և
անսպառելի կեանք կայ:»

14. «Բու նկարագրութիւնդ» շարունակեց Պուս-
տայ «չառ գեղեցիկ է. բայց անբաւական է և քիչ ար-
դարութիւն կ'ընէ մաքուր երկրի փառքին: Աշխարհիկ-
ները աշխարհիկ կերպով միայն կրնան խօսիլ այդ երկրի
նկատմամբ. աշխարհիկները աշխարհիկ նմանութիւններ և
բառեր կը գործածեն: Բայց մաքուր երկիրը որուն մէջ
մաքուրները կը բնակին աւելի զգեղեցիկ է որքան դուն
կրնաս բացատրել կամ երեւակայիլ. . . : Ան միայն կրնայ
հասնիլ երջանիկ երկիրը որուն հոգին լեցուած է ճշմար-

տութեան անսահման լոյսով : Ան միայն կրնայ շնչել արեւմտեան դրախտի մթնոլորտին մէջ որ կառարեւապէս լուսաւորուած է :

15. «Ճշմարիտ կ'ըսեմ քեզի, Թաթակաթի մաքուր երկրին մէջ կ'ապրի նոյն խակ հոս մարմնին մէջ ապրած փամանակ . . . »

16. Աշակերտը ըսաւ . «Սորվեցուր ինձի ու աէր այն խոկունները՝ որոնց պէտք է ենթարկեմ միտքս մաքուր երկիրը մտնելու համար :»

17. Պուտտայ ըսաւ . «Հինգ խորհրդածութիւններ կան :

18. «Առաջին խորհրդածութիւնը սիրոյ խորհրդածութիւնն է . այսինքն , քու սիրտդ այնպէս յարմարցուած ըլլայ սիրոյ որ բոլոր էակներու յաջողութեան և և բարօրութեան փափաքող ըլլաս , նոյնիսկ քու թշնամիներուդ երջանկութեան :

19. «Երկրորդ խորհրդածութիւնը դուրի խորհրդածութիւնն է . այսինքն թշուտութեան մէջ զտնուող էակներուն մասին , պէտք է մտածես , և քու երեակաշուքեանդ առջև կենդանի կերպով մը պատկերացնես անոնց վիշտերը և անձկութիւնները և այդ կերպով քու հոգիիդ մէջ անոնց հանդէպ խորունկ կարեկցութիւն մը արթնցնես :

20. «Երրորդ խորհրդածութիւնը ուրախութեան խորհրդածութիւնն է , այսինքն , պէտք է մտածես ուրիշներու յաջողութեան վրայ և անոնց խնդութեան խընդակից ըլլաս :

21. «Չորրորդ խորհրդածութիւնը պղծութեան մասին եղած խորհրդածութիւնն է , այսինքն , պէտք է խուսապղծութեան , վատթարութեան վատ հետեւանքներու վրայ , մեղքի և ախտերու արդիւնքներուն վրայ : Պէտք է խորհիս թէ որքան ջնջին են յաճախ վայրկե-

նական հաճոյքները և որքան մահացու անոր հետեւանքները :

22. «Հինգերորդ խորհրդածութիւնը անդորրութեան խորհրդածութիւնն է որուն միջոցով վեր կը բարձրանաս սէրէ և ասերութենէ , բռնապետութենէ և ճնշումէ , հարքստութենէ և կարօտութենէ , և քու վիճակդ կը նկատես անաչառ անդորրութիւնով և կատարեալ խաղաղութիւնով :

23. «Թաթակաթայի ճշմարիտ հետեւող մը իր վրտահոտութիւնը չի դնէր խառակեցութիւններու կամ ծէսերու վրայ , այլ իր անձէն հրաժարելով իր ամբողջ սիրտը Ամբիպպիայի կուսայ որ ճշմարտութեան անսահման լոյսն է » :

ԻՒ. ՈՒՍՈՒՅԻՉԸ ԱՆԾԱՆԹԹ

1. Եւ Պուտտայ ըսաւ Անանասայի . —

2. «Եստ մը տեսակ հաւաքումներ կան , ազնուականներու ժողովներ , Պրահմաններու ժողովներ , ընտանեկան ժողովներ , աշակերտներու ժողովներ և ուրիշ անհասանքու ժողովներ : Երբ ժողովի մը մէջ մտնելի , միշտ նստելէ առաջ , իմ ունկնդիրներուս գոյնը կ'առնէի և անոնց ձայնին կը նմանցնէի իմ ձայնս . յետոյ կրօնական խօսակցութիւնով կը կրթէի , կ'ողեւորէի և կ'ուրախացնէի զանոնք :

3. «Իմ վարդապետութիւնս ովկէանին կը նմանի , և ովկէանին ուրիշ զարմանալի յատկութիւնները ունի :

4. «Թէ ովկէանը և թէ իմ վարդապետութիւնս տակաւ առ տակաւ կը խորունկանան : Երկուքն ալ իրենց

նոյնութիւնը կը պահեն ամէն փոփոխութեան սակ: Երկուքն ալ մեռած մարմինները ցամաք կը նետեն: Ինչպէս մեծ գետեր ովկէանը թափելով իրենց անունները կը կորսնցնեն և կը միանան ովկէանոսին հետ, այնպէս ալ շատ մը աղանդներ իրենց ծագումը կ'ուենան և իմ Եկեղեցիի կը միանան, եղբայրներ կ'ըլլան և Աաքիամունիի որդիները կը սեպուին: Ովկէանը բոլոր գետերու և անձրեւներու նպատակակէան է. բայց ան երբէք չի յորդեր ոչ ալ կը պարպուի, այսպէս ալ ճշմարտութիւնը կ'ընդգրկուի միլիոններու կողմէ, բայց ոչ կ'աւելնայ ոչ կը պակսի, Ինչպէս որ մեծ ովկէանը մէկ հիմ միայն ունի, աղի համը, այնպէս ալ իմ վարդապետութիւնս միայն մէկ հիմ ունի, փրկութեան ազատագրումի համար: Թէ ովկէանը թէ իմ վարդապետութիւնս, կրօնքս, քարոզած ճշմարտութիւնս, լեցուն են մարգարիտներով և գոհարներով, և երկուքն ալ բնակավայր կը հայթայթեն հսկայ էակներու համար:

5. «Ասոնք են այն ութը յատկութիւնները որոնք իմ վարդապետութիւնս ովկէանին կը նմանցնեն:

6. «Իմ վարդապետութիւնս մաքուր է և խտիր չի դներ ազնուականի և անազնուականի, հարուստի և աղքատի միջև:

7. «Իմ վարդապետութիւնս ջուրի կը նմանի, ամէնը կը մաքրէ առանց խտրութեան:

8. «Իմ վարդապետութիւնս կրակի կը նմանի որ կ'ըսպառէ ինչ որ կայ երկինքի և երկրի միջև, մեծ և փոքր:

9. «Իմ վարդապետութիւնս երկինքի կը նմանի, որովհետեւ անոր մէջ սեղ կայ, առատ բնակարան ամենուն համար, մարդերու և կիներու համար, աղաներու և աղջիկներու համար, զօրեղներու և տկարներու համար:

10. «Բայց երբ խօսէի անոնք զիս չէին ճանչնար և կ'ըսէին, ո՞ր կրնայ ըլլալ այս որ այսպէս կը խօսի, մարդ մը թէ Աստուած մը: Յետոյ զանոնք կրթելէ, ոգևորելէ, և երջանկացնելէ ետք կրօնական խօսակցութիւնով, կ'աւներեւութեանայի: Բայց անոնք զիս չէին ճանչնար նոյնիսկ աներեւութացած պահուսն»:



ԱՌԱԿՆԵՐ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ



Ի Ը. Ա. Ռ. Ա. Կ Ն Ե Ր

1. Եւ Պուտոսայ մտածեց «ես ուսուցանեմ ճշմարտութիւնը որ գերազանց է իր սկզբնաւորութեան, միջինին և վախճանին մէջ, ան փառաւոր է թէ իր հոգեկան խմաստին մէջ և թէ տառական խմաստին մէջ: Բայց որքան որ ալ պարզ ըլլայ այդ ճշմարտութիւնը, ժողովուրդը չի կրնար հասկնալ զայն: Ես պէտք է անոնց խօսիմ բուն խի անոնց լեզուովը. եւ պէտք է որ իմ խորհուրդներս անոնց խորհուրդին յարմարցնեմ: Հասարակ ժողովուրդը սոցոց կը նմանի, սոցոց նման կը սիրէ պատմութիւններ լսել: Հետեւաբար անոնց պատմութիւններ պիտի պատմեմ ճշմարտութեան փառքը անոնց պատմելու բամար: Եթէ անոնք չեն կրնար ըմբռնել ճշմարտութիւնը այն վերացական պատճառաբանութիւններուն մէջ որոնցմով ես ինքս հասեր եմ այդ ճշմարտութեան, ժողովուրդը կրնայ հասկնալ գէթ եթէ առականերով բացատրուի ճշմարտութիւնը»:

Ի Թ. Կ Ո Ր Ս Ո Ւ Ա Ծ Ո Ր Գ Ի Ն

1. Տանուտէր մարդ մը որդի մը ունէր որ հեռու երկիր գնաց և մինչդեռ իր հայրը հարստութիւն կը դիզէր որդին խղճալիօրէն աղքատացաւ: Եւ որդին կերակուր

և հազուամ փնտուած պահուն պատահմամբ իր հօր բնակած երկիրը եկաւ: Հայրը որդին թշուառ վիճակը տեսնելով, որովհետեւ որդին ցնցոտիներ հազած էր և աղքատութիւնով վայրենացած, իր ծառաներէն մէկուն հրամայեց զայն իրեն կանչել:

2. Երբ որդին տեսաւ այն պարտը՝ ուր հիւրասիրուեցաւ, այսպէս մտածեց ինքնիրեն. «Ես անպատճառ զօրաւոր մարդու մը կաակածը արթնցուցած եմ և ան զիս պիտի բանտարկէ»: Երկիւղով լեցուն ըլլալով իր հայրը տեսնելէ առաջ փախաւ:

3. Հայրը պատգամաւորներ զրկեց իր որդին ետեւէն և պատգամաւորները զայն ձերբակալելով հօրը բերին, հակառակ իր աղաղակներուն և ողբակոծումներուն: Եւ հայրը հրամայեց իր սպասաւորներուն փախկութեամբ վարուիլ իր որդին հետ և բարձր աստիճան անձնաւորութեան մը հրամայեց ծառայել իր որդին: Եւ որդին դո՛հ էր իր վիճակէն:

4. Հայրը իր պալատին պատուհանէն կը դիտէր իր որդին և երբ տեսաւ որ իր որդին համեստ և աշխատասէր է, բարձրացուց զայն եւս աւելի:

5. Ծառ տարիներ վերջ կանչեց իր որդին և իր ծառաները և զազանիքը յայտնեց անոնց: Այն ատեն խեղճ որդին չափազանց ուրախացաւ և երջանիկ էր իր հայրը տեսնելուն համար:

6. Մարդերու միտքերը տակաւ առ տակաւ պէտք է վարժեցնել ճշմարտութեան:

Լ. ԱՆՄԻՏ ԶՈՐԱՐ

1. Աշակերտ մը կար որ չէր կրնար իր զգացումներն ու կիրքերը կառավարել . ուստի որոշելով միաբանութիւնը թողուլ, Պուլտոսայի եկաւ որպէս զի իր ուխտերէն ազատութիւն խնդրէ : Եւ Պուլտոսայ ըսաւ աշակերտին :

2. «Ձգուչացիր իմ դաւակա, թէ ոչ մտորած սիրտիդ կիրքերուն զո՞ն կ'երթաս : Որովհետեւ ես կը տեսնեմ որ քու նախնի կեանքիդ մէջ, շատ տառապած ես ցանկութեան վատ արդիւնքներէն, և եթէ չի սորվիս յաղթել զգայամուկ կիրքերուդ, քու յիմարութեանդ պատճառով պիտի աւրուիս այս կեանքի մէջ :

3. «Լսէ պատմութիւն մը որ քու մէկ դարիչ կեանքդ կը պատկերացնէ, իբր ձուկ մը :

4. Ձուկ մը կար որ գետին մէջ ցանկատեցորէն կը խաղար իր սիրուհիին հետ : Իր սիրուհին առաջ անցնելով, իր առջեւ ուռկանի մը հիւսքերը նշմարեց և վտանգէն կրցաւ փախչիլ . բայց ձուկը, սիրով կուրացած, կախողին հետապնդեց իր սիրուհին և ուռկանին մէջ ինկաւ : Ձկնորսը ուռկանը վեր քաշեց և ձուկը որ դաւնորէն կը արանջէր իր վիճակին վրայ՝ ըսելով թէ՛ այս պատիժը իմ յիմարութեանս պատուին է . անչուշտ պիտի մեռնէր եթէ Պօտիսաթիւսն չի պատահէր հոն որ ձուկին լեզուն հասկնալով զթաց անոր վրայ : Պօտիսաթիւսն գնեց ձուկը և ըսաւ անոր՝ քարի ձուկս, եթէ այսօր տեսած չըլլայի քեզ, կեանքդ կորսնցուցած պիտի ոլլայի : Քեզ պիտի փրկեմ, բայց սակէ ետք ալ մի մե-

զանչեր : Այս խօսքերով ձուկը կրկին գետին մէջ նետեց :

5. «Քու ներկայ կեանքիդ մէջ քեզի նորհուած ժամանակը լաւ գործածէ և վախցիր ցանկութեան տէգէն, որ, եթէչի հսկես զգացումներուդ, աւերումի կը մասնէ քեզ» :

ԼԱ. ՉՈՐՍ ՏԵՍԱԿ ԱՐԺԱՆԻՔՆԵՐ

1. Հարուստ մարդ մը կար որ սովոր էր իր դրացի բոլոր Պրահմանները կանչել և անոնց ընծաներ բաշխել և աստուածներուն ճոխ զոհեր մատուցանել :

2. Եւ Պուլտոսայ ըսաւ . «Եթէ մարդ մը ամէն ամիս հազար զո՞ն մատուցանէ և անդողար նուէրներ բաշխէ, այսպիսի մարդ մը հաւասար չէ այն մարդուն՝ որ միայն մէկ վայրկեան իր միտքը ճշմարտութեան կրնայ յածել» :

3. Տիեզերապարզ Պուլտոսան՝ շարունակեց . «Չորս տեսակ ընծաներ կան . — նախ, երբ ընծան մեծ է և արժանիքը փոքր, երկրորդ, երբ ընծան փոքր և արժանիքն ալ փոքր . երրորդ, երբ արժանիքը մեծ է իսկ ընծան փոքր . չորրորդ երբ ընծան մեծ է և արժանիքն ալ մեծ :

4. «Առաջին պարագան է այն խաբուած մարդուն որ կը մեռցնէ աստուածներուն զոհելու նպատակով, հոս ընծան մեծ է, բայց արժանիքը փոքր :

5. «Ընծան փոքր է և արժանիքը փոքր է այն պարագային երբ մարդ ընչաքաղցութեան և չարարտութեան պատճառով իրեն կը վերապահէ մէկ մասն այն ընծային զոր մտադրած էր նուիրել, զոհել :

6. «Արժանիքը մեծ և ընծան փոքր է, սակայն,

այն պարագային երբ մարդ կ'ընծայէ սիրով և խնայողութեան ու բարութեան մէջ անկողնու նպաստակով :

7. «Վերջապէս թէ արժանիքը և թէ ընծան մեծ է այն պարագային երբ հարուստ մարդ մը, անանձնուէր կերպով մը և Պուտտայի հոգիով և խնայողութիւնով նուէրներ կուտայ և հաստատութիւններ կը հիմնէ մարդկութեան լուսադոյններուն համար լուսաւորելու իր ընկեր արարածներու միտքերը և ծառայելու համար անոնց պէտքերուն» :

ԼԲ. ՇՈՒՍՅՆ ԿԵՆՅԱԴԼ

1. Երբ Պուտտայ Շրափասթիի մօտերը կը քարոզէր իր վարդապետութիւնը աշխարհի դարձին համար, հարուստ և շատ մը հիւանդութիւններով չարատանջ մարդ մը, իր ձեռքերը ծափելով Պուտտայի եկաւ և ըսաւ . «Ով տիեզերահուսակ Պուտտայ, ներէ ինձի, որ չեմ բարեւեր քեզ ինչպէս պարտիմ, բայց մեծապէս կը տառապիմ մեծափորութենէ, չարազանց քնամոլութենէ և և ուրիշ արատնջներէ, այնպէս որ չեմ կրնար շարժիլ առանց ցաւ զգայու» :

2. Պուտտայ տեսնելով այն շոտութիւնը որով չըջապատուած էր մարդը, հարցուց անոր . «Կ'ուզես հիւանդութիւններուդ պատճառը հասկնայ» : Երբ հարուստ մարդը կամք յայտնեց սորվելու իր նեղութիւններու պատճառը, Պուտտայ ըսաւ . «Նինգ բաներ կան որոնք քեզ այդ վիճակին մասնած են, — ճոխ կերակուր, քնասիրութիւն, հաճոյասիրութիւն, անխորհրդութիւն և անզբաղ վիճակ : Կերակուրներու պահուն

ինքզինքդ կառաւարէ և դախր զբաղում մը որով կարող ըլլաս կարողութիւններդ հրահանգել և ընկեր արարածներուդ օգտակար ըլլալ : Այս յորդորներուն հետեւելով կեանքդ պիտի երկարես» :

3. Հարուստ մարդը միտքը պահեց Պուտտայի ըսածները և բաւական ժամանակ ետք վերստանալով իր ասողութիւնը և երխտասարգութիւնը, հետիտան, առանց ձիերու և սպասաւորներու Պուտտային գալով ըսաւ անոր . «Վարդապետ, իմ մարմնական հիւանդութիւններս բուժեցիր, այժմ եկած եմ հոգիս լուսաւորութիւնը տանալու համար» :

4. Եւ Օրհնեայ Պուտտան ըսաւ . «Աշխարհիկ մարդը իր մարմինը կը սնուցանէ, բայց խնայողութեամբ չէր հոգին : Ան որ իր ախորժակներուն զոհացումին մէջ կը մխրճի ինքզինքը կ'աւերէ, բայց ան որ ճամբուն մէջ կը քալէ, թէ իր հոգին պիտի վերկուի և թէ երկար կեանք պիտի ունենայ» :

ԼԳ. ՊՈՒՏՏԱՅ ԻՐ ՍԵՐՄՆԱՅԱՆ

1. Պհարատվածա, հարուստ Պրահման մը, իր հունձքի հարհակալութեան օրը կը ածուէր երբ Պուտտայ եկաւ և կերակուր մուրաց անկէ :

2. Քանի մը մարդիկ յարգանք մատուցին Պուտտայի, բայց Պրահմանը բարկացաւ և ըսաւ . «ով ճգնաւոր, աւելի լաւ կ'ընես եթէ գործես քան թէ մուրաս : Ես կը հերկեմ և կը սերմանեմ, և հերկած և սերմանած ըլլալով, կուտեմ : Եթէ դուն ալ գործած ըլլայիր, կրնայիր ուտել այժմ» :

3. Եւ Պուտտայ անոր պատասխանելով ըսաւ . «Ով Պրահման, ես ալ կը հերկեմ ե կը ցանեմ, ե կը հերկած ե ցանած ըլլալով կուտեմ» :

4. Ուրեմն երկրագործ մըն ես դուն», ըսաւ Պրահման : «Ո՛ւր են քու եղներդ, ո՛ւր են քու սերմդ, ե արօրդ» :

5. Պուտտայ ըսաւ անոր . «Հաւասարն է սերմը զոր ես կը ցանեմ, բարի գործերը անձրեւներն են որ կ'արգասաւորեն զայն, խնատութիւն ե համեստութիւն արօրն է . իմ միտքս ալ աւաջնորդող անձն է . իմ խիմանս է Չերմուանդութիւն, Չանքն է իմ եղս : Այս հերկումը կը կատարուի խարկանքի սէզները արմատակի ընելու համար : Հունձքը զոր ան կուտայ Նիրվանայի անմահ կեանքն է ե այսպէս ամէն ցաւ կը վերջանայ» :

6. Սն պտեն Պրահմանը բրինձի կաթ լեցնելով ոսկիէ բաժակի մը մէջ զայն Պուտտայի մատոյց ըսելով . «Թող մարդկութեան ուսուցիչը բրինձի կաթին մասնակցի, որովհետեւ յարգելի կաթմաման այնպիսի հերկող մըն է որ անմահութեան պատուը կը հասցնէ :»

3. Երբ Պուտտայ իր աշակերտներու խումբով երեւցաւ, հիւրասէրները, արոնց միջոցները սահմանափակ էին, ընպունեցին զանոնք կրցածնուն չափ լաւ կերպով մը ե ըսին . «Կերէ՞ք Տէր իմ ե թող ուտեն ձեր աշակերտները, ինչ որ կ'ուզէք» :

4. Մինչ սուրբ մարդերը կուտէին կերակուրը ե ըմպելիները չէին պակսեր ե հիւրասէրը խորհեցաւ ինքնիրեն . «Աս ինչ զարմանալի բան է : Իմ բոլոր բարեկամներուս ե ազգականներուս համար աւատ ուտելիք պիտի ունենամ : Երանի թէ անոնց բոլորն ալ հրաւիրած ըլլայի» :

5. Մինչ հիւրնկալը այսպէս կը մտածէր, իր բոլոր բարեկամները ե ազգականները ներս մտան ե թէպէտ սանր մէջ գտնուած հիւրասէնեակը փոքր էր, ամենուն համար տեղ գտնուեցաւ : Սեղան նստան ե կերան, ե պէտք եղածէն աւելի ուտելիք կար անոնց բոլորին համար :

6. Պուտտայ ուրախ էր որ կը տեսնէր այսքան թիւով հիւրեր բոլորն ալ ուրախ ե խնդալից ե Պուտտայ ողբերոց ե զուարճացուց զանոնք ճշմարտութեան խօսքերով, արդարութեան կրանութիւնը քարոզելով :

7. «Մեծագոյն կը ջանկութիւնը զոր մահացումը կրնայ երեւակայել ամուսնութիւնն է զոր երկու սիրող սիրտեր իրարու կը միացնէ : Բայց աւելի մեծ կը ջանկութիւն մըն ալ կայ : Ճշմարտութեան ընդգրկումն է ան : Մահը ախտի բաժնէ այր ե կին, բայց մահը ոչ մէկ ազդեցութիւն չունի անոր վրայ որ ճշմարտութեան հետ ամուսնացած է :»

ԼԳ. ՃՍՄՊՈՒՆԱՏԱՅԻ ՀՍՐՍԱՆԵԿԱՆ ԽՆՃՈՅՔԸ

1. Ճտմպունատայի մէջ մարդ մը կար որ հետեւեալ օրը պիտի ամուսնանար, ե խորհեցաւ . «Արդեօք Պուտտայ, Օրհնեալ Վարդապետը կրնայ հարմիքին ներկայ գտնուիլ» :

2. Եւ Պուտտայ այդ մարդուն սանը քովէն անցաւ ե անոր հանդիպեցաւ, ե երբ փեսային սիրտին լուս փափաքը հասկցաւ, անոր տունը մտնել հաւանեցաւ :

Վ Ե Ր Ջ Ի Ն Օ Ր Ե Ր Ը



ԼԵ. ՊՈՒՏՏԱՅ ԻՐ ՄՈՂԵ ԿԸ ՅՈՅՏԱՐԱՐԻ:

1. Պուտտայ Անանտայի ըսաւ. «Տարիներ առաջ, ով Անանտայ, Մարա, Չարը, մօտեցաւ ինձի և ուզեց երեք անգամ փորձել զիս:»

2. «Երբ ես առաջին անգամ Պուտտայ ըլլալու համար պաղատը կը թողէի, Մարա կեցաւ դուռին առջև և կեցուց զիս. ըսելով, «Մի մեկնիր ով Տէրս, եօթը օր վերջ հօրդ թագաւորութիւնը քեզի պիտի փոխանցուի և չորս ցամաքներուն երկու հազար կղզիներու վրայ իշխան պիտի կարգուիս: Ուրեմն կեցի՛ր, իմ Տէրս:»

3. Ես պատասխանեցի. «Դիտեմ թէ թագաւորութեան անիւր իմ կողմս պիտի դառնայ, բայց ես իշխանութեան չէ որ կը փախաքիմ: Ես կ'ուզեմ Պուտտայ մը ըլլալ և ամբողջ աշխարհը ցնծութեան մասնել:»

4. «Դարձեալ, Անանտայ-Չարը ինձի մօտեցաւ և զիս փորձել ուզեց երբ, խիտ ինքնամահացումէ (self-mortification) ետք, մարմինս լուացած ըլլալով՝ Նախընտանա զեար կը թողէի, Մարա ըսաւ. «Դուն նիհարցած ես ծոմապահութիւններէ և մահը մօտ է քեզի: Ի՞նչ օգուտ կ'կլլէ ճիգէն. հաճէ ապրիլ և կարող պիտի ըլլաս բարի գործեր կատարել:»

5. «Յեառ իս պատասխանեցի. ո՞վ դուն անհոգներու բարեկամը, դու չար, ի՞նչ նպատակով եկած ես:

6. «Թող մարմինը հիւժի, երբ միտքը աւելի հանդարտ և ուշադրութիւնը աւելի հաստատ կ'ըլլայ:

7. «Ի՞նչ է կեանքը այս աշխարհի մէջ: Ճակատաւ մարտին մէջ մեռնիլը յաւագոյն է ինձ համար քան ապրիլը յաղթահար:

8. «Եւ մարա զիս թողուց ըսելով. ամբողջ եօթը տարի Օրհնեալ Պուտտան հետապնդեցի քայլ առ քայլ բայց ոչ մէկ սխալ չի գտայ լուսաւորեալ Պուտտային վրայ:»

9. «Երբորդ անգամ մը, ով Անանտայ, փորձիչը մօտեցաւ ինձի երբ հովիւին Նիախրոսաւ ծառին տակ կը հանգչէի Նախընտանա զեախն եղերքը ճիշդ մեծ լուսաւորութենէն ետք: Այդ պահուն, Մարա, Չարը հոն դարով և իմ քովս կենայով ըսաւ ինձի. «Այժմ մեռիր Տէր, թող այժմ Օրհնեալ Պուտտան մեռնի: Հիմա ժամանակն է Օրհնեալ Պուտտային մեռնելու:»

10. «Երբ Մարա վերջացուց խօսքը, պատասխանեցի. «Պիտի չի մեռնիմ, ով չար, մինչեւ որ ոչ թէ ուրեախն բոլոր եղբայրները և քոյրերը այլ նաև աշխարհական եղբայրները և քոյրերն ալ լաւ ունկնդրողներ, իմաստուն և լաւ կրթուած, պատրաստ և ուսեալ, Ս. գիրքերու հմուտ, իրենց մեծ և փոքր պարտականութիւնները կատարող, կեանքի մէջ ուղիղ և իմ յորդորներու համեմատ ապրողներ չըլլան. մինչեւ որ ամենք այսպէս ուսած ըլլալով վարդապետութիւնը կարող ըլլան դայն ուրիշներուն ծանօթացել, քարոզել, հաղորդել, հաստատել, պարզել, լուսարանել մանրամասնաբար և պարզաբանել. մինչեւ որ ամենք, մինչ ուրիշներ սխալ վարդապետութիւններ կը տարածեն, կարող ըլլան այդ սխալ վարդապետութիւնները հերքել, և այսպէս հրաշագործ ճշմարտութիւնը տարածել ամէն կողմ: Պիտի չի մեռնիմ մինչեւ որ ճշմարտութեան մաքուր կրօնքը յաջողի, տարածուի, ուսեանայ, ժողովրդականացայ ամբողջովին:

մինչև որ, վերջապէս, բոլոր մտրդերու մէջ յայտարարուի» :

11. Այսպէս առաջները Մարա ինծի մօտեցաւ երեք անգամ զիս փորձելու համար : Եւ այժմ, Անանտայ, Մարա, Չարը դարձեալ եկաւ այսօր այն տեղ ուր կը կենայի և քովս կենալով ըսաւ ինծի. «Մեռիք Տէր» : Եւ երբ այսպէս խօսեցաւ, իրեն ըսի. երջանիկ եղիր . Թաթակաթայի մահը շատ շանցած տեղի պիտի ունենայ» :

12. Եւ Անանտայ Պուտտային ըսաւ . «Հաճէ Տէր, մեր քով, մեզի հետ մնալ, մեծ բազմութիւններու օգտին և երջանկութեան համար, զթայ աշխարհին, կեցի՛ր մարդկութեան բարիքին և օգտին համար» :

13. Պուտտայ ըսաւ . «Այ կը բաւէ . Անանտայ, դադրէ Թաթակաթային ազաչելէ» :

14. Եւ դարձեալ Անանտայ նոյն խօսքերով ազաչեց Պուտտայի : Եւ Օրհնեալ Տէրէն նոյն պատասխանը ստացաւ :

15. Եւ երբորդ անգամ Անանտա ինչպէս Օրհնեալ Պուտտայէն որպէսզի երկայն սպրի . և Պուտտայ պատասխանեց . «Հաւատք ունի՛ս, Անանտայ» :

16. Անանտա ըսաւ . «Այո՛, Տէր» :

17. Եւ Պուտտայ տեսնելով Անանտայի աչքերուն դողդաղացող կոպերը, և իր սիրելի աշակերտին սիրտին խոր վիշտը գուշակելով, դարձեալ հարցուց . «Իրաւ հաւատք ունի՛ս, Անանտայ» :

18. Եւ Անանտայ ըսաւ . «Այո՛ . Տէր ունի՛մ» :

19. Այն ատեն Օրհնեալ Տէրը շարունակեց . «Եթէ Պուտտայի իմաստութեան վրայ հաւատք ունիս, ինչո՞ւ համար զայն կը նեղես երբորդ անգամ : Ըսած չե՛մ քեզ նախապէս թէ, հարկաւորապէս պէտք է բաժնուինք մեզի մօտ և սիրելի իրերէ և անձերէ : Ինչպէս, ուրեմն,

Անանտա, կարելի է մնալ ինծի համար, քանի որ ամէն բան որ կը ծնի և գոյութիւն կ'առնէ, և կազմակերպուած է, իր մէջ կը պարունակէ ներգոյ հարկաւորութիւնը տարրալուծուելու : Ինչպէս կարելի ըլլայ ուրեմն որ այս իմ մարմին չի տարբազարուի, չի տարրալուծուի ու քայքայուի : Այսպիսի բան մը չի կրնար ըլլալ : Եւ այն մահկանացու կեանքը, ով Անանտայ, լըքած, մերժած եմ, հրաժարած եմ անկէ» :

20. Եւ Օրհնեալ Պուտտան ըսաւ Անանտայի . «Գնա այժմ, ով Անանտայ, և Վայլալի մօտերը գտնուող բոլոր եղբայրները հաւաքէ Ծառայութեան Սրահին մէջ» :

21. Յետոյ Պուտտայ Ծառայութեան սրահը յառաջացաւ և հոն իրեն համար պատրաստուած խտրին վրայ նստաւ և եղբայրներու խօսեցաւ այսպէս . —

22. «Ով եղբայրներ, դուք որ ճշմարտութեան գիտակից էք, դուք որ կատարելապէս տիրացած էք անոր, պէտք է գործածէք զայն, խոկաք անոր վրայ, և տարածէք զայն ամէն կողմ, որպէս զի մաքուր կրօնքը երկար տեւէ և մշտնջենաւորի, որպէս զի մաքուր կրօնքը շարունակէ բազմութիւններու բարիքին և երջանկութեանը համար, բոլոր ապրող էակներու շահուն, բարիքին և սիրոյն համար :

23. «Աստղածմայութիւն և աստղաբաշխութիւն, բաղդազուշակութիւն և կանխաձանօթութիւն, ասոնք բոլորը կ'արգիլեմ ձեզ :

24. «Ան որ իր սիրտը անասնձ կը թողու, այնպիսին նիրվանային չի կրնար հասնիլ . հետեւաբար պէտք է սիրտը զուպիլ և հրաժարիլ աշխարհային գրգռումներէ և պէտք է միտքը անդորր պահել :

25. «Կերէ՛ք անօթութիւննիդ անցնելու համար .

խմեցէ՛ք ծարաւնիդ յագեցնելու համար: Կեանքի պէտքերը գոհացուցէ՛ք նման թիթեռնիկին որ ծաղիկը կը ծծէ առանց ծաղիկին բուրումին և հիւսուածքին վնասելու:

26. «Չորս ճշմարտութիւնները չի հասկնալուս և չըմբռնելուս համար է, ով եղբայրներ, որ այսքան երկար ժամանակ մտորած ենք, և թախառած այս հոգեփոխութեան յոգնեցուցիչ ճամբուն վրայ, թէ դուք և թէ ես, մինչև որ ճշմարտութիւնը գտանք:

27. «Գործադրեցէ՛ք այն բոլոր լուրջ մտածումները զորս ձեզի ուսուցեր եմ: Շարունակեցէ՛ք մեղքի դէմ մեծ պայքարը: Հաստատուն կերպով քարկեցէ՛ք սրբութեան ճամբաներուն մէջ: Թող ձեր հոգեկան զգացումին զգայարանները ժիր, աշխոյժ ըլլան: Երբ կօթը տեսակ իմաստութիւնները լուսաւորեն ձեր միտքերը, այն ատեն պիտի գտնէք Նիրվանայի առաջնորդող ուժը ազնիւ ճամբաները:

28. «Ահա՛, ով եղբայրներ, թաթակաթա քիչ ժամանակէն պիտի մեռնի. Սրդ կը խրախուսեմ ձեզ և կ'ըսեմ՝ բոլոր բաղադրեալ բաները պիտի ձերանան և քայքայուին կրկին: Փնտուցէ՛ք այն ինչ որ տեսական է և ջանքով փրկութիւննիդ գործեցէ՛ք»: «Ջանքով փրկութիւննիդ գործեցէ՛ք». այս եղաւ ահա Պուտտայի վերջին խօսքը. և Պուտտայ խոր խոկումի մէջ իյնալով կորսնցուց իր գիտակցութիւնը և մեռաւ խաղաղ կերպով մը: Երբ Պուտտայ Նիրվանայի վիճակին մէջ մտաւ մեծ երկրաշարժ պատահեցաւ և երկինք դուռաց:

29. Պուտտայի աշակերտները հաւաքուեցան և խոնակ, ծաղկեպսակ և երաժշտական գործիքներ առնելով գացին այն տեղը ուր կը կենար Պուտտայի մարմինը:

30. Երբ թաղումի փայտակոյտը վառիլ սկսաւ, ա-

րևը և լուսինը խաւարեցան, գետերը յորդեցան, երկիրը շարժեցաւ և հսկայ անտառները շարժեցան աղազուն տերեւներու նման և երկինքէն առատ ծաղիկներ տեղացին և գետինը մինչև ծունկերը ծաղիկով ծածկուեցաւ:

31. Հոն Պուտտայի մարմինը այրեցին ինչպէս պիտի այրէին թագաւորներու թագաւորի մը մարմինը:

32. Եւ աշակերտներէն մէկը ըսաւ. «Օրհնեալ Տէրոջ աշխարհիկ նշխարները քայքայուեցան, բայց իր ուսուցած ճշմարտութիւնը կ'ապրի մեր միտքին մէջ»:

33. «Ուրեմն երթանք աշխարհի ամէն կողմը և մեր Տէրոջ խօսքերը աւետարանենք բոլոր կենդանի էակներու. անոնց ուսուցանենք չորս ազնիւ ճշմարտութիւնները և ուժը ճամբաները, այնպէս որ ամբողջ մարդկութիւնը վերջնական փրկութիւնը ստանայ»:

34. Ու երբ Պուտտայի մարմինը այրեցին, ամէն կողմէ պատգամաւորներ եկան և անոնք որ Պուտտայի վորդապետութիւնները ընդունած էին, աճիւններէն իրենց բաժինը պահանջեցին: Եւ Պուտտայի աճիւնները ուժը մասի բաժնուեցան որոնց իւրաքանչիւրին վրայ յուշարձաններ կանգնուեցան:

ԼԶ. ԳՈՅՈՒԹԵԱՆ ԵՊՍՏԱԿԸ

1. Երբ տիեզերքներու կազմութեան չըջանին, արևին, լուսինին և աշխարհին առաջին շօշափելի ձեւերը երևեցան, ճշմարտութիւնը կը շարժէր տիեզերական փոշին վրայ և կը լեցնէր ամբողջ աշխարհը յացուցիչ լոյսով: Բայց այս ժամանակ տակաւին աչք չկար լոյսը տեսնելու համար, ակամջ չկար լսելու համար ճշմարտու-

թիւնը, ոչ ալ միտք՝ ըմբռնելու համար անոր նշանա-
կութիւնը և գոյութեան անչափելի միջոցներուն մէջ
չգտնուեցաւ տեղ մը՝ ուր ճշմարտութիւնը կրնար բնա-
կիլ իր ամբողջական փառքովը:

2. Բարեշրջութեան յարմար ընթացքին զգացա-
կանութիւնը երեւցաւ և ըմբռնողութիւնը յառաջ եկաւ:
Հոգեկան կեանքի նոր աշխարհ մը կար, տենջերով,
հզօր կիրքերով և անյաղթելի ուժով առլի: Եւ աշխար-
հը երկուքի ձեղքուեցաւ. — Հաճոյքներ և ցաւեր,
անձ և ոչ-անձ, թշնամիներ և բարեկամներ, սէր և
ատելութիւն երեւան եկան: Ըշմարտութիւնը կը թլր-
թուար զգայական աշխարհի մէջ, բայց այդ աշխարհին
բոլոր անհուն կարելիութիւններուն մէջ չգտնուեցաւ
տեղ մը՝ ուր ճշմարտութիւնը կրնար բնակիլ իր ամբող-
ջական փառքովը:

3. Եւ գոյութեան պայքարին մէջ բանականութիւնը
ծնաւ. Բանականութիւնը սկսաւ կառավարել և առաջ-
նորդել անձի, ևսի բնագոյը և բանականութիւնը ձեռք
առաւ արարչագործութեան մականը և յաղթահարեց գա-
զաններու, կենդանիներու զօրութիւնը և տարրերու
ոյժը: Բայց բանականութիւնը կարծես նոր կիզանիւթ
աւելցուց ատելութեան բոցին, պայքարող կիրքերու
սղմուկը աւելցնելով. և եղբայր եղբայրը սկսաւ սպան-
նել վայրկենական հաճոյքի մը համար: Եւ ճշմարտու-
թիւնը վերագարձաւ բանականութեան կալուածը, բայց
բոլոր բանականութեան դեմքներուն և կայաններուն
մէջ չկար վայր մը՝ ուր ճշմարտութիւնը կրնար բնակիլ
իր ամբողջ փառքովը:

4. Բանականութիւնը իբր անձի օգնական ընկերը,
տակաւ առ տակաւ բոլոր կենդանի էակները ցանկու-
թեան, ատելութեան և նախանձի թակարթներուն մէջ

բռնեց. և ցանկութենէ, ատելութենէ և նախանձէ ծնան
մեղքի չարիքները: Մարդեր կ'ընկճուէին կեանքի բե-
ռին տակ, մինչեւ որ փրկիչը երեւցաւ, Մեծ Պուտտան,
սուրբ Ուսուցիչը մարդերու և աստուածներու:

5. Եւ Պուտտայ սորվեցուց մարդերու զգացողու-
թեան ուղիղ գործածութիւնը և բանականութեան ուղիղ
կիրարկութիւնը. ան սորվեցուց մարդերու տեսնել իրերը
այնպէս ինչպէս որ են, առանց խարկանքի. և անոնք
սորվեցան գործել ճշմարտութեան համաձայն: Ան սոր-
վեցուց արդարութիւն և այս կերպով բանական էակ-
ները մարդատէր էակներու, արդար, բարեսիրտ և հա-
ւատարիմ մարդերու փոխեց: Եւ այժմ վերջապէս
գտնուեցաւ տեղ մը՝ ուր ճշմարտութիւնը կրնար բնա-
կիլ իր ամբողջ փառքովը և այստեղն էր մարդկութեան
հողին:

6. Պուտտայ, ով Օրհնեալ Տէր, ով Սուրբը, ով
կատարեալը, դուն յայանեցիր ճշմարտութիւնը, և ճշ-
մարտութիւնը երեւցած է աշխարհի վրայ և ճշմարտու-
թեան թագաւորութիւնը հաստատուած:

7. Ըշմարտութեան համար տեղ չկայ միջոցին մէջ,
հոգ չէ թէ անհուն բլայ այդ միջոցը:

8. Ըշմարտութեան համար տեղ չկայ զգացողու-
թեան մէջ, ոչ ալ անոր հաճոյքներուն կամ ցաւերուն
մէջ զգացողութիւնը ճշմարտութեան նախաքայն է,
բայց ճշմարտութեան համար տեղ չկայ անոր մէջ. հոգ
չէ թէ ան շողայ դեղեցկութեան և կեանքի փառքովը:

9. Ըշմարտութեան համար տեղ չկայ նաև բանա-
կանութեան մէջ: Բանականութիւնը երկայրի սուր մըն
է և կրնայ թէ սիրոյ և թէ ատելութեան պատճառ դառ-
նալ: Բանականութիւնը հիմն է որուն վրայ կը կենայ
ճշմարտութիւնը: Ոչ մէկ ճշմարտութիւն կարելի չէ ձեռք

ձգել առանց Բանականութեան: Այսու հանդերձ լոկ բանականութեան մէջ տեղ չկայ ճշմարտութեան համար, ճող չէ թէ բանականութիւնը աշխարհի իրերուն ախրող դործիքն ըլլայ:

10. Ճշմարտութեան գահն արդարութիւնն է, և սէրը, իրաւունքը և բարի կամեցողութիւնը այդ գահին զարդերն են:

11. Արդարութիւնը ճշմարտութեան բնակավայրն է: և հոս, մարդկութեան հողիին մէջ առատ տեղ կայ ճշմարտութեան աւելի ճոխ յայտնութեանը համար:

12. Այս է Պուտտայի Աւետարանը: Այս է լուսաւորեալ Պուտտայի յայտնութիւնը: Այս է Սուրբ Պուտտային հրիտակը:

13. Անոնք կ'ընդունին ճշմարտութիւնը և կը հաւատան ճշմարտութեան, անոնք Պուտտայի կ'ապաստանանին, կ'ապաստանին նաև ճշմարտութեան, կրօնքին և Պուտտայի եկեղեցիին:

14. Մեզ սակէ ետք իբր քու աշակերտներդ ընդունէ ով Պուտտայ, որքան ատեն որ կեանք ունենանք:

15. Մխիթարէ զանոնք, ով Սուրբ Ուսուցիչ, կարեկից և ամէնը սիրող, մխիթարէ վշտահարները և վշտաբեկները, լուսաւորէ մոլորածները, և տուր որ ամենաօրէ օր աճինք սրբութեան և զիտութեան մէջ:

16. Ճշմարտութիւնն է նպատակը և վախճանը գոյութեան և աշխարհները գոյութիւն կ'առնեն որպէսզի ճշմարտութիւնը դայ և անոնց մէջ բնակի:

17. Անոնք որ կը թերանան ճշմարտութիւնը տենջարու մէջ, անոնք անտեսած են կեանքի նպատակը:

18. Երանի անոր որ ճշմարտութեան մէջ կը կենայ:

որովհետև բոլոր բաները կ'անցնին, բայց ճշմարտութիւնը կը մնայ միշտ:

19. Աշխարհ չինուած է ճշմարտութեան համար, բայց խորհուրդի սխալ կցորդութիւններ իրերու իրական ուղիղ վիճակը սխալ կը ներկայացնեն և այսպէս ծնունդ կուտան սխալներու:

20. Սխալները կրնան կերպաւորիլ զանոնք գործածողներուն կամքին համեմատ. ասոր համար հաճելի կ'երեւան, բայց սխալները անհաստատ են և քայքայումի սերմերը կը պարունակեն:

21. Ճշմարտութիւնը, սակայն ուղածիդ պէս չես կրնար կերպարանաւորել: Ճշմարտութիւնը մէկ և նոյն է միշտ. ան անփոփոխելի է:

22. Ճշմարտութիւնը մահուան գորութենէն վեր է. ճշմարտութիւնը ամէն տեղ ներկայ է. յաւիտենական է և վեհափառ:

23. Խաբկանքներ, սխալներ, և սուտեր Մարախ, Չարին, Դուստրներն են և մեծ զօրութիւն տրուած է անոնց հրապուրել մարդերու միտքը և մոլորցնել զանոնք մեղքի ճամբաներուն մէջ:

24. Խաբկանքներու, սխալներու և սուտերու բնոյթը մահ է. և մեղքը կործանումի ճամբան է:

25. Խաբկանքները, սխալները և սուտերը մեծ և հոյակապ նաւերու նման են, որոնց լաստափայտերը փտած և որդնտած են և անոնք որ կը նաւեն այդ նաւերով ճակատագրուած են նաւաբեկելու:

26 Շատեր կան որ կ'ըսեն «Եկուր սուա, իմ առաջնորդս եղիր» և երբ բռնուին անձնափրութեան ցանցերուն մէջ, ցանկութեան, և չարարադձութեան զարմին մէջ, թշուառութիւնը կը ծնի:

27. Բայց ամբողջ կեանքը ճշմարտութիւն կը տեն-


ջայ, և ճշմարտութիւնը միայն կրնայ բժշկել ախտերը և խաղաղեցնել մեր անհանդարտութիւնը:

28. Ըշմարտութիւնն է կեանքի էութիւնը. որովհետեւ ճշմարտութիւնը կը վերապրի մարմինն մահէն ետք: Ըշմարտութիւնը յաւիտենական է. և եթէ նոյնիակ երկինք և երկիր անցնին, ճշմարտութիւնը կը մնայ:

29. Աշխարհի մէջ շատ մը ճշմարտութիւններ չկան. որովհետեւ ճշմարտութիւնը մէկ և նոյնն է ամէն ժամանակ և ամէն տեղ: Ըշմարտութիւնը կ'ուսուցանէ մեզի ութը ազնիւ ճամբաները արդարութեան և այդ ճամբան դիւրին կը դառնուի ճշմարտասէրներու կողմէ: Երանի անոնց որ այդ ճամբուն մէջ կը քայլեն:



ԻՆՉ Է ՊՈՒՏՏԱՅԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ



Ա. ՀԱԿԻՐՃ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԸ ԳԼԽԱՒՈՐ ՎԱՐԳԱՊԵՏՈՒԹԻՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

1. Պուստայականութիւնը լուսաւորութիւնով չարիքէն փրկուելու կրօնքն է:

2. Լուսաւորութիւն կը նշանակէ ճշմարտութեան ճանաչումը և ճշմարտութեան ճանաչումը հետազօտութեան միջոցով պէտք է կատարուի:

Լուսաւորութիւնը կ'ուսուցանէ թէ պատճառի և արդիւնքի օրէնքը անհակառակելի և անհերքելի է ինչպէր Ֆիզիքական աշխարհին մէջ, նոյնպէս բարոյական աշխարհի մէջ, և թէ ամէն չար արարք իր չար արդիւնքը ունի. ամէն բարի արարք իր բարի արդիւնքը, ուրիշ չենք կրնար խուսափել ոչ ստանձականին մէջ ոչ ալ անդենականին մէջ:

Լուսաւորութիւնով կը սորվինք թէ գլխաւոր չարիքը, միակ բացարձակ չարիքը բարոյական չարութիւնն է և բարոյական չարութեան պատճառն է ետութիւնը: Ետութիւնը խափկանք մըն է, բայց լուսաւորութիւնը կը վտարէ այս խափկանքը:

Լուսաւորութիւնը նոյն ստեն մեզ կը հաղորդէ ամենապարփակ բարեարտութիւն մը հանդէպ բոլոր կենդանի էակներու և մեզ կուսայ նաև խոր կարեկցութիւն մը հանդէպ բոլոր տառապող արարածներու:

Այսպէս ճշմարտութիւնը լամբարի մը նման է: Ան

մեզի կը յայտնէ բարի օրէնքը և կը ցուցնէ Նիրվանայի առաջնորդող ութը ազնիւ ճամբաները :

3. Նիրվանան կամ ամբողջ ետութեան անձնատրութիւնը ճշմարտութեան, վրկութիւնն է չարէն և կարելի բարձրագոյն երանութիւնը :

4. Ան որ կատարեալ լուսաւորութեան հասած է, այնպէս որ ամբողջ մարդկութեան ուսուցիչը ըլլալու աստիճանին հասած է, այնպիսին Պուտտայականներու կողմէ Պուտտայ կը կոչուի որ լուսաւորուած կը նշանակէ :

5. Պուտտայականները կօթամա Սիտհարթան իբր Պուտտայ կը մեծարեն, որովհետեւ ան էր որ առաջին անգամ յտակօրէն յայտնեց և ցուցուց ճշմարտութիւնը որ հարիւրաւոր միլիոն տառապող մարդերու անձաւելի օրհնութեան մը աղբիւր դարձաւ :

II ԲԱՅՍՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Քանի մը ամենակարեւոր թիւրիմացութիւններ բաւարարու համար հետեւեալ բացատրութիւնները կ'աւելցընենք :

1. Պուտտայականութիւնը վարդապետութիւններ չունի Քրիստոնէական վարդապետութիւններու իմաստով : Պուտտայականութեան վարդապետութիւնները հիմնուած չեն յայտնութեան վրայ Քրիստոնէութեան քարոզած յայտնութեան նշանակութիւնովը կամ իմաստովը : Ամէն Պուտտայական ազատ է իր անձին համար հետազօտել այն բոլոր իրողութիւնները՝ որոնցմէ ծագած են Պուտտայականութեան վարդապետութիւնները : Պուտ-

տայ ուրիշ յայտնութիւն չունէր բայց միայն ամէն մարդու ճակատած փորձառութիւնը : Ան միայն խորագոյն ներհայեցողութիւն մը ունէր իրերու բնոյթի մասին, և կրնար, ո և է մարդէ լաւագոյն կերպով մը չարիքի հետքը, պատճառը գտնել և անոր դարման մը առաջարկել :

2. Պուտտայականութեան մէջ կրօնքի և գիտութեան միջև պայքար մը անկարելիութիւն մըն է : Պուտտայի պատուէրներուն համաձայն է ընդունիլ այն բոլոր ստաջադրութիւնները՝ զորս ապացուցուած են ճշմարիտ գիտական հետազօտութիւնով մը : Պուտտայ սորվեցուց այն ճշմարտութիւնները միայն որոնք հարկաւոր են իրկութեան համար : Նշանակութեան արժանի պարագայ մըն է թէ բոլոր կարեւոր գիտուն հոգեբանները որոնք կը գործեն արեւմուտքի մէջ և որոնք շատ քիչ բան լսած են Պուտտայի մասին, կը հաստատեն Պուտտայի հոգիի տուած վարդապետութիւնները :

3. Սովորաբար կ'ըսուի թէ Պուտտայ հոգիին գոյութիւնը կ'ուրանայ : Այս յայտարարութիւնը ուղիղ է կամ սխալ, հոգի բառին մեր տուած նշանակութեան համաձայն : Պուտտայականութիւնը կ'ուրանայ հոգիին ետութեան իրականութիւնը : Պուտտայականութիւնը կ'ուրանայ հոգեգոյացութեան մը գոյութիւնը, բնագանցական հոգեգոյութեան մը գոյութիւնը՝ հոգիին ետեւ : Բայց Պուտտայականութիւնը չուրանար զգացող, խորհող և կամեցող հոգիին գոյութիւնը որուն փորձառու ենք : Այս վերջին իմաստով առնելով, հոգիին գոյութիւնը ուրանալով ուրացած կ'ըլլանք իրականութիւն մը՝ որուն համար ամենէն վստահելի և ուղղակի ծանօթութիւնը ունինք :

4. Պուտտայականութիւնը չուսուցաներ թէ հոգին


պիտի անէանայ մահէն վերջ, այլ ան կը վարդապետէ թէ հողին կը շարունակէ իր գոյութիւնը ըստ այն գործերուն՝ զորս գործած է կեանքի մէջ, և այս կը կոչուի Քարմայի օրէնքը: Քարմայի օրէնքին և հողիին վերամարմնացումին մասին շատ մը տեսակ տեսութիւններ և հայեցողութիւններ կան Պուտտայականներուն մէջ: Այդ տեսութիւնները ընդհանրապէս խորհրդանշականօրէն նոյն ճշմարտութիւնը արտայայտելու տարբեր կերպեր են: Բայց եթէ անոնք հակասական են, այս խնդիրը, ինչպէս ամէն խնդիր, պէտք է լուծուի մեր տրամադրութեան տակ զստուած լաւագոյն մեթոտներով, անաչառօրէն և զիտականօրէն իրողութիւնները հետազօտելով:


5. Սովորաբար կ'ըսուի թէ Պուտտայականութիւնը կ'ուբանայ Աստուծոյ գոյութիւնը: Աս ալ ուղիղ կամ սխալ կրնայ ըլլալ ըստ այն սահմանին զոր կուտանք Աստուծոյ: Մինչդեռ Պուտտայականները չեն ընդունիր թէ Աստուած մեղի նման անհատ մըն է. անոնք միեւնոյն ատեն կ'ընդունին թէ Աստուծոյ մասին Քրիստոնէական գաղափարը կարենոր ճշմարտութիւն մը կը պարունակէ իր մէջ, բայց այս ճշմարտութիւնը աւելի կատարեալ յայտնուած է Պուտտայականութեան մէջ: Պուտտայականութիւնը կ'ուսուցանէ թէ, Պուտտայի էութիւնը, կամ Ամիթայնա, լոյսի ակնադրիւրը, այսինքն անոր լուսաւորութիւն կուտայ, և որուն ճանաչումը Նիրվանան է, ամենաներկայ և յաւիտենական է: Ան է որ գոյութեան իրականութիւն կուտայ, ան յաւիտենական նախատիպն է ճշմարտութեան, և ամէն բանէ վեր, ան կրօնքի բարի օրէնքն է, կրօնքին՝ որ վերջնական հեղինակութիւնն է բարոյական բարքի:


6. Պուտտայականութիւնը յուսեալութիւն չէ: Իրաւ է թէ Պուտտայականութիւնը քաջարար և ուղղակի կը

ճակատի չարիքի հարցին, և կը ճանչնայ չարի գոյութիւնը. բայց ան այնպէս կ'ընէ մարդկութեան փրկութեան ճամբան ցոյց տալու համար: Պուտտայականութիւնը անէութիւն չի քարոզեր, այլ փրկութիւն. ան չուսուցաներ մահ այլ կեանք. ան չի հրամայեր մահացում, այլ ապրելու ուղիղ եղանակը, անոր նպատակն է Նիրվանան, ետութեան լքումը և ճշմարտութեան կեանք մը, կեանք մը որ նոյնիսկ ստտենականին մէջ կարելի է և ստանալի:

7. Քրիստոնէութիւնը շատ մը տեսակէաներով Պուտտայականութեան կը նմանի: Քրիստոսի բարոյագլխութիւնը ճշմարտապէս բարձրացուցիչ է և Պուտտայականներուն կը յիշեցնէ Պուտտայի ազնիւ հրամանները և յորդորանքները: Այսուհանդերձ, Պուտտայականները չեն ընդունիր Քրիստոնէութեան վարդապետութիւնները, որովհետեւ այդ վարդապետութիւնները հակասական են գիտութեան և կրնան անձուկ և աններողամիտ ոգի մը սնուցանել:







«Ազգային գրադարան»



NL0173072

